

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2023 թվականի  
հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՀԱԿԱԿՈՒՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

**ԵՐԵՎԱՆ – 2023 թ.**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ I. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԸ	3
1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ, ԱՌԿԱ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ	4
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	11
3. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՆՁՆԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	15
ԲԱԺԻՆ II. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	22
ՆՊԱՏԱԿ 1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ	22
ՆՊԱՏԱԿ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱԿԱԶԴԴՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ	37
ՆՊԱՏԱԿ 3. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ	49
ՆՊԱՏԱԿ 4. ԳՈՐԾԱՐԱՐ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՔԻՋՆԵՍ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՅՈՒՐԱՑՈՒՄ	56
ՆՊԱՏԱԿ 5. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ	69
ԲԱԺԻՆ III. 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ, ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	77
ԲԱԺԻՆ IV. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2023-2026 ԹԹ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	82

## ԲԱԺԻՆ I. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Կոռուպցիայի նկատմամբ հասարակական անհանդուրժողականությունն ամրապնդելու, իրավունքի գերակայությամբ, մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքներով ապահովված երկիր ունենալու շարժառիթը պահանջում է կոռուպցիայի դեմ պայքարը որպես գերակա ուղղություն հռչակելու հաստատապես ձևակերպված կամք և վճռականություն:

Վերոգրյալ հրամայականների արդյունքում ՀՀ կառավարությունը 2019 թվականի հոկտեմբերի 3-ին հաստատեց ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը, որի հիմնական նպատակը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ կառավարության հռչակված հայեցակարգային կանխադրույթների ու սկզբունքների հետևողական կենսագործումն էր:

Հավատարիմ մնալով վերոնշյալ նպատակների իրականացմանը ՀՀ կառավարությունն իր գործունեության 2021-2026 թթ. ծրագրի շրջանակներում վճռական է բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ անզիջում պայքար մղելու կոռուպցիայի դեմ՝ վերջնականապես արմատախիլ անելու կոռուպցիոն բոլոր դրսևորումները<sup>1</sup>: Հետևապես, սույն ռազմավարության ընդհանուր նպատակն է հակակոռուպցիոն բարեփոխումների շարունակականության և ստանձնած միջազգային կոնվենցիոն պարտավորությունների և հանձնարարականների ապահովումը:

Հիմնական նպատակի իրագործման համար ռազմավարությունը սահմանում է 5 մասնավոր նպատակներ՝

- i) կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության համակարգերի ամրապնդումը,
- ii) կոռուպցիայի հակազդման իրավական և ինստիտուցիոնալ համակարգերի կատարելագործումը,
- iii) հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման կառուցակարգերի կատարելագործումը,
- iv) բարեվարքության ամրապնդումը գործարար ոլորտում և պետություն-գործարար ոլորտ հարաբերություններում,
- v) հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման համակարգի կատարելագործումը:

<sup>1</sup> ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, <https://www.gov.am/files/docs/4586.pdf>

# 1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ, ԱՌԿԱ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն նոր ռազմավարության առաջնայնություններն ու խնդիրները նախանշելու, Հայաստանի Հանրապետության արդեն իսկ ձևավորված և գործող հակակոռուպցիոն մարմինների ինստիտուցիոնալ համակարգի շարունակական կատարելագործման, ինչպես նաև հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրային քաղաքականության կենսագործման նպատակների իրականացման համար էականորեն կարևորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի արդյունքների գնահատումը:

2019-2022 թթ. հակակոռուպցիոն քաղաքականությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի շրջանակներում (այսուհետ նաև՝ 2019-2022 թթ. հակակոռուպցիոն ռազմավարություն) սահմանված հետևյալ ուղղությունների հիման վրա՝

- ✓ Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ձևավորում,
- ✓ Կոռուպցիայի կանխարգելում,
- ✓ Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում,
- ✓ Հակակոռուպցիոն կրթություն և հանրային իրազեկում,
- ✓ Մոնիթորինգ և գնահատում:

2019-2022 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության ընդունումից՝ 2019 թվականից ի վեր իրականացված հակակոռուպցիոն բարեփոխումների արդյունքում փաստացի գրանցված արդյունքների, մոնիթորինգի և գնահատման արդյունքների, վիճակագրական տվյալների, ոլորտային քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև ոլորտային միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության գնահատման արդյունքների մասին խոսելիս որպես համապետական և ռազմավարական ձեռքբերումներ անհրաժեշտ է առանձնացնել ստորև նշվածները.

➤ 2019 թվականի նոյեմբերին ձևավորվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ ԿԿՀ)՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մասնագիտացված ինքնավար մարմին՝ համապատասխան անկախության երաշխիքներով: 2019-2022 թվականներին ընդունված օրենսդրական փոփոխությունների արդյունքում էականորեն ընդլայնվել են ԿԿՀ-ի իրավասությունների շրջանակը և գործիքակազմը: Մասնավորապես, իրավասությունների ընդլայնման արդյունքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին են վերապահվել օրենքով նախատեսված դեպքերում բարեվարքության ուսումնասիրության իրականացման, կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության,

ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների ստուգման, կուսակցությունների ղեկավար մարմինների անդամների կողմից ներկայացվող հայտարարագրերի ստուգումը և վերլուծությունը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ուսումնասիրության շրջանակներում հայտարարագրի վերլուծության իրավասությունները, իսկ գործիքակազմի ընդլայնման արդյունքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին օրենսդրական հիմքով հասանելիություն է տրվել պետական տվյալների շտեմարաններին, ինչպես նաև ֆինանսական, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններին, արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկություններին, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններին, վարկային տեղեկատվությանը:

➤ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորումը և երեք և ավելի տարիների գործունեությունը վկայում է, որ քաղաքական կամքի տեսանկյունից ջանքերն արդարացվել են: Նշվածի վերաբերյալ արձագանքներ ձևավորվել են նաև միջազգային մակարդակում, ինչպես օրինակ, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների գնահատման վերաբերյալ զեկույցում:

➤ 2021 թվականի հոկտեմբերին ստեղծվել է Հակակոռուպցիոն կոմիտեն՝ որպես կոռուպցիոն հանցագործությունների վարույթներով մասնագիտացված և անկախության երաշխիքներ ունեցող քննչական մարմին, որը կազմակերպում և իրականացնում է կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթ, ինչպես նաև իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն: Հակակոռուպցիոն կոմիտեին տրամադրվել է առանձին տարածք, բյուջետային ինքնուրույն ֆինանսավորում, գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմ: Հակակոռուպցիոն կոմիտեի հիմնական կազմը համալրվել է, շարունակական հիմունքներով ընթացքի մեջ են թափուր հաստիքների համալրման և կոմիտեի գործունեության իրավական դաշտի կատարելագործման գործընթացները:

Հակակոռուպցիոն կոմիտեն իր գործունեությունն իրականացնում է անկախության սկզբունքի հիման վրա՝ պահպանելով իր քաղաքական չեզոքությունը, թափանցիկությունը և հանրության առջև հաշվետվողականությունը: Ձևավորումից ի վեր, կարճ ժամանակահատվածում, Կոմիտեն ծավալել է բավականին լայն և արդյունավետ գործունեություն՝ ձեռք բերելով հասարակության մեծամասնության վստահությունը: Կոմիտեի գործունեության մեկնարկից ի վեր իրականացվել են լայնածավալ լուսաբանման աշխատանքներ կառույցի ընթացիկ գործունեության և օրենքով վերապահված հիմնական գործառույթների իրազեկման վերաբերյալ, գործարկվել է Կոմիտեի՝ [www.anticorruption.am](http://www.anticorruption.am) եռալեզու պաշտոնական կայքէջը (հայերեն, ռուսերեն, անգլերեն), որում զետեղվում է ինչպես քրեական վարույթների ընթացքի վերաբերյալ հրապարակվող հաղորդագրությունների թարմացվող լրահոսը, այնպես էլ տեղեկություններ կառույցի գործունեության, օրենսդրության, միջազգային համագործակցության, անձնակազմի և մրցույթների անցկացման կարգի վերաբերյալ:

Հակակոռուպցիոն կոմիտեն համագործակցում է տարբեր պետական մարմինների և պետական կառավարման համակարգի մարմինների հետ՝ լիարժեք իրականացնելով իր առջև դրված խնդիրները: Իր գործունեության մոտ մեկ ու կես տարվա ընթացքում Կոմիտեն

մուտքագրվել է (25.05.2023 դրությամբ) 4467 դիմում-հաղորդում, նախապատրաստվել է 706 նյութ, իսկ կոռուպցիոն բնույթի հանցագործություններով քննվել է 1792 քրեական վարույթ, որից 1138-ի վերաբերյալ նախաքննության ընթացքը լուծվել է՝ այդ թվում 169 քրեական վարույթ 343 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

➤ Գլխավոր դատախազության կազմում 2021 թվականի նոյեմբերի 22-ին ստեղծվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը, որի կազմը անցել է բարեվարքության ուսումնասիրություն:

➤ 2022 թվականի հուլիսին ստեղծվել է Հակակոռուպցիոն դատարանը, այնուհետև՝ վերաքննիչ քրեական և քաղաքացիական դատարաններում նշանակվել են կոռուպցիոն հանցագործությունների և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով կայացված ակտերի՝ վերաքննության կարգով վերանայումն իրականացնող դատավորներ, Վճռաբեկ դատարանի կազմում ստեղծվել է Հակակոռուպցիոն պալատ: 2023 թվական հունիսի 15-ից ստեղծվել է Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը, որն իրականացնելու է նշյալ գործերով վերաքննության կարգով քննությունը: Նշված դատավորների բարեվարքությունը ևս օրենքով սահմանված կարգով ստուգվել է:

➤ Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման արդյունավետությունը բարձրացնելու և կոռուպցիայի հակազդումը կատարելագործելու նպատակով 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված նոր Քրեական օրենսգրքի շրջանակներում վերանայվել են կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերը: Միևնույն ժամանակ, նոր Քրեական օրենսգրքով ներդրվել է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը<sup>2</sup>:

➤ 2022 թվականին «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխությունների արդյունքում կատարելագործվել են շահերի բախման, անհամատեղելիության պահանջների վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումները, օրենսդրական մակարդակում կարգավորվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի և նվերների հաշվառման գործընթացի նկատմամբ վերահսկողության գործիքակազմի սահմանմանն ուղղված հիմնահարցերը: Թույլատրելի նվերի արժեք է սահմանվել վաթսուն հազար ՀՀ դրամը:

➤ Պետական գնումների բողոքարկման փուլում անկախության երաշխիքների ապահովման նպատակով Ֆինանսների նախարարության ենթակայությամբ գործող բողոք քննող անձանց ինստիտուտը վերացվել է, գնումների բողոքարկման գործերի քննությունը

---

<sup>2</sup> Եթե նախկինում իրավաբանական անձի օգտին որոշակի գործողություններ կատարելու դեպքում քրեական պատասխանատվության էր ենթարկվում միայն տվյալ անձը, ապա այս դեպքում պատասխանատվության է ենթարկվում ոչ միայն տվյալ անձը, այլ այդ իրավաբանական անձը: Այսպես օրինակ, ընկերության տնօրենի գիտությամբ իր աշխատակցի կողմից այդ իրավաբանական անձի հարկային պարտավորություններից խուսափելու դեպքում նոր կարգավորումների համաձայն պատասխանատվության են ենթարկվելու թե՛ աշխատակիցը, թե՛ տնօրենը և թե՛ իրավաբանական անձը:

վերապահվել է ընդհանուր իրավասության դատարանին և սահմանվել է հատուկ հայցային վարույթի շրջանակում գործերի քննության կառուցակարգեր:

➤ Մասնավոր հատվածում թափանցիկության բարձրացման նպատակով ընդունվել են իրավաբանական անձանց իրական շահառուների համատարած բացահայտմանն ուղղված, ինչպես նաև բաց և հանրամատչելի ռեեստրի կարգավորումները սահմանող օրենսդրական ակտերը: 2023 թվականի հունվարից իրական շահառուներին հայտարարագրելու պահանջը տարածվել է բոլոր իրավաբանական անձանց համար: Հայտարարագրման պահանջը չկատարելու, ոչ պատշաճ կատարելու համար սահմանված են քրեական և վարչական պատասխանատվության միջոցներ: Միևնույն ժամանակ, գործարկվել է իրավաբանական անձանց իրական շահառուների գրանցամատյանի էլեկտրոնային հարթակը:

➤ Կատարելագործվել է տնտեսական մրցակցության օրենսդրությունը, որի արդյունքում ի թիվս այլնի, բարելավվել են Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ նաև՝ ՄՊՀ) կողմից վարչական վարույթի իրականացման ընթացակարգերը և սահմանվել են առանձնահատկությունները, սահմանվել են վարույթի մասնակիցների իրավունքները և պարտականությունները, նախատեսվել են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցության և ՄՊՀ-ին օպերատիվ տվյալներ տրամադրելու մեխանիզմները՝ տնտեսական մրցակցության բնագավառում:

➤ Կատարելագործվել են ազդարարման համակարգի իրավական մեխանիզմները, ընդլայնվել են ազդարարման տեսակները, սահմանվել է ազդարարման նոր տեսակ՝ «ազդարարում հանրությանը»: Այսուհետ ազդարարման էլեկտրոնային հարթակի (azdararir.am) միջոցով հնարավոր է ազդարարել նաև շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման մասին: Իրականացված փոփոխություններով ազդարարման հետ կապված հարաբերությունները տարածվել են նաև մասնավոր ոլորտի, ինչպես նաև համայնքային կազմակերպությունների վրա: Հստակեցվել են նաև ազդարարներին տրվող պաշտպանության մեխանիզմները: Միաժամանակ, սահմանվել է նաև, որ Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ նաև՝ ՄԻՊ) հանդիսանում է իրավասու մարմին, որը կհավաքագրի պետական մարմինների կողմից ստացված վիճակագրությունը, և որը ենթակա կլինի հրապարակման: Բացի այդ, ՄԻՊ-ին են վերապահվել ազդարարների պաշտպանության իրականացմանը հետևելու, ազդարարների պաշտպանության վերաբերյալ տվյալների հավաքագրման և այլ լիազորություններ:

➤ ԿԿՀ-ի իրավական գործիքակազմի կատարելագործման նպատակով 2019-2022 թվականներին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում իրականացվել են հետևյալ բարեփոխումները.

- Սահմանվել է դատավորների, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի, Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, դատախազների (այդ թվում՝ գլխավոր դատախազի և նրա տեղակալների) թեկնածուների, Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների, առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող դատավորների և դատախազների, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի

օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող թեկնածուների բարեվարքության ուսումնասիրության պահանջ և ներդրվել են համապատասխան կառուցակարգերը, իսկ բարեվարքության ստուգման իրավասությունը վերապահվել է ԿԿՀ-ին:

- Զուգահեռաբար, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ստուգվել է Բարձրագույն դատական խորհրդի անդամների, Սահմանադրական դատարանի դատավորների, մյուս դատավորների գույքային դրությունը՝ համաձայն օրենքով սահմանված ժամկետների և կարգի:

- Վերանայվել է հայտարարագրման համակարգը: Ներդրվել է նոր ծախսերի հայտարարագրման ինստիտուտը: Այս ինստիտուտի շրջանակում հայտարարատուի համար պարտականություն է սահմանվել հայտարարագրելու հանգստի համար կատարված ճանապարհածախսը (ավիատոմս, գնացքի, ավտոբուսի, նավի տոմսեր), կեցության ծախսը, շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճարը, ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող վարձավճարը, գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսերը, վարկի մարմանն ուղղված վճարումները, անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսերը, բացի այդ, ցանկացած այլ ծախս, այդ թվում՝ որպես նվիրատվություն տրված գույք, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է երկու միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը: Նշված կարգավորումների արդյունքում ԿԿՀ-ն հնարավորություն ունի ստանալու ամբողջական տեղեկատվություն հայտարարատու պաշտոնատար անձի ֆինանսական դրության վերաբերյալ, ինչը կնպաստի հնարավոր խախտումների բացահայտմանը:

- Օրենսդրական փոփոխությունների արդյունքում 2022 թվականին ներկայացվող՝ 2021 թվականի տարեկան հայտարարագրերում առաջին անգամ տեղեկություններ են ներկայացվել հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող անշարժ գույքի (գույքերի) կամ հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի (գույքերի), կամ անշարժ գույքի (գույքերի), որից (որոնցից) փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն:

- Նվազեցվել է օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա թանկարժեք գույքի դրամական շեմը՝ 8 միլիոնի փոխարեն սահմանելով 4 միլիոն ՀՀ դրամ կամ դրան համարժեք արժույթ:

- Ներդրվել է գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու պահանջը:

- Ընդլայնվել է հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակը, որի արդյունքում հայտարարագրման պահանջ է սահմանվել կոռուպցիայի տեսանկյունից զգայուն պաշտոնատար անձանց համար:<sup>3</sup>

<sup>3</sup> «Հանրային ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մաս:



• 2024 թվականի հունվարի 1-ից պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրած հիմնադրամների, 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության և համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարները պարտավոր կլինեն ներկայացնելու իրավիճակային հայտարարագիր՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջի հիման վրա:

• 2023 թվականի փետրվարի 1-ից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը գործարկել է հայտարարագրերի ներկայացման նոր էլեկտրոնային համակարգը, որի արդյունքում 2022 թ. տարեկան հայտարարագրերի ներկայացման պարտականություն ունեցող հայտարարատուները (պաշտոնատար անձ և ընտանիքի անդամ) հայտարարագիր կներկայացնեն արդեն նոր կատարելագործված համակարգի միջոցով:

Անդրադառնալով 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության կատարողականին՝ հարկ է նշել, որ այն 80, 2%-ով իրականացվել է կատարողականի մակարդակում, որի արդյունքում<sup>4</sup> ապահովվել է՝

• Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման նպատակով ստեղծվել են մասնագիտացված հակակոռուպցիոն կառույցներ,

• Դատավորների, Սահմանադրական դատարանի դատավորների, Բարձրագույն դատական խորհրդի անդամների, դատախազների (այդ թվում՝ գլխավոր դատախազի և նրա տեղակալների), Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնները համալրել հավակնող թեկնածուների/թեկնածուների հավակնորդների, ինչպես նաև առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող դատավորների և դատախազների, Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող թեկնածուների բարեվարքության ուսումնասիրության իրականացումը:

• Ընդլայնվել է հայտարարագրման պարտականություն ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների շրջանակը, նախատեսվել է հայտարարատուների ծախսերի և նրանց կողմից փաստացի տիրապետվող գույքի հայտարարագրումը, իրավիճակային հայտարարագրի ինստիտուտը, հայտարարագրերը հանրությանը մատչելի դարձնելը,<sup>5</sup>

• ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի շրջանակներում նախատեսվել է կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործություններով ներգրավված իրավաբանական անձանց պատասխանատվության ապահովումը,

• Գնումների և տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտներում օրենսդրության բարելավումը,

<sup>4</sup> [https://moj.am/storage/files/pages/pg\\_7967694028641\\_AC\\_M-A\\_Report\\_final\\_2023-compressed\\_1\\_.pdf](https://moj.am/storage/files/pages/pg_7967694028641_AC_M-A_Report_final_2023-compressed_1_.pdf)

<sup>5</sup> Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի Արևելյան գործընկերության համաթվի 2020-2021 թթ. զեկույց: <https://eap-csf.eu/wp-content/uploads/EaP-Index-2020-2021.pdf> :

● Ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձման կառուցակարգերի ներդրումը:

Այնուամենայնիվ, չնայած առկա ձեռքբերումներին, մի շարք խնդիրներ շարունակում են մնալ մարտահրավերներ հակակոռուպցիոն բարեփոխումները ամբողջականացնելու տեսանկյունից: Այսպես.

✓ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում» միջոցառումն ամբողջությամբ կատարված է, սակայն, նկատի ունենալով ԿԿՀ գործառույթների մեծ ծավալը, հարկ է դիտարկել վերջինիս ռեսուրսների ընդլայնման հնարավորությունները՝ այս թվում էլեկտրոնային համակարգերի գործարկմամբ գործիքակազմի ընդլայնմամբ.

✓ Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ստեղծման և կայացման գործում անհրաժեշտ է հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների դատավորների շարունակական հիմունքներով պատրաստումների իրականացում.

✓ Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների, հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացման համար անհրաժեշտ է շարունակական հիմունքներով կարողությունների զարգացման ապահովում.

✓ Դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն աշխատանքի համար անհրաժեշտ է պարբերաբար հանդիպումների մեխանիզմների կատարելագործում և դոնորների աջակցության վերաբերյալ ամբողջ տեղեկատվության միասնականացում.

✓ Կոռուպցիոն ռիսկերի գնահատման հիման վրա ոլորտային միջոցառումների ծրագրի մշակման նպատակով անհրաժեշտ է կոռուպցիոն ռիսկերի գնահատման, և կառավարման մեթոդաբանության մշակում.

✓ «Պատգամավորի, քննիչի, վարքագծի կանոնների սահմանում, դատախազների և դատավորների վարքագծի կանոնների վերանայում» միջոցառումը ամբողջությամբ ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է միջազգային փորձի հիման վրա պատգամավորի վարքագծի կանոնների սահմանում, դատախազների և դատավորների վարքագծի կանոնների վերանայում, քննիչների և պատգամավորների համար վարքագծի կանոնների վերաբերյալ առնվազն 2 վերապատրաստման իրականացում.

✓ Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունման և խթանման նպատակով անհրաժեշտ է գործարար ոլորտի համար նախատեսված պետական աջակցության առնվազն 1 ծրագրով հակակոռուպցիոն համապատասխանության առկայության համապատասխան իրավական ակտերով սահմանում որպես առավելություն տվող չափանիշ.

✓ Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին հասարակության մասնակցության արդյունավետության բարձրացմանն ուղղված իրազեկման աշխատանքների շարունակականության ապահովում.

✓ Բազմաթիվ պետական շտեմարաններում առկա տվյալների՝ ներառյալ արխիվային նյութերի թվայնացման ապահովում, ինչը հաճախ խոչընդոտում է էլեկտրոնային հարցումների արդյունքների արագ ստացմանը կամ էլեկտրոնային եղանակով ստացմանը.

✓ Կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության ամրապնդման նպատակով «Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքի ընդունման ապահովում, կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության մեխանիզմների կատարելագործում.


✓ Անհրաժեշտ է հակակոռուպցիոն թեմաներով մատչելի ուսուցողական նյութերի մշակում և բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, դպրոցներում վերջիններիս ցուցադրության ապահովում.

✓ Հասարակության շրջանում կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացման, հարցումների արդյունքների հրապարակման նպատակով կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ շարունակական հարցումների իրականացման մեխանիզմների սահմանում.

✓ Հակակոռուպցիոն փորձաքննության արդյունավետության բարձրացումն ապահովելու նպատակով հակակոռուպցիոն ազդեցության գնահատման կամ հակակոռուպցիոն փորձաքննության լիազոր մարմնի և կիրարկման կառուցակարգերի սահմանման հարցերի քննարկում:

## **2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ**

Կոռուպցիայի ընկալման մասին խոսելիս նախ և առաջ պետք է վերլուծել հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի գրանցած արդյունքները «Թրանսփարենսի Ինթերնեշնլ»-ի կոռուպցիայի ընկալման համաթվի փոփոխության առումով: Կոռուպցիայի ընկալման համաթվի՝ 2019-2020 թվականների արդյունքներով Հայաստանի Հանրապետությունը զգալի աճ է գրանցել՝ 14 միավորով բարելավելով դիրքերը: Նկատի ունենալով 49 միավորը՝ Հայաստանը 2020 թվականին զբաղեցրել է 60-րդ հորիզոնականը (2019 թվականին՝ 77-րդ հորիզոնական, 2018 թվականին՝ 105-րդ): 2021 թվականի արդյունքներով 49 միավոր պահպանվել է: Սակայն Թրանսփարենսի Ինթերնեշնլի կոռուպցիայի ընկալման համաթվի 2022 թվականի արդյունքներով արձանագրվել է 49-ը միավորից նվազեցում 3 միավորով՝ դառնալով 46 միավոր:



Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ որպես հիմքային ցուցիչ նշված էր 2018 թվականի արդյունքը՝ 35 միավոր, ապա ստացվում է Կոռուպցիայի ընկալման համաթվի՝ 2022 թվականի համար ակնկալվող 42,8% բարելավման փոխարեն արձանագրվել է 31,4%, ինչն, այնուամենայնիվ, 2018 թվականի համեմատությամբ կարելի է որոշակի առաջընթացի արձանագրում համարել: Նշվածը վկայում է այն մասին, որ 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության իրականացումը և դրա արդյունքում արձանագրված բարեփոխումները, ըստ էության, իրենց դրական արձանագրումն են ստացել նաև հասարակական ընկալման մեջ:

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ»-ի Կոռուպցիայի ընկալման 2022 թվականի համաթվի նվազեցման պատճառների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2022 թվականին էական հետընթաց արձանագրվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ»-ի Կոռուպցիայի ընկալման 2022 թվականի համաթվի հիմքում դրված՝ Համաշխարհային տնտեսական ֆորումի ընկերությունների գործադիր տնօրենների հարցման (2021 թվականի համեմատությամբ 13 միավոր հետընթաց) և Ժողովրդավարության բազմազանության ծրագրի (VDEM, 2021 թվականի համեմատությամբ 4 միավոր) արդյունքներով: Վերոնշյալի համատեքստում հարկ է նշել, որ Համաշխարհային տնտեսական ֆորումի ընկերությունների գործադիր տնօրենների (executive opinion survey) կարծիքի ուսումնասիրությունն առնչվում է ներմուծման, արտահանման, կոմունալ ծառայությունների, հարկերի, պետական պայմանագրերի և լիցենզիաների տրամադրման, բարենպաստ դատական որոշումների ընդունման առնչությամբ հաճախ ընկերությունների կողմից չփաստաթղթավորված հավելյալ վճարումների կամ կաշառքների դեպքերին, ինչպես նաև սովորական կոռուպցիայի արդյունքում պետական միջոցների տրամադրումը ընկերություններին, անհատներին կամ որոշակի խմբերին: Միևնույն ժամանակ, VDEM - Ժողովրդավարության բազմազանության ծրագրի շրջանակում կոռուպցիայի առնչությամբ դիտարկում է քաղաքական կոռուպցիան՝ տարբերակելով ինչպես գործադիր, օրենսդրական և դատական իշխանություններում,

այնպես էլ քաղաքական դաշտի տարբեր ոլորտներում առկա խոշոր և մանր կոռուպցիան: Նշված բոլոր զեկույցներում հիմք են ընդունվում հասարակական, գործարար ոլորտի ընկալումները և ոլորտի փորձագետների դիրքորոշումները: Նշյալը վկայում է այն մասին, որ հետընթացի հիմնական պատճառ են հանդիսացել պետություն-գործարար հատված հարաբերություններում առկա կոռուպցիոն բնույթի խնդիրները, ինչպես նաև քաղաքական կոռուպցիան:

Միջազգային պարտավորությունների գնահատման զեկույցների անդրադարձը մոնիթորինգին և գնահատմանը.

➤ ՄԱԿ-ի գնահատման շրջանակներում<sup>6</sup> 2021 թվականին ամրագրվել է, որ անհրաժեշտ է ջանքեր գործադրել հակակոռուպցիոն իրավական գործիքների և վարչական միջոցների պարբերական մոնիթորինգի և գնահատման կառուցակարգերի ներդրման համար, որը կներառի հակակոռուպցիոն ռազմավարությունը և գործողությունների ծրագրի սահմանումը, համապատասխան մեթոդաբանության և մոնիթորինգի և գնահատման համակարգի ստեղծումը՝ ռազմավարական նպատակների իրականացումը և առաջընթացի գնահատումը հնարավոր դարձնելու նպատակով (Կոնվենցիայի հոդված 5, կետ 3): Այս համատեքստում կարևորվում է նաև հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման ինստիտուցիոնալ մարմնի բավարար ռեսուրսները և ինստիտուցիոնալ կարողությունները:

➤ ՏՀՀԿ 5-րդ պիլոտային փուլի 2021 թ. գնահատման արդյունքներով ամրագրվել է հետևյալը.

● Մոնիթորինգ և գնահատում իրականացնող մարմինը պետք է ունենա բավարար ռեսուրսներ և ինստիտուցիոնալ կարողություններ այդ գործառույթների արդյունավետ իրականացման համար:

● Մոնիթորինգի շրջանակներում էլեկտրոնային գործիքներ չեն կիրառվում:

● Պետական մարմիններում նշանակված հակակոռուպցիոն ռազմավարության հարցերով պատասխանատուները բավարար չափով չեն տիրապետում իրենց իրավասություններին, գերատեսչական մակարդակում հակակոռուպցիոն ռազմավարության և այլ ծրագրերի իրականացման աշխատանքների պատշաճ համակարգում չի իրականացվում:

Իրավիճակի վերլուծության առումով առավել համապարփակ պատկերացում կազմելու նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել նաև քաղաքացիների ընկալումը կոռուպցիայի վերաբերյալ, որի բացահայտման ուղղությամբ իրականացվել են մի շարք ուսումնասիրություններ:

Այսպես, Միջազգային հանրապետական ինստիտուտի ծրագրի շրջանակներում 2023 թվականի հունվարից մարտ ընկած ժամանակահատվածում իրականացված հարցումներով<sup>7</sup> անդրադարձ է կատարվել նաև կոռուպցիայի նկատմամբ հանրության կարծիքներին:


<sup>6</sup>[https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/ImplementationReviewGroup/14-18June2021/CAC-COSP-IRG-II-3-1-ADD.3/V2102056\\_E.pdf](https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/ImplementationReviewGroup/14-18June2021/CAC-COSP-IRG-II-3-1-ADD.3/V2102056_E.pdf)

<sup>7</sup> [Armenia\\_Final-Presentation\\_08.05.2023\\_Arm.pdf](#)

Մասնավորապես, հարցվածների 9 տոկոսը լիովին բավարարված է ԿԿՀ-ի աշխատանքով, իսկ 36 տոկոսը ընդհանրապես բավարարված չէ ԿԿՀ աշխատանքով: Հարցվածների 8 տոկոսը չեն պատասխանել կամ տեղյակ չեն եղել ԿԿՀ գործունեության վերաբերյալ: Իրականացված հարցման արդյունքում հարցվածների 41 %-ը կոռուպցիան համարել է շատ մեծ խնդիր Հայաստանի համար:

Հարկ է հավելել, որ ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվել է Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, որի շրջանակում կատարված պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն գործունեության մասին իրազեկվածության առնչությամբ հարցման արդյունքները ցույց են տվել, որ հարցվածների 44,1%-ը հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ոչ մի պետական մարմնի և հասարակական կազմակերպության ընդհանրապես չգիտի: Միևնույն ժամանակ, հասարակության մեջ մոտ 20%-ով ավելացել է կոռուպցիայի շուրջ տեղեկատվություն ստանալ ցանկացողների քանակը: Հարցվածներին առավել շատ հետաքրքրել են կոռուպցիայի առնչությամբ իրենց իրավունքներն ու պարտականությունները պարզաբանող տեղեկատվությունը, տեղեկատվությունն այն հաստատությունների մասին, որոնց կարելի է դիմել պաշտոնյաների կոռուպցիոն վարքի դեպքում, պետական մարմինների թեժ գծերի մասին, հակակոռուպցիոն կրթական ծրագրերի մասին և հակակոռուպցիոն օրենսդրության և քաղաքականության մասին տեղեկատվությունը:

Կոռուպցիայի դրսևորման ձևերի առավել տարածվածությունը դիտարկելիս հարցվածների կարծիքները հետևյալն են.<sup>8</sup>



<sup>8</sup> [https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia\\_Research-report\\_Arm.pdf](https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Research-report_Arm.pdf)

### 3. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՆՁՆԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Հայաստանի Հանրապետությունը, հանդիսանալով Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի, Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) անդամ պետություն, վավերացնելով ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիան», Եվրամիության Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, ինչպես նաև անդամակցելով Բաց կառավարության գործընկերության (ԲԿԳ) նախաձեռնությանը, ստանձնել է մի շարք հակակոռուպցիոն միջազգային պարտավորություններ: Հակակոռուպցիոն ոլորտում ՀՀ ստանձնած պարտավորությունները շարունակաբար ընդլայնվել են, իսկ ոլորտում վարվող պետական քաղաքականությունը շաղկապվել և համադրվել է կառավարության ու հանրային կառավարման այլ ոլորտների զարգացման ծրագրերին:

2019–2022 թթ" հակակոռուպցիոն ռազմավարությամբ ապահովվել է կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային գործիքակազմի կիրառումը, այդ թվում՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի, ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի, Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) գնահատման զեկույցների, հանձնառությունների, հաշվետվությունների ու առաջարկությունների պահանջների կատարումը:

2020-2021 թվականներին Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացվել էր գնահատման հինգերորդ պիլոտային փուլը (այսուհետ նաև՝ ՏՀՀԿ Գնահատում), որի նպատակն էր վեր հանել ոլորտում առկա խնդիրները՝ հնարավորություն տալով երկրներին շտկելու իրենց կատարողականը: Պիլոտային գնահատման արդյունքները ամփոփվել են «Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում» զեկույցում և հրապարակվել են 2022 թվականի մայիսին:<sup>9</sup> 2022 թ. դեկտեմբերին մեկնարկել է ՏՀՀԿ 5-փուլի հիմնական գնահատումը:

ՏՀՀԿ Գնահատման արդյունքներով՝ ըստ կատարողական դաշտերի՝ գնահատվել են հակակոռուպցիոն քաղաքականության մշակմանը և իրականացմանն առնչվող ուղենիշները, հայտարարագրման համակարգի և հայտարարատուների շրջանակի ընդլայնմանը, դատավորների համար սահմանված չափանիշներին, դատավորների նշանակման, առաջ-խաղացման և լիազորությունների դադարեցմանն առնչվող կարգավորումներին, Բարձրագույն դատական խորհրդի կազմին և գործառույթներին, Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորների ընտրության կառուցակարգերին, Բարձրագույն դատական խորհրդի

<sup>9</sup> <https://www.oecd.org/countries/armenia/anti-corruption-reforms-in-armenia-e56cafa9-en.htm>

գործունեության թափանցիկությանը, գնումների ոլորտի բարեփոխումներին, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը, կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերի բարելավմանը, իրավաբանական անձանց համար քրեական պատասխանատվության ինստիտուտի ստեղծմանն առնչվող բազմաթիվ ուղենիշներ:

Միևնույն ժամանակ, ՏՀԶԿ Գնահատման արդյունքում ՏՀԶԿ-ի կողմից մի շարք կարգավորումներ և որոշ ուղղություններով իրավակիրառ պրակտիկան ըստ կատարողական դաշտերի համարվել է խնդրահարույց: Վերջինիս շրջանակներում անդրադարձ է կատարվել ինչպես հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգին, այնպես էլ գնահատվել է կոռուպցիայի դեմ պայքարը դատական, դատախազական համակարգերում և քննչական մարմիններում:

ՏՀԶԿ կողմից մշակված գեկույցներով բարձրացվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- Անհրաժեշտ է ԿԿՀ-ին ապահովել բավարար մարդկային ռեսուրսներով Հանձնաժողովի ընդլայնված լիազորությունների արդյունավետ իրականացման նպատակով:

- Առկա չէ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կոռուպցիոն գործերով քննություն իրականացնող առանձին ստորաբաժանում որևէ իրավապահ մարմնում:

- Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերի քննության նկատմամբ դատախազական հսկողությունն ապահովելու համար անհրաժեշտ է նախատեսել բավարար թվով դատախազներ:

- Առնվազն տարեկան հաշվետվություններում ներկայացված չեն կոռուպցիոն հանցագործությունների քննությամբ մասնագիտացված քննիչների և դատախազների աշխատանքին առնչվող մանրամասն վիճակագրություն: Մասնավորապես, պետք է առանձին նշվի բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից կատարված կոռուպցիոն հանցագործությունների, ընդհանուր առմամբ բացված և դատարան ուղարկված գործերի քանակը, գործերի քանակը, որոնցով վերջնարդյունքում սանկցիա է կիրառվել, կարճված վարույթների քանակը և այլն:

- Դատարանների աշխատակազմի և դատավորների օգնականների աշխատավարձը բավարար չափով բարձր չէ:

- Դատախազների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը հստակ չեն և տարրնկալումներ են առաջացնում: Մինչդեռ դրանք պետք է սահմանվեն օրենքով և համապատասխան մեխանիզմներով՝ լսված լինելու հնարավորություն և այլն, երաշխավորեն դատախազների իրավունքները և այլն:

Հայաստանը 2004 թ. անդամակցում է Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբին (ԳՐԵԿՈ) և ենթարկվում է կանոնավոր գնահատման, որի նպատակն է պարզել անդամ պետության տարվող հակակոռուպցիոն քաղաքականության և դրա կիրարկման համապատասխանությունը կազմակերպության հակակոռուպցիոն չափորոշիչներին: Ներկայումս Հայաստանը գտնվում է գնահատման չորրորդ փուլում, որով գնահատվում է կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում: Հայաստանի համար ձևակերպված են 18 հանձնարարականներ, որոնցից 4-ը վերաբերում են պատգամավորներին, 7-ը՝ դատավորներին, 4-ը՝ դատախազներին և 3-ը՝



նշված երեք խմբերի շրջանում էթիկայի, բարեվարքության, շահերի բախման և նվերների ընդունման կարգավորումներին: ԳՐԵԿՈ-ի կողմից 2015 թվականի հոկտեմբերին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում» գնահատման 4-րդ փուլի զեկույցով<sup>10</sup> 2019 թվականից ի վեր ԳՐԵԿՈ-ի հանձնարարականների կատարման ցածր մակարդակի պատճառով Հայաստանի կատարողականը գնահատվում էր «համընդհանուր անբավարար» (18 ընդհանուր ներկայացված հանձնարարականներից 11-ը մնալով չկատարված):

2022 թ" իրականացված լայնածավալ հակակոռուպցիոն և դատախարակական ոլորտի բարեփոխումների արդյունքում ևս երկու հանձնարարական գնահատվել է կատարված. մասնավորապես՝ դատախազներին գաղտնի խորհրդատվություն տրամադրող հատուկ հանձնաժողովի ձևավորման արդյունքում դատախազությանն առնչվող բոլոր հանձնարարականները գնահատվել են կատարված, ինչպես նաև կատարված են գնահատվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առնչությամբ ներկայացված հանձնարարականները: Արդյունքում Հայաստանի Հանրապետությունը դուրս է եկել ԳՐԵԿՈ-ի գնահատման անհամապատասխանության գործընթացից՝ այլևս չհամարվելով «համընդհանուր անբավարար» կատարողական ունեցող երկիր (<https://rm.coe.int/greco4-2023-6-final-eng-2nd-interim-armenia-conf/1680aac534>):

2022 թվականին Հայաստանին է ներկայացվել ԳՐԵԿՈ-ի «Կոռուպցիայի կանխարգելումը և բարեվարքության խթանումը իշխանության կենտրոնական մարմիններում (բարձրագույն գործադիր մարմիններում) և իրավապահ մարմիններում» գնահատման 5-րդ փուլի գնահատման զեկույցի կազմման համար անհրաժեշտ հարցաշարը:

2018 թվականից մեկնարկել են Հայաստանի Հանրապետության կողմից ՄԱԿ «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 2-րդ և 5-րդ գլխով սահմանված պարտավորությունների գնահատման աշխատանքները, որի նախնական արդյունքներով 2021 թվականի հունիսի 14-ին հրապարակվել է «Հայաստանի Հանրապետության կողմից «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 2-րդ և 5-րդ գլխով սահմանված պարտավորությունների գնահատման գործառնական համառոտագրություն» փաստաթուղթը<sup>11</sup>: Դրանով ինստիտուցիոնալ համակարգի առնչությամբ Հայաստանին առաջարկվել է երաշխավորել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմինների գործառնական, ֆինանսական և որոշում կայացնելու հարցերում անհրաժեշտ անկախությունը:

ՄԱԿ-ի գնահատման շրջանակներում կոռուպցիայի կանխարգելման առնչությամբ ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիային (այսուհետ՝ Կոնվենցիա) համապատասխանելու տեսանկյունից որպես ձեռքբերում և առաջադեմ փորձ է համարվել հետևյալը"

<sup>10</sup> <https://www.coe.int/en/web/greco/evaluations/armenia>

<sup>11</sup> [https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/ImplementationReviewGroup/14-18June2021/CAC-COSP-IRG-II-3-1-ADD.3/V2102056\\_E.pdf](https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/ImplementationReviewGroup/14-18June2021/CAC-COSP-IRG-II-3-1-ADD.3/V2102056_E.pdf)

- Ողջունելի են համարվել շահերի բախման, կանխարգելմանն ու լուծմանն ուղղված շահերի հայտարարագրման համակարգի ստեղծմանն ուղղությամբ Հայաստանի բարեփոխումները (Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 5-րդ կետ):

- Ողջունելի է օրենսդրական ակտերի նախագծերը e-draft միասնական հարթակի միջոցով պարտադիր հրապարակման պահանջը՝ թափանցիկությունն ու հասարակության մասնակցությունն ապահովելու համար (Կոնվենցիայի 13-րդ հոդվածի 1-ին կետ):

- Ողջունելի են համարվել հայտարարագրման համակարգի բարեփոխումները, ինչպես նաև հայտարարագրերի հրապարակայնությունը (Կոնվենցիայի 52-րդ հոդվածի 5-րդ կետ):

Միևնույն ժամանակ, որպես պարտավորությունների կատարման մարտահրավերներ՝ նշվել և Հայաստանին առաջարկվել է հետևյալը.

- կոռուպցիայի կանխարգելման մարմնին տրամադրել անհրաժեշտ անկախություն (Կոնվենցիայի հոդված 6, կետ 2).

- ջանքեր գործադրել քաղաքացիական ծառայության պաշտոն չհանդիսացող հանրային ծառայության պաշտոնների համալրման ապահովման, առաջխաղացման, պաշտոնից ազատելու գործընթացների թափանցիկության, թռչակի անցնելու կարգավորումների բարելավմանն ուղղությամբ (Կոնվենցիայի հոդված 7, կետ 1).

- ջանքեր գործադրել բացահայտելու կոռուպցիայի տեսանկյունից հատկապես խոցելի պետական պաշտոնները և համապատասխան դեպքերում ընդունել այդպիսի պաշտոններ զբաղեցնող անձանց ընտրության, վերապատրաստման և ռոտացիայի պատշաճ ընթացակարգեր (Կոնվենցիայի հոդված 7, կետ 1(բ)).

- ջանքեր գործադրել պետական պաշտոնից ազատված պետական պաշտոնյաների մասնագիտական գործունեության և մասնավոր հատվածում վերջիններիս գործունեությանն առնչվող գործող սահմանափակումները բարելավելու ուղղությամբ (Կոնվենցիայի հոդված 7, կետ 4 և 12, կետ 2).

- խրախուսել պետական պաշտոնյաների շրջանում բարեվարքությունը, ազնվությունը և պատասխանատվությունը՝ տարածաշրջանային, միջտարածաշրջանային և բազմակողմ կազմակերպությունների համապատասխան նախաձեռնություններին համապատասխան մշակված վարքագծի կանոնների կամ վարքագծի չափորոշիչների կիրառման, ինչպես նաև ուսուցման միջոցով (Կոնվենցիայի հոդված 8-րդ, կետեր 1-3).

- քննարկել վարքագծի կանոնագրքերը կամ չափանիշները խախտող պետական պաշտոն զբաղեցնող անձանց, այդ թվում՝ քաղաքական պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կարգապահական կամ այլ միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը (Կոնվենցիայի հոդված 8, կետ 6).

- ջանքեր գործադրել գնումների անձնակազմին վերաբերող հարցերը կարգավորելու համար, օրինակ՝ շահերի հայտարարագիր պահանջել որոշակի պետական գնումների (օրինակ ոչ մրցութային ընթացակարգով գնումների) ժամանակ (Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին կետ).

- ձեռնարկել համապատասխան միջոցներ պետական ֆինանսների կառավարման ոլորտում, ինչպիսիք են ռիսկերի կառավարման և ներքին հսկողության արդյունավետ և

գործող համակարգերը, որոնք կարող են ներառել միասնական օրենսդրություն և համակարգեր (Կոնվենցիայի հոդված 9, կետ 2)"

- միջոցներ ձեռնարկել պետական կառավարման թափանցիկության բարձրացման ուղղությամբ, որոնք կարող են ներառել պարբերական զեկույցների հրապարակում կոռուպցիոն ռիսկերի մասին կամ ներկայացված հայտարարությունների, հարցումների և բողոքների մասին առցանց գրառումների տրամադրում՝ թույլ տալով վիճակագրական տվյալներ հավաքել հասարակայնության տեղեկատվության տրամադրման հետագա բարելավման համար (Կոնվենցիայի հոդված 10(գ)).
- դատավորների և դատախազների էթիկայի հարցերով գաղտնի խորհրդատվություն տրամադրելու գործիքակազմ նախատեսել (Կոնվենցիայի հոդված 11):

ՄԱԿ-ի գնահատման զեկույցը, անդրադառնալով գործարար ոլորտում կոռուպցիայի կանխարգելմանը, առաջարկում է.

- Միջոցներ ձեռնարկել մասնավոր հատվածում կոռուպցիայի կանխարգելման, մասնավոր հատվածում հաշվապահական հաշվառման և աուդիտի ստանդարտների ամրապնդման ուղղությամբ, մասնավորապես, հաշվապահական հաշվառման պահանջների պահպանման վերահսկողության և սերտիֆիկացման հաստատման միջոցով, ինչպես նաև իրավաբանական անձանց թափանցիկության ամրապնդման ուղղությամբ՝ անհրաժեշտության դեպքում նախատեսելով արդյունավետ պատժամիջոցներ դրանք չպահպանելու համար (Կոնվենցիա, հոդված 12, կետ 1 և 2):

- Միջոցներ ձեռնարկել Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 3-րդ կետում նշված գործողությունների արգելման ուղղությամբ:<sup>12</sup>

- Արգելել կաշառք ներկայացնող այն ծախսերի առնչությամբ հարկումից ազատումը, որոնք համարվում են Կոնվենցիայի 15-րդ և 16-րդ հոդվածներով այդպիսին ճանաչված իրավախախտումների տարրերից մեկը և, համապատասխան դեպքերում, այլ ծախսերի առնչությամբ, որոնք հետևել են կոռուպցիոն արարքներին: (Կոնվենցիայի հոդված 12-ի 4-րդ կետ):

Հայաստանի Հանրապետությունը միացել է «Հանուն ժողովրդավարության» գազաթնա-ժողովին, որը ԱՄՆ-ի կողմից կազմակերպված միջազգային նախաձեռնություն է՝ բազմաշահառու հարթակ, որի նպատակն է համատեղ ջանքերով փնտրել ժողովրդավարությանն սպառնացող վտանգները հաղթահարելու ուղիներ, փորձել համատեղ ձևավորել

<sup>12</sup> Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք, իր ներքին օրենսդրությանը և հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական հաշվետվության ներկայացման, ինչպես նաև հաշվապահական հաշվառման և աուդիտի ստանդարտները կարգավորող կանոններին համապատասխան, կարող են անհրաժեշտ լինել հետևյալ արարքներն արգելելու համար, որոնք իրականացվում են իրավախախտումներից որևէ մեկը կատարելու համար՝ համաձայն սույն Կոնվենցիայի.

ա) չգրանցված հաշվետվության ստեղծում.

բ) չհաշվառված կամ ոչ ճիշտ գրանցված գործարքների կատարում.

գ) գոյություն չունեցող ծախսերի հաշվառում.

դ) պարտավորությունների ներառում՝ առանց դրանց նպատակի ճշգրիտ սահմանման.

ե) կեղծ փաստաթղթերի օգտագործում, և գ) օրենսդրությամբ նախատեսված ժամկետներից շուտ հաշվապահական փաստաթղթերի միտումնավոր ոչնչացում (<https://www.arlis.am/documentview.aspx?docID=48021>)

ժողովրդավարության վերականգնման օրակարգը: Պետություններն իրենց հանձնառությունները ստանձնել են 2021 թվականի դեկտեմբերին կայացած 1-ին Գագաթնաժողովի ընթացքում, իսկ հանձնառությունների հիմք է հանդիսանում յուրաքանչյուր պետության ղեկավարի ելույթը և դրանում մատնանշված բարեփոխումների շրջանակը:

Հայաստանի Հանրապետության կողմից Գագաթնաժողովի շրջանակներում հանձնառությունների ծավալը սահմանվել է ՀՀ վարչապետի ելույթով, որոնք հետևյալն են՝

1. Մինչև 2026 թվականը հասնել համեմատական ցուցանիշների շարունակական բարելավումների, մասնավորապես Համաշխարհային բանկի Կառավարման համաշխարհային ցուցիչի 50 միավորից հասցնել 60-ի:
2. Մինչև 2026 թվականը հասնել համեմատական ցուցանիշների շարունակական բարելավումների, մասնավորապես Թրանսփարենսի Ինթերնեշնլի կոռուպցիայի ընկալման ինդեքսը 49 միավորից՝ 60-ի:
3. Կլիմայի փոփոխության դեմ պայքարը որպես ժողովրդավարական կառավարման հիմնասյուն և ցածր արտանետումներով էներգետիկ ոլորտի և կենսունակ կանաչ տնտեսության կառուցում:

Գագաթնաժողովի շրջանակներում ստեղծվել և գործում են թեմատիկ խմբեր, որում ներառված են անդամակցող պետությունների՝ Գագաթնաժողովի շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարման համար պատասխանատու մարմինները և ոլորտային հասարակական կազմակերպությունները:

Գագաթնաժողովի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը մասնակցում է՝

1. ԱՄՆ-ի գլխավորած «Ֆինանսական թափանցիկություն և բարելավություն» թեմատիկ խմբին,
2. Մոլդովայի գլխավորած «Հակակոռուպցիոն» թեմատիկ խմբին,
3. Նորվեգիայի, Չեխիայի Հանրապետության և «Ոչ առևտրային իրավունքի» միջազգային կենտրոնի (ICNL) գլխավորած «Քաղաքացիական տարածություն (Civic Space)» թեմատիկ խմբին,
4. Կոսովոյի Հանրապետության և Դոմինիկյան Հանրապետության համանախագահությամբ ձևավորված «Օրենքի գերակայության և մարդակենտրոն արդարադատություն» թեմատիկ խմբին:

Հայաստանը 2012 թվականից հանդիսանում է Բաց կառավարության գործընկերության (ԲԿԳ) անդամ: ԲԿԳ-ն «կոչված է համախմբելու կառավարությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին միասին աշխատելու և ձևավորելու կառավարության ներառական զարգացման օրակարգը, կառավարման համակարգը թափանցիկ, հաշվետու, նորարար և մասնակցային դարձնելու ուղղությամբ»: ԲԿԳ նախաձեռնության շրջանակներում Հայաստանում ընդունվել է գործողությունների 54 ծրագիր՝ 2012-2014, 2014-2016, 2016-2018 և 2018-2020, 2022-2024 թվականների համար: Բոլոր ծրագրերում առկա են եղել նաև հակակոռուպցիոն հանձնառություններ: Մասնավորապես, վերջին 2018-2020 թվականների ծրագրում ներառված 11 հանձնառություններից հակակոռուպցիոն բնույթի են 2-ը՝ «Բաց տվյալներ» պաշտոնական հայտարարագրերում. բարձրաստիճան պաշտոնատար անձանց

գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի կատարելագործում («բավականին կատարված է») և Իրական սեփականատերերի բաց, հանրային գրանցամատյանի ներդրում («ավարտված»):<sup>13</sup> Նույն Հանձնառությունների կատարումը ԲԿԳ-ի Անկախ հաշվետվողական մեխանիզմի կողմից գնահատվել է «զգալի»:<sup>14</sup>

Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների գործողությունների ծրագրում ներառված է 10 հանձնառություն, որոնք խմբավորված են ըստ ՀՀ կառավարության կողմից սահմանված առաջնահերթ ուղղությունների: «Իրավունք և արդարություն» առաջնահերթ ուղղության «Կոռուպցիայի դեմ պայքար՝ կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ» բաղադրիչը ներառում է՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ռեեստր և էլեկտրոնային գնումների համապարփակ համակարգ և իրական շահառուների ինստիտուտի կատարելագործում հանձնառությունները<sup>15</sup>:

Բացի վերոգրյալից հարկ է նշել, որ 2020թ" հուլիսի 9-ին ԱՃԹՆ-ի միջազգային Խորհուրդը Հայաստանի առաջին վավերացման եզրակացության արդյունքում Հայաստանին շնորհել է ամենաբարձր գնահատականը՝ Հայաստանը բավարարող առաջընթաց է արձանագրել ԱՃԹՆ-ի 2016 ստանդարտի իրականացման գործում: Այսպիսով, 2020 թ. հուլիսի 9-ի դրությամբ Հայաստանը ԱՃԹՆ-ի 53 անդամ երկրներից 9-րդն է, որին շնորհվել է բավարարող առաջընթաց ունեցող երկրի կարգավիճակ (<https://www.eiti.am/hy/%D5%8A%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8/>):

Հարկ է նաև ընդգծել արևելյան գործընկերության 2020-2021 թվականի ինդեքսի արդյունքները, համաձայն որի Հայաստանի Հանրապետությունը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում առաջին տեղն է զբաղեցրել (<https://eap-csf.eu/eastern-partnership-index/#section-fillup-1>):

---

<sup>13</sup>«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնություն-Հայաստան 2018-2020 թթ. գործողությունների ծրագիր <https://ogp.gov.am/hy/%D5%B6%D5%A1%D5%AD%D5%B8%D6%80%D5%A4/%D5%A2%D5%AF%D5%A3-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-4-%D6%80%D5%A4-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80>):

<sup>14</sup> [https://ogp.gov.am/files/action\\_plans/1/16286851316556.pdf](https://ogp.gov.am/files/action_plans/1/16286851316556.pdf)

<sup>15</sup> <https://www.e-draft.am/projects/4581/about>

**ԲԱԺԻՆ II. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2023-2026  
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ  
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՆՊԱՏԱԿ 1. ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ**

Հակակոռուպցիոն ցանկացած ռազմավարության կարևորագույն տարրը կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մոդելների և քաղաքականությունների, կարողությունների զարգացման ջանքերի վերաբերյալ որոշումն է, որոնք թույլ կտան այդ ինստիտուտներին արդյունավետորեն կատարել իրենց դերը: Այս առումով պետք է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի կանխարգելումը՝ որպես քաղաքական կամք և հանձնառություն, նյութականացվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրա իրականացման 2019-2022 թվականների գործողությունների ծրագրով, որով նախանշվեցին կոռուպցիայի դեմ իրական պայքարի հիմնական ուղղություններն ու ակնկալվող արդյունքները՝ որպես ռազմավարության իրականացման հիմնական երաշխիք ունենալով ՀՀ կառավարության կողմից դրսևորած քաղաքական աննախադեպ կամքն ու վճռականությունը: Ռազմավարությամբ կարևորվեց կոռուպցիան ծնող ու դրա տարածումը խթանող պատճառների ու պայմանների վերացումը՝ հանրային կառավարման համակարգում բարեվարքության, թափանցիկության, մասնակցայնության արդյունավետ և իրագործելի կառուցակարգերի ստեղծմամբ ու կատարելագործմամբ, պետական համակարգում կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված միասնական կանոնների թելադրմամբ, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մոդելի ներդրմամբ:

Կոռուպցիայի դեմ պայքարում առանցքային դեր ունի կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ մարմնի շարունակական հզորացումը, ինչպես նաև կանխարգելման գործիքների շարունակական զարգացումն ու արդիականացումը: Կոռուպցիայի կանխարգելման կարևորագույն ուղղությունների շարքում ռազմավարությամբ դիտարկվում են կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ համակարգի զարգացումը, իրավական ակտերի և դրանց նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության երաշխավորումը, հանրային ոլորտում կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման մեխանիզմների կատարելագործումը, ինչպես նաև բարեվարքության համակարգի շարունակական կատարելագործումը:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականից իրականացված բարեփոխումների արդյունքում ձևավորվեցին մասնագիտացված հակակոռուպցիոն կառույցներ: Այսպես, 2019 թվականից սկսեց գործել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված ինքնավար պետական մարմինը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մասնագիտացված մարմին համապատասխան անկախության երաշխիքներով: 2019-2022 թվականներին ընդունված օրենսդրական փոփոխությունների արդյունքում էականորեն ընդլայնվել են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի իրավասությունների շրջանակը և գործիքակազմը:

Զուգահեռաբար, Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրով նախատեսվում է ներդնել դատավորների, դատախազների և քննիչների ընթացիկ բարեվարքության, քննիչների թեկնածուների բարեվարքության ստուգման կառուցակարգեր: Միևնույն ժամանակ, 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող միջոցառումների ամբողջական իրականացման ապահովման նպատակով ներդրվելու է նաև անկախ և ինքնավար մարմինների ղեկավարների, կոլեգիալ մարմինների դեպքում՝ դրանց անդամների բարեվարքության ստուգման կառուցակարգեր:

Այսպիսով, ԿԿՀ-ի գործառույթների շարունակական ընդլայնման միջոցով վերջինս կոռուպցիայի դեմ պայքարում կենտրոնական տեղ է զբաղեցնում: Նշյալի արդյունավետ կիրարկման առնչությամբ ևս ԿԿՀ-ին լրացուցիչ ռեսուրսներ են անհրաժեշտ:

Միևնույն ժամանակ, ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 6-րդ հոդվածով և դրա մեկնաբանման իրավաբանական ուղեցույցով կարևորվում է կանխարգելման մարմնի ինստիտուցիոնալ հզորացումը և կարողությունների շարունակական զարգացումը:

Ուստի, իր կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների և օրենքով սահմանված լիազորությունների արդյունավետ իրականացման նպատակով անհրաժեշտ է նախ և առաջ գնահատել ԿԿՀ-ի կարիքներն ու կարողությունները և զարգացնել դրանք: Այս միջոցառումների իրականացումը կապահովվի Հանրային կառավարման բարեփոխումների (ՀԿԲ) ռազմավարության շրջանակներում:

Կոռուպցիայի կանխարգելման հարցում առանցքային նշանակություն ունի նաև ԿԿՀ-ին վերապահված առանձին տեսակի վարույթներ իրականացնելու լիազորությունը: Մասնավորապես, Հանձնաժողովն իրավասու է հարուցելու վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ, «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթ, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված կարգապահական վարույթ: Միևնույն ժամանակ, ԿԿՀ-ն իրականացնում է մի

շարք գործառույթներ, որոնք պարունակում են վարչարարության հատկանիշներ՝ որոշ դեպքերում մեկնաբանվելով որպես վարչական վարույթ, ինչի առնչությամբ օրենսդրական կարգավորումները հստակեցնելու անհրաժեշտություն է առաջացել: Չնայած նշված վարույթների և ԿԿՀ գործառույթների էական տարբերություններին՝ օրենքով այս վարույթների իրականացման առանձնահատկությունները սահմանված չեն, ինչպես նաև նշված ընթացակարգերի բարելավմանն ուղղված միջոցառումներ չեն իրականացվում: Միննույն ժամանակ, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի կարգավորումներում առկա է անհստակություն հայտարարագրերի ստուգում և վերլուծություն եզրույթների վերաբերյալ, բացակայում են ստուգման գործընթացի մանրամասների վերաբերյալ կարգավորումներ՝ ստուգման հասկացությունը, հիմքերը, ժամկետները, ստուգումների իրականացման կարգը և պայմանները, ինչը հանգեցնում է գործընթացի որոշակիության բացակայության: Նշյալ օրենքի կարգավորումների համաձայն՝ հրապարակային ծանուցումներ իրականացնելու գործիքակազմը բացակայում է: Ուստի, անհրաժեշտ է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթների ընթացակարգերի բարելավում և առանձնահատկությունների սահմանում, իրավական որոշակիության համատեքստում ԿԿՀ գործառույթների և իրավասությունների հստակեցում, բացի այդ՝ այնպիսի հստակ կառուցակարգերի սահմանում, որոնք կապահովեն ԿԿՀ-ի՝ որպես վարչական մարմնի անխոչընդոտ գործունեությունը:

Վկայակոչելով կանխարգելման ինստիտուցիոնալ կառուցակարգերը՝ հարկ է անդրադառնալ էթիկայի հանձնաժողովներին: Հանրային ծառայողների բարեվարքության պահանջների պահպանմանը հետևելու լիազորությունը «Հանրային ծառայության մասին» օրենքով վերապահված է պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային ծառայության մասին օրենքներով ստեղծված էթիկայի հանձնաժողովներին: Մինչդեռ, հանրային ծառայության ոլորտում էթիկայի հանձնաժողովների ստեղծման օրենսդրական կարգավորումների, գործնականում դրանց ձևավորման իրավիճակի վերլուծությունը<sup>16</sup> ցույց է տալիս, որ պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային ծառայության մասին օրենքներով ստեղծված էթիկայի հանձնաժողովների ձևավորումը և գործունեությունը լիարժեք երաշխավորված չէ: Մասնավորապես, պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային ծառայության համար չկան մշտապես գործող էթիկայի հանձնաժողովներ: Ավելին, որոշ մարմիններում նշված հանձնաժողովների գոյության պայմաններում երաշխավորված չէ միասնական պրակտիկան, ինչպես նաև բացակայում են հանձնաժողովների գործառույթների պատշաճ իրականացման համար ուղեցույցները և մեթոդական ձեռնարկները: Էթիկայի հանձնաժողովների կարողությունների զարգացման համատեքստում կարևոր են նաև վերջիններիս վերապատրաստումները, ինչը կապահովվի Հանրային կառավարման բարեփոխումների (ՀԿԲ) ռազմավարության շրջանակներում:

<sup>16</sup> «Բարեվարքության ինստիտուցիոնալ համակարգը հայաստանի հանրային կառավարման ոլորտում», ԹԻՀԿ, Երևան 2021, <https://transparency.am/hy/publication/pdf/244/1351>:



Միննույն ժամանակ, կանխարգելման ինստիտուցիոնալ կառուցակարգերի շրջանակում հարկ է անդրադառնալ նաև բարեվարքության հարցերով կազմակերպիչների կարգավիճակին: Բարեվարքության հարցերով բոլոր կազմակերպիչները զբաղեցնում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված Մ2 ենթախմբի պաշտոններ, որոնց պաշտոնի անձնագրով սահմանվում է, որ մասնագետը անմիջական ենթակա և հաշվետու է ստորաբաժանման ղեկավարին:

Ընդ որում, օրենքով նրան վերապահված են մի շարք կարևոր գործառույթներ, ինչպիսիք են, օրինակ՝ հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն տրամադրելը, շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնելը, բարեվարքության հարցերով վերապատրաստման կարիքների բացահայտում և վերապատրաստման ծրագրերի իրականացումը, բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված այլ ծրագրերի մշակումը, հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վիճակագրության վարումը, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ սահմանված կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տեղեկությունների տրամադրումը և այլն:

Մինչդեռ, նման կարևոր դերակատարություն վերապահելով հանդերձ, գործնականում որոշ մարմիններում այս ինստիտուտը արդյունավետ չի գործում՝ կա՛մ նրանց հաստիքները թափուր են, կա՛մ էլ բարեվարքության հարցերով կազմակերպչի գործառույթները ժամանակավորապես վերապահված են այլ ծառայողի կամ պաշտոնատար անձի: Այսպես, համայնքապետարանի աշխատակազմի բարեվարքության հարցերով կազմակերպչի գործառույթները հիմնականում վերապահվել են աշխատակազմի քարտուղարին կամ այլ աշխատակիցների: Այսպիսով, քննարկվող ինստիտուտը դեռևս ամբողջությամբ չի կայացել, առկա են մի շարք խնդիրներ բարեվարքության հարցերով կազմակերպիչների անկախության, երաշխիքների և նրանց իրավասությունների մասով:

Վերոգրյալից բխում է, որ անհրաժեշտ է օրենսդրական և գործնական քայլեր ձեռնարկել էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի շարունակական կատարելագործումն ապահովելու համար:

Ռազմավարության շրջանակներում հարկ է դիտարկել նաև կոռուպցիայի կանխարգելման հաշվետվողականությունը: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի համաձայն՝ ԿԿՀ-ն պետք է ապահովի անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, շահերի բախման դեպքերի վիճակագրության վարումը և հրապարակումը, ինչպես նաև ազդարարման դեպքում իր իրավասության ոլորտին առնչվող յուրաքանչյուր հաղորդման հաշվառումը, քննարկման ապահովումը, միջոցների ձեռնարկումը, վիճակագրության վարումը: Մինչդեռ սահմանված չեն վիճակագրության վարման մեթոդական կառուցակարգեր: Իրավակիրառ մակարդակում ԿԿՀ-ի կողմից նշյալ թեմաների շուրջ վիճակագրական տվյալները արտացոլվում են

բացառապես ԿԿՀ տարեկան հաղորդումներում, որոնք ոչ բոլոր դեպքերում են հնարավորություն տալիս կատարելու համեմատություններ, տեսնելու կոնկրետ ուղղությամբ զարգացումը: Խնդրահարույց է նաև հրապարակային փաստաթղթերի՝ մեքենայորեն ընթեռնելի ձևաչափով ներբեռնված չլինելը, ինչը հնարավորություն չի տալիս արդյունավետորեն կիրառել որոնման գործիքները:

Էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության կազմակերպիչների գործունեության առնչությամբ ևս վիճակագրական կառուցակարգեր առկա չեն:

Նման պայմաններում հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման շրջանակներում էականորեն բարդանում է զարգացումների վերլուծությունը, մոնիթորինգային ցուցիչների համեմատության անցկացման դժվարությունները, այդ համատեքստում առաջընթացի պարզումը և այլն: Բացի այդ, հակակոռուպցիոն միջազգային պարտավորությունների շրջանակում ևս մշտապես տարեկան կտրվածքով պահանջվում են կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող վիճակագրական տվյալներ, որոնց առկայությունն ինքնին շատ հաճախ բավարար է պարտավորությունները կատարված գնահատվելու համար:

Ուստի, անհրաժեշտ է նաև կոռուպցիայի կանխարգելման հաշվետվողականության համատեքստում սահմանել վիճակագրության վարման և վիճակագրական հստակ և արդյունավետ կառուցակարգերը:

Կոռուպցիայի կանխարգելման գործառույթների պատշաճ իրականացման և թափանցիկության ապահովման տեսանկյունից կարևորվում է նաև կանխարգելիչ մեխանիզմների թվայնացումը, ինչը հնարավորություն կտա «թվային խելացի» գործիքների կիրառման, «կարմիր դրոշակների», փոխգործելի հարթակների ներդրման միջոցով մի կողմից բարձրացնել ԿԿՀ գործառույթների իրականացման՝ այդ թվում այլ մարմինների հետ համագործակցության արդյունավետությունը, մյուս կողմից, օրինակ՝ դյուրացնել հայտարարատու և բարեվարքության հարցաթերթիկ լրացնող անձանց կողմից կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող իրենց պարտականությունների կատարումը:

Ըստ այդմ, անհրաժեշտ է զարգացնել առկա էլեկտրոնային հարթակները, այդ հարթակներում ինտեգրել կոռուպցիայի կանխարգելման տարբեր գործիքներ, ինչպես նաև իրականացնել ինտեգրացիա և փոխգործելիության ապահովում ԿԿՀ-ի և այլ պետական մարմինների միջև: Թվայնացման ուղղությամբ միջոցառումները իրականացվելու են նույն ոլորտում Հանրային կառավարման բարեփոխումների (ՀԿԲ) և Թվայնացման ռազմավարությունների շրջանակներում նախատեսված միջոցառումների հետ փոխլրացմամբ:

## **ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ**

Հայաստանի Հանրապետությունում ստանձնած միջազգային պարտավորություններով նորմատիվ իրավական ակտերի հակակոռուպցիոն գնահատումը առանձնացվում է որպես կոռուպցիայի կանխարգելման կարևոր միջոց: Մասնավորապես, ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ»

կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 5-րդ հոդվածով նշվում է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն պետք է ձգտի պարբերաբար գնահատել համապատասխան իրավական փաստաթղթերը և վարչական միջոցները՝ կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի տեսանկյունից դրանց համարժեքությունը որոշելու նպատակով:

Հատկանշական է նաև, որ իրավական ակտերի հակակոռուպցիոն գնահատման իրավական մեխանիզմներ Հայաստանի Հանրապետությունում ներդրվել են դեռևս 2009 թվականին: Մասնավորապես, հակակոռուպցիոն գնահատումն իրականացվել է ՀՀ կառավարության «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1205-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգով, որով, ի թիվս այլնի, առանձնացվել են հակակոռուպցիոն գնահատման գործոնները, եզրակացության ներկայացման կարգը և այլն: Չնայած վերոնշյալին՝ այս կարգավորումներում առկա են էական թերություններ, որոնք բովանդակային տեսանկյունից հնարավորություն չեն տալիս իրականացնելու իրավական ակտերի որակյալ հակակոռուպցիոն ազդեցության գնահատում:

Վերոգրյալի հաշվառմամբ Ռազմավարությամբ կարևորվում է իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննության՝ որպես կանխարգելիչ հակակոռուպցիոն գործիքի արդյունավետ վերագործարկումը և զարգացումը: Վերջինիս կիրառմամբ բացահայտվում և նվազեցվում են կոռուպցիոն ռիսկերը իրավական ակտերի նախագծերում, կիրառվող իրավական ակտերում և կանոնակարգերում: Գործիքն օգնում է բարձրացնել գործընթացների թափանցիկությունը պետական կառավարման մարմիններում և հանրային ծառայություններ մատուցող պետական կազմակերպություններում: Ըստ այդմ, անհրաժեշտ է երաշխավորել իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննությունը՝ մշակվող ակտերի (ex ante) և անհրաժեշտության դեպքում՝ դրանց հիմքում ընկած կամ դրանց հետ փոխկապակցված իրավական ակտերի (ex post) փորձաքննությունը:

Նշվածի համատեքստում անհրաժեշտ է միջազգային փորձի հաշվառմամբ ընտրել իրավական ակտերի նախագծերի փորձաքննության կիրառելի մոդելը:

Իրականացված ուսումնասիրությունների և կիրառելի մոդելի հաշվառմամբ կարևոր է իրավասու մարմնի և մեթոդաբանության մշակման հարցի հստակեցումը, այն հաշվառմամբ, որ փորձաքննությունը իրականացվի մասնագիտացված կերպով:

## **ՀԱՆՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵՂՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

Հանրային ծառայության և հանրային պաշտոնների առնչությամբ օրենսդրական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ բացակայում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների բարեվարքության համակարգի տարրերը համընդհանուր ձևով կարգավորող միասնական օրենսդրական ակտ: Դրա փոխարեն, այս հարցերի

լուծումները տրված են «Հանրային ծառայության մասին» օրենքում և հանրային ծառայության ոլորտային առանձին օրենքներում, ընդ որում, նշյալ իրավանորմերի մեկնաբանող և կիրարկող իրավասու մարմինները ևս տարբեր են: Նման պայմաններում, շատ հաճախ ապահովված չէ կարգավորումների միասնական մոտեցումը, բացի այդ, իրավանորմերի մեկնաբանման և կիրարկման մակարդակում հաճախ միմյանցից տարբերվող մոտեցումներ են կիրառվում: Ըստ այդմ, անհրաժեշտ է ապահովել կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող օրենսդրության միասնականացում «Կոռուպցիայի կանխարգելման մասին» վերտառությամբ օրենսդրական առանձին ակտի ընդունմամբ՝ ամբողջականացնելով բարեվարքության համակարգի տարրերի՝ շահերի բախման, նվերների ընդունման սահմանափակումների, վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների միասնական կիրառման և կառավարման, կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող այլ կառուցակարգերի օրենսդրական կարգավորումները:

Կոռուպցիան անկախ երևույթ չէ, այլ պետական քաղաքականության և վարչարարության, հանրային ծառայության, քաղաքացիական գիտակցության և վարքագծի համակարգային խնդիրների ախտանիշ: Այն պետք է դիտարկվի պետական կառավարման համակարգի որակի և արդյունավետության ավելի լայն համատեքստում, և դրան անհրաժեշտ է տալ խորը վերլուծության արդյունքում ստացված համապատասխան գնահատական: Հնարավոր չէ հակազդել կոռուպցիային բացառապես հակակոռուպցիոն լծակների կիրառմամբ, այն կառավարման մասնակից գործընթաց է, հետևաբար այն լուծելու համար անհրաժեշտ են կառավարչական փոփոխություններ հանրային կառավարման ոլորտում: Այս համատեքստում վարչական կոռուպցիայի հաղթահարման, հանրային կառավարման մարմիններում և ոլորտներում թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության բարձրացման, օրինականության ապահովման կոռուպցիոն ռիսկերի ու ռիսկեր ծնող գործոնների չեզոքացման համար առանցքային նշանակություն ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, համայնքապետարանների աշխատակազմերում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգի ներդրումը, որը պետք է հիմնված լինի միջազգայնորեն ընդունելի չափանիշների և կառուցակարգերի, միջազգային հակակոռուպցիոն կազմակերպությունների կողմից տրված առաջարկությունների վրա:

Կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործընթացը և դրա կարևորությունն ամրագրվել է նաև ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով: Ծրագրով նշված գործողության համակատարող է հանդիսանում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 24-ի N 1351-Ն որոշմամբ փոփոխության է ենթարկվել ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ հաստատված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թթ" միջոցառումների ծրագիրը, որով ՀՀ պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման

մեթոդաբանության մշակումը վերապահվում էր Հանձնաժողովին: Նախորդ ռազմավարությամբ նախատեսված միջոցառման հաշվառմամբ իրականացվել են մի շարք գործողություններ՝ ուղղված կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի կայացմանը:

Միաժամանակ, Համաշխարհային բանկի աջակցությամբ Հանձնաժողովի կողմից սույն ոլորտում ստացված՝ հանրային ծառայողների շրջանում իրականացված հարցման արդյունքներով վեր են հանվել կոռուպցիայի տեսանկյունից առավել ռիսկային ոլորտները:

Նախորդ ռազմավարության շրջանակներում իրականացված գործողությունների և դրանց արդյունքների հաշվառմամբ հարկ է նշել, որ Կոռուպցիոն ռիսկերի կառավարման համակարգի ներդնումը պետք է ուղղված լինի հակակոռուպցիոն ոլորտի զարգացման, կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, վերլուծության և կառավարման միասնական քաղաքականության մշակմանը, այնպիսի կառուցակարգերի կիրառմանը, որոնք կառավարելի կդարձնեն կոռուպցիոն ռիսկերի առաջացումը, բարեվարք միջավայր կստեղծեն ողջ հանրային կառավարման համակարգում: Հետևաբար, ռազմավարությամբ կարևորվում է քննարկվող համակարգի ներդրումը՝ նշված գործընթացների շարունակական իրականացումն ու ներդրված համակարգի շարունակական բարելավումը, ինչը թույլ կտա կոռուպցիոն սխեմաների արդյունավետությունը նվազեցնել կամ մոտեցնել նվազագույնի: Որպես առաջնահերթ թիրախ՝ կոռուպցիոն ռիսկերի կառավարման համակարգի ներդնումը խնդիր ունի ազդելու համակարգային կոռուպցիայի դրսևորումների վրա:

Կոռուպցիայի կանխարգելման ամենատարածված և ունիվերսալ գործիքը *գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի* հայտարարագրումն է: Վերջին տարիներին հայտարարագրման համակարգի օրենսդրական փոփոխությունների արդյունքում էապես բարելավվել է պաշտոնատար անձանց հայտարարագրման համակարգը: Այդուհանդերձ, ներկայումս հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակը ներառում է պետական և համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց, ինչի արդյունքում չի ապահովվում պետական և համայնքների մասնակցությամբ կազմակերպությունների՝ ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հաշվետվողականությունն ու թափանցիկությունը: Այս համատեքստում, թեև 2024 թվականից ուժի մեջ են մտնելու այն կարգավորումները, համաձայն որոնց՝ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրված հիմնադրամների, 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության և համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարները (կոլեգիալ գործադիր մարմնի անդամները), որոնք օրենսդրությամբ սահմանված հիմքերի առկայության դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով ներկայացնելու են գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի իրավիճակային հայտարարագիր, սակայն անհրաժեշտ է դիտարկել նշյալ անձանց տարեկան, ինչպես նաև պաշտոնի ստանձնելու և դադարեցնելու հայտարարագիր ներկայացնելու պարտականության սահմանման հնարավորությունը: Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով հայտարարատու որոշ պաշտոնների համար սահմանված չէ շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն, որպիսի պարտականության սահմանումը բոլոր հայտարարատու պաշտոնատար անձանց համար ևս կարևոր է հայտարարատու

անձանց և վերջիններիս փոխկապակցված անձանց իրական շահառու հանդիսանալու, շահերի բախման հնարավոր իրավիճակները բացահայտելու տեսանկյունից:

Հատկանշական է նաև, որ 2023 թվականից ներդրվել է հայտարարագրերի լրացման նոր էլեկտրոնային համակարգ, որն ինքնաշխատ կերպով տվյալները բեռնում է նախորդ տարվա հայտարարագրից, այլ պետական շտեմարաններից, ապահովում է տվյալների ավտոմատացված համադրում: Այդուհանդերձ, ստեղծված և գործարկված համակարգն իր ֆունկցիոնալությամբ դեռևս չի ապահովում պետական բոլոր շտեմարանների հետ փոխգործելիությունը (շտեմարաններում առկա որոշ տվյալներ չեն համապատասխանում համակարգի որակական պահանջներին), ներքին և արտաքին հաշվետվողականությունը, հրապարակային տվյալների ընտրանքային որոնումը, մեքենայական ընթեռնելի տվյալների արտահանումը ինքնաշխատ եղանակով: Բացի այդ, հայտարարագրերի ստուգման գործընթացի առավել դյուրացման նպատակով անհրաժեշտ է զարգացնել էլեկտրոնային համակարգի վերլուծական հատվածը: Ըստ այդմ, անհրաժեշտ է զարգացնել հայտարարագրման էլեկտրոնային համակարգը՝ առկա խնդիրները լուծման համար:

Բացի վերոշարադրյալից՝ հայտարարագրման համակարգի զարգացման շրջանակներում անհրաժեշտ է նաև զարգացնել Հանձնաժողովի կարողությունները օտարերկրյա պետություններում առկա գույքի և ակտիվների բացահայտման համատեքստում:

Վերոգրյալի հաշվառմամբ ռազմավարության խնդիրներից է նաև հայտարարագրման համակարգի կատարելագործումը:

Կոռուպցիայի կանխարգելման միջոցով հնարավոր է դառնում հանրային պաշտոն զբաղեցնող ազնիվ, բարեխիղճ և գործունյա անձի և ծառայողի կերպարի ստեղծումը, հանրային ծառայության համակարգի նկատմամբ հասարակության վստահության բարձրացումը: Այս տեսանկյունից 2019-2022 թթ. հակակոռուպցիոն քաղաքականությունը ուղղված էր բարեվարքության ստուգման այնպիսի նոր գործիքակազմի ներդրմանը, որը հնարավորություն կտար ուսումնասիրելու Հայաստանի Հանրապետության պետական պաշտոնի հավակնող անձանց բարեվարքությունը: Ըստ այդմ, 2020 թվականին «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով ԿԿՀ-ին է վերապահվել պետական պաշտոնի հավակնող անձանց բարեվարքության ուսումնասիրության իրականացումը՝ այն սահմանափակելով որոշակի հանրային պաշտոններ զբաղեցնելու համար բարեվարքության ուսումնասիրությամբ:

Այս առումով օրենսդրորեն ամրագրված չէ լիազորությունների լայն շրջանակ ունեցող և ինքնուրույն որոշումների կայացման իրավասություն ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձանց (օրինակ, քաղաքական պաշտոններ զբաղեցնող անձանց) համար բարեվարքության ուսումնասիրության պարտադիր պահանջ: Նշվածը նաև կարևորվում է ինչպես միջազգային կազմակերպությունների, օրինակ՝ ԳՐԵԿՈ-ի 5-րդ փուլի գնահատման շրջանակներում, այնպես էլ ներպետական սոցիալական հարցումների արդյունքներով վերհանված ռիսկային պաշտոնների և գործընթացների համատեքստում: Սա պայմանավորված է օրենսդրական և գործնական կառուցակարգերի բացակայությամբ: Բացի այդ, տարանջատված չեն բարեվարքության ուսումնասիրությունը հանրային պաշտոնում նշանակման կամ առաջխաղացման

համար և ընթացիկ բարեվարքության ուսումնասիրությունը (շրջանակը, մեխանիզմները): Միևնույն ժամանակ, բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքների հրապարակային չլինելը հնարավորություն չի տալիս հանրային վերահսկողության մեխանիզմների միջոցով ևս ամրապնդել բարեվարքության համակարգը: Հարկ է հաշվի առնել նաև բարեվարքության ուսումնասիրության շրջանակում քննարկվող՝ օրենքով գաղտնիք հանդիսացող տեղեկությունների, երրորդ անձանց մասին տեղեկությունների և անձնական տվյալների, անձի մասնավոր կյանքին առնչվող տեղեկությունների և օպերատիվ-հետախուզական ճանապարհով ստացված տեղեկությունների առկայության հանգամանքը, ինչպես նաև դրանց հրապարակայնության առնչությամբ ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումները և օտարերկրյա պետությունների փորձը, որի համատեքստում անհրաժեշտություն է առաջանում դիտարկել հրապարակայնության պահանջի սահմանման նպատակահարմարության հարցը:

Նշյալից բացի, առկա են բարեվարքության ուսումնասիրության համակարգի արդյունավետությունը նվազեցնող խոչընդոտներ և հանգամանքներ, ինչպես օրինակ, բարեվարքության ուսումնասիրության սեղմ ժամկետները, ԿԿՀ-ի կողմից թեկնածուի բարեվարքության բացասական եզրակացության պարագայում, նրա՝ համապատասխան պաշտոնի նշանակումը կամ առաջխաղացումն առանց պատճառաբանված որոշման իրականացնելը, ԿԿՀ բարեվարքության եզրակացության եզրափակիչ մասը չհրապարակելը, բարեվարքության ուսումնասիրության առանձին էլեկտրոնային հարթակի բացակայությունը, բարեվարքության հարցաթերթիկների՝ էլեկտրոնային եղանակով լրացումը և այլն:

Ամբողջ վերոգրյալը ցույց է տալիս բարեվարքության ուսումնասիրության համակարգի կատարելագործման անհրաժեշտությունը:

Քաղաքական կոռուպցիան կանխարգելելու և չեզոքացնելու կարևոր երաշխիքներից է կուսակցությունների ֆինանսական գործունեության թափանցիկությունը: 2020 թ. դեկտեմբերի 29-ին ընդունված «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում և հարակից մի շարք օրենքներում կատարված ծավալուն փոփոխություններով վերանայվեցին կուսակցությունների ֆինանսավորման և դրա նկատմամբ վերահսկողության մեխանիզմները: Մասնավորապես, կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության գործառույթը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունից փոխանցվեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

Նշված գործառույթն իրականացնելու համար ԿԿՀ-ն ընդունել է մի շարք ենթաօրենսդրական ակտեր, իրականացրել կուսակցությունների հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերի ստուգում և վերլուծություն, աուդիտի կազմակերպում և անցկացում, կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգում և այլն: Այդուհանդերձ, բացակայում են կուսակցությունների նկատմամբ ֆինանսական վերահսկողության այդ գործառույթն ամբողջությամբ իրականացնելու համար անհրաժեշտ կառուցակարգերը (ընթացիկ ստուգման եղանակները, համագործակցությունը այլ մարմինների հետ) և ներուժը: Արձանագրված այլ խնդիրներից է կուսակցությունների՝ իրենց ֆինանսական հաշվետվողականությանն ու վերահսկողությանն առնչվող հարցերի վերաբերյալ բավարար

չափով տեղեկացված չլինելը, օրենսդրորեն կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման և աուդիտի արդյունքները կուսակցությունների պետական ընդհանուր ֆինանսավորման ստացման պայման չհանդիսանալը և այլն:

Միաժամանակ, ներկայումս նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողությունը դիտարկվում է պահպանել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության իրավասության ներքո: Ըստ այդմ, օրենսդրական հետագա բարեփոխումներն անհրաժեշտ է ուղղել քաղաքական միավորումների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող հանրային իշխանության երկու մարմինների միջև իրավասությունների տարանջատմանը, որի շրջանակներում կուսակցությունների ամենօրյա ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը կիրականացնի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, իսկ նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողությունը՝ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը:

Վերոգրյալը պահանջում է կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների արդյունավետության մեծացում և կատարելագործում:

Վերոշարադրյալի հաշվառմամբ անհրաժեշտ է նաև ապահովել կանխարգելիչ բոլոր գործիքների թվայնացումը և դրանց միջև գործերի վարման թվային հարթակի ներդրումը, ինչը հնարավորություն կտա ԿԿՀ ամբողջ գործառույթները տեղափոխել թվային դաշտ, ինչն էլ ի վերջո հնարավորություն կտա արհեստական բանականության գործիքների միջոցով վերլուծել ԿԿՀ գործունեության ընթացքում ի հայտ եկած միտումները, վերլուծել և միմյանց կապել այն հսկայաձավալ տեղեկատվությունը, որը տարբեր գործընթացների արդյունքում հավաքագրվում և պահպանվում է այդ մարմնում, արդյունքում ստանալով կոռուպցիայի կանխարգելման թվային գործիք, որը ոչ միայն կապահովի ոլորտի ամբողջական, իրական ժամանակում թարմացվող վիճակագրություն, այլև կտա իրական ժամանակում կատարվող վերլուծական տվյալներ, կհամադրի պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների անհատական վարքագիծը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացված կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքների հետ և դուրս կբերի պետության համար հակակոռուպցիոն համատեքստում առավել ռիսկային գործառույթներն՝ ըստ գործընթացների և ըստ անձանց: Նմանատիպ հարթակը հնարավորություն կտա նաև ապահովել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների ոչ թե ստանդարտացված, այլ թիրախային վերապատրաստումների կազմակերպումը՝ ելնելով տվյալ ժամանակահատվածում անձի դրսևորած վարքագծից, ինչպես նաև տվյալ մարմնում բացահայտված կոռուպցիոն ռիսկերից:



## ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Կոռուպցիայի կանխարգելման հարցում առանցքային նշանակություն ունի բարեվարքության համակարգի՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի կանոնների (այդ թվում՝ պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու սահմանափակումների վերաբերյալ), անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների և շահերի բախման առնչությամբ կառուցակարգերի շարունակական կատարելագործումը և արդիականացումը:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների բարեվարքության ապահովման կարևոր բաղադրատարրերից է *վարքագծի կանոնագրքերի* ընդունումը, դրանց պահանջների պահպանմանը միտված վերապատրաստումների անցկացումը և շարունակական վերահսկողության իրականացումը: Այս առնչությամբ որոշակի աշխատանքներ իրականացվեցին նախորդող չորս տարիների ընթացքում, որի արդյունքում հաստատվեցին հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները և դրա հիման վրա սահմանվել է քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագիրքը, իրականացվեցին մի շարք վերապատրաստումներ: Զուգահեռաբար, լրամշակվեցին քննիչների վարքագծի կանոնները: Մինչև տիպային կանոնների ընդունումը արդեն առկա էին վարքագծի կանոններ դատավորների և դատախազների համար:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է միջազգային փորձի ուսումնասիրություն իրականացնել և դիտարկել քննիչների, դատախազների և դատավորների վարքագծի կանոնների վերանայման և բարեվարքության համակարգին համահունչ կարգավորումների սահմանման անհրաժեշտությունը:

Հարկ է հավելել, որ պետական և համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքերի համակարգի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ «Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի 3-րդ հոդվածով սահմանված են պատգամավորական էթիկայի կանոնները, որոնք ամբողջությամբ չեն արտացոլում «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված պաշտոն զբաղեցնող անձի վարքագծի սկզբունքները: Միաժամանակ պատգամավորի վարքագծի կանոնների ընդունման իրավասություն սահմանող դրույթ ևս ամրագրված չէ, որպիսի պայմաններում առկա չեն նաև պատգամավորների վարքագծի կանոններ: Ուստի անհրաժեշտ է սահմանել պատգամավորների վարքագծի կանոնների նկատմամբ հսկողության մշտական հիմունքներով ինստիտուցիոնալ կառուցակարգեր:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է նաև, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով վարքագծի կանոնների կիրառելիությունը համայնքային պաշտոնների առումով սահմանափակ է, քանի որ տարածվում է միայն համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վրա: Փաստացիորեն, իրավական կարգավորման ենթարկված չէ ավագանու անդամների, բազմաբնակավայր համայնքի

բնակավայրի վարչական ղեկավարների, և համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց (համայնքի ղեկավարի խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի, համայնքների ղեկավարի տեղակալի օգնականի, համայնքների ավագանու խմբակցությունների փորձագետների) համար վարքագծի կանոնագրքի ընդունման հարցը և այս անձինք դուրս են մնացել վարքագծի կանոնագրքերի ընդհանուր համակարգից:

Այսպիսով, ներկայումս վարքագծի կանոնները որոշ պետական և համայնքային պաշտոնների դեպքում առկա չեն, եղած վարքագծի նորմերը միասնական չեն, ինչպես նաև բացակայում է նշված կանոնների նկատմամբ պատշաճ հսկողության իրականացման մեխանիզմները: Հետևաբար, անհրաժեշտ է ապահովել վարքագծի կանոնագրքերի ներդրման, դրանց կիրարկման և հսկողության իրականացման մեխանիզմների միասնական ապահովման կառուցակարգերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, համայնքապետարանների աշխատակազմերում:

Բարեվարքության համակարգի շարունակական կատարելագործումը պահանջում է նաև շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, նվերների ընդունելու սահմանափակումների և այլ սահմանափակումների արդյունավետ գործադրման, վերահսկման մեխանիզմների կատարելագործում: Թեև նշված ուղղությամբ Կառավարությունը շարունակական աշխատանքներ է իրականացրել վերջին տարիներին, որոնց արդյունքում էականորեն բարելավվել են շահերի բախման, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումներին, նվերների ընդունելու սահմանափակումներին առնչվող օրենսդրական կարգավորումները<sup>17</sup>, այդուհանդերձ, դեռևս առկա են որոշ խնդիրներ և բացեր: Մասնավորապես, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում *նվերներ ընդունելու սահմանափակումների* իրացման կառուցակարգերը ամբողջությամբ ամրապնդված չեն, նվերների հաշվառման կառուցակարգերը թերի են, դեռևս ձևավորված չէ նվերների ռեեստրը, սահմանված չեն պետության և համայնքի սեփականությունը հանդիսացող նվերների տնօրինման հետ կապված կարգավորումներ, իսկ պետության սեփականությունը դարձող նվերների տնօրինման լիազորությունը, ըստ էության, վերապահված է միայն Պետական գույքի կառավարման կոմիտեին, ինչը խնդրահարույց է և իրավակիրառ պրակտիկայում մի շարք խնդիրներ կարող է առաջացնել: Այս համատեքստում անհրաժեշտ է սահմանել պետության և համայնքի սեփականությունը դարձող նվերների տնօրինման եղանակները, կարգը, ըստ այդ նվերների առանձին տեսակների դրանց տնօրինման առանձնահատկությունները՝ տարանջատելով մշակութային արժեք ներկայացնող, շուտ փչացող, պահպանման էական ծախսեր պահանջող արարողակարգային նվերների, ոչ թույլատրելի նվերների, որպես պարգևատրում տրվող նվերների տնօրինման կանոնները, ինչպես նաև իրավասու մարմին օրենքով վերապահել արարողակարգային նվերները հաշվառելու և դրանք տնօրինելու եղանակի վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու լիազորություն:

<sup>17</sup> Մանրամասները տես՝ Բաժին I-ում:

Ի լրումն վերոգրյալի՝ ներկայումս ամբողջությամբ կատարելագործված չեն *անհամապետելիության պահանջների* բացահայտման գործիքները և դրանց կիրառման հնարավորությունները, ապահովված չէ այլ սահմանափակումների պահանջների կիրառման միասնականությունը, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին ներկայացվող այլ սահմանափակումների պահանջների կառուցակարգերը և դրանց բացահայտման գործիքները և կիրառման հնարավորությունները ամբողջությամբ չեն բարելավվել:

Հարկ է նաև ընդգծել, որ պաշտոնավարումից հետո տարածվող սահմանափակումների (post employment restrictions) խախտման առնչությամբ, ըստ «Հանրային ծառայության մասին» օրենքի, սահմանված է կարգապահական պատասխանատվություն, ինչը գործնականում իրագործելի չէ, հետևաբար անհրաժեշտ է ուսումնասիրել այս սահմանափակումների առնչությամբ միջազգային փորձը և ներմուծել գործուն և նպատակային կառուցակարգեր:

Միաժամանակ, բարեվարքության համակարգի զարգացումը պահանջում է պետական և համայնքային մասնակցությամբ ոչ առևտրային կազմակերպություններում բարեվարքության համակարգի ներդրում և զարգացում: Այսպես, պետական մասնակցությամբ ոչ առևտրային կազմակերպություններում ներգրավված ղեկավարներ և ռիսկային պաշտոնները զբաղեցնող անձինք/աշխատակիցները չեն հանդիսանում վարքագծի կանոնների սուբյեկտներ, ինչպես նաև նրանց համար չեն գործում կամ մասնակի չեն գործում շահերի բախման, անհամատեղելիության պահանջների պահպանման, այլ սահմանափակումների վերաբերյալ կարգավորումները: Հետևաբար, հարկ է նաև դիտարկել պետական մասնակցությամբ ոչ առևտրային կազմակերպություններում բարեվարքության համակարգի ներդրումը:

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև բարեվարքության պահանջների պահպանման համար պատասխանատվության միջոցներին: Ներկայումս առկա չէ բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվության միջոցների կիրառման միասնական համակարգ: Այսպես, թեև սահմանվել են վարքագծի տիպային կանոնները, դրանց խախտումների համար պատասխանատվության միասնական նորմեր սահմանված չեն, յուրաքանչյուր մարմին ազատ է կոնկրետ խախտման համար պատասխանատվության միջոց սահմանել: Այսինքն՝ գործնականում ձևավորվում է այնպիսի իրավիճակ, երբ նույն տեսակի խախտման համար տարբեր մարմիններ կարող են կիրառել պատասխանատվության տարբեր միջոցներ:

Բացի այդ, վարքագծի կանոնների, այլ սահմանափակումների և շահերի բախման կանոնների խախտման համար օրենքով սահմանված կարգապահական պատասխանատվությունը կիրառելի չէ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ, ինչի արդյունքում նշված պաշտոնատար անձանց կողմից համապատասխան խախտման դեպքերը որևէ իրավական հետևանք չեն առաջացնում, ուստի և չեն սահմանափակում որևէ կերպ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց զերծ մնալու նմանատիպ խախտումներից, իսկ պատասխանատվության բացակայության պայմաններում նման դեպքերը չեն

կանխարգելվում: Ավելին, որոշ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար, ինչպես նաև հանրային ծառայության առանձին ոլորտային օրենքներով (համայնքային, դիվանագիտական, ոստիկանական, զինվորական, ազգային անվտանգության մարմիններում ծառայությունների մասին) պատասխանատվության միջոցների կիրառման պարտադիր պահանջ սահմանված չէ:

Հարկ է նաև նշել, որ հանրային ծառայության առանձին տեսակները, որոնք ունեն հատուկ օրենքներով կարգավորումներ, ունեն իրենց վարքագծի կանոնները կամ այդ կանոնների ընդունման ընթացակարգերը, ինչպես նաև այդ կանոնների խախտման համար պատասխանատվության ընթացակարգը: Ի սկզբանե առանձին ծառայության տեսակների համար ընդունված օրենքներում շարադրվել են վարքագծի կանոններ կամ դրանք ընդունելու տարբերակներ և սահմանվել է պատասխանատվության միջոցի կիրառումը: Այնուամենայնիվ, դեռևս տարբեր ծառայությունների տեսակները կարգավորող օրենքները շարունակում են պահպանել իրենց կարգավորումները և շատ հաճախ չեն համապատասխանում այն միասնականացման գաղափարին, որը դրված է «Հանրային ծառայության մասին» օրենքի հիմքում: Արդյունքում ոչ միայն վարքագծի կանոնների խախտումների, այլ նաև շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների խախտման հիմքերով նշանակվող կարգապահական տույժերի նշանակման համար չկան միասնական չափանիշներ և կառուցակարգեր: Բացի այդ՝ համապատասխան մարմնի ղեկավարի կամ էթիկայի հանձնաժողովների կողմից նշանակվող տույժերը չեն կրում միասնական բնույթ:

Ըստ այդմ, բարեվարքության պահանջների պահպանման համար պատասխանատվության միջոցների կառուցակարգերի կատարելագործումն անհրաժեշտություն է:

Բացի այդ, հաշվի առնելով ոլորտային միջազգային պարտավորությունները անհրաժեշտություն է առաջանում դիտարկել օրենսդիր և գործադիր մարմիններում լիազորությունների լայն շրջանակ ունեցող և ինքնուրույն որոշումների կայացման իրավասություն ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և լոբբիստական գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անձանց հետ շփումների թափանցիկության կարգավորումների ներդրումը:

## ՆՊԱՏԱԿ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱՎԱԶԴԴՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

2019-2022 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման արդյունքում երաշխավորվեց հակակոռուպցիոն հակազդման մարմինների ստեղծումը՝ 2020 թվականին՝ ՀՀ Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը, 2021 թվականին՝ Հակակոռուպցիոն կոմիտեն, 2021 թվականին ուժի մեջ մտավ հակակոռուպցիոն դատարանի ստեղծումն ապահովող օրենսդրությունը, տրվեց հակակոռուպցիոն դատարանների ստեղծման մեկնարկը, ստեղծվեց ՀՀ Գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինակա-նության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչությունը:

Զուգահեռաբար նոր քրեական օրենսգրքի շրջանակում ընդլայնվեց կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը և բարելավվեցին հանցակազմերը: Կոռուպցիոն հանցագործությունների մինչդատական քրեական վարույթի ընթացքի վերաբերյալ վիճակագրության վարման և դրանց վերլուծության վերկառուցակարգերը կատարելագործվեցին, կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդական փաստաթուղթը մշակվեց:

Այդուհանդերձ, հակակոռուպցիոն մասնագիտացված ինստիտուցիոնալ մարմինների ձևավորման պայմաններում, դեռևս լրիվությամբ ապահովված չեն այդ մարմինների արդյունավետ գործունեության գործիքակազմերն ու կարողությունները: Հակակոռուպցիոն կոմիտեն, հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանները, ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինակա-նության նկատմամբ հսկողության վարչության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունները կարիք ունեն անձնակազմերի համալրման, կարողությունների զարգացման, օրենքով վերապահված լիազորությունները կյանքի կոչելու գործիքների ու կառուցակարգերի ներդրման և առկա կառուցակարգերի զարգացման:

«Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկի՝ ապահովելու համար, որ սույն Կոնվենցիայում հիշատակված հակակոռուպցիոն մարմինները հայտնի լինեն հանրությանը, և պետք է ապահովի մուտքը դեպի այդ մարմինները, այդ թվում՝ անանուն ձևով՝ ամեն մի դեպքի մասին նրանց հաղորդումներ տրամադրելու համար, որը կարող են դիտարկվել որպես իրավախախտում՝ սույն Կոնվենցիային համապատասխան:

Այս տեսանկյունից պետք է նշել, որ պետության հակակոռուպցիոն պայքարի կարևոր բաղադրիչ է *ազդարարման ինստրիպուրը*, որի գործարկման հիմքը դրվել է 2017 թվականի հունիսի 9-ին «Ազդարարման համակարգի մասին» օրենքի ընդունմամբ:

Նպատակ ունենալով ապահովել ազդարարման համակարգի շարունակական զարգացումը և շտկել գործող օրենսդրական կարգավորումների որոշ թերությունները, այդ թվում արձանագրված «ՏՀԶԿ (2022) Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում. Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի պիլոտային մոնիթորինգի 5-րդ փուլի վերաբերյալ» զեկույցի դիտարկումներում (ցուցիչներ 4.1.1-4.3.2) ՀՀ կառավարության

կողմից նախաձեռնվել են օրենսդրական փոփոխություններ, որոնց արդյունքում լուծվել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝

1) ազդարարման հասկացության ընդլայնումը, հանրային ազդարարման կառուցակարգի սահմանումը,

2) ազդարարման տարածումը պետական մասնակցություն չունեցող կամ հանրային նշանակության կարգավիճակ չունեցող իրավաբանական անձանց վրա,

3) ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարումը,

4) ազդարարների պաշտպանության նպատակով կիրառվող միջոցների տեսակների ճշգրտումն և օրենքում դրանց սահմանումը և այլն<sup>18</sup>:

Այս համատեքստում 2022 թվականին կատարվեցին օրենսդրական բարեփոխումներ՝ ուղղված ազդարարման վարույթի կատարելագործմանը, հանցագործության հատկանիշներ չպարունակող կոռուպցիոն բնույթի դեպքերի (օրինակ՝ շահերի բախման կամ անհամատեղելիության դեպքերը և այլն) վերաբերյալ ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակով ազդարարման և դրանց ընթացք տալու կարգավորումների նախատեսմանը, ազդարարների պաշտպանության գործիքակազմի կատարելագործմանը և դրա համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանի դերակատարման շրջանակի սահմանմանը: Նաև ավելացվեց ազդարարման նոր տեսակ՝ ազդարարում հանրությանը, ինչ հնարավորություն կտա ՀԼՄ-ների միջոցով ևս ապահովել ազդարարման դեպքերի քննության հետևողականությանը: Կատարելագործվեցին ազդարարման վիճակագրական կառուցակարգերը: Չնայած ազդարարման համակարգի արդյունավետ գործարկման ուղղությամբ ձեռնարկված բարեփոխումներին, հարկ է նշել, որ դեռևս չի ապահովվել այս ինստիտուտի ներդրման հիմքերում նախանշված հիմնական նպատակների արդյունավետ իրացումը, ինչպես նաև նշյալ իրավակարգավորումների կիրարկումը պրակտիկայում:

## **ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

### **ՀԱԿԱԿՈՒՌՈՒՊՑԻՈՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀՋՈՐԱՑՈՒՄ**

Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության արդյունավետությունն ապահովելու նպատակով 2021 թվականին ստեղծվեց Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեն, իսկ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքով սահմանվեցին Կոմիտեի գործունեության կարգը, վերջինիս թափանցիկության և հաշվետվողականության ապահովմանն ուղղված մեխանիզմները<sup>19</sup>: Ներկայումս, թեև ստեղծվել են Հակակոռուպցիոն կոմիտեի բնականոն գործունեության ապահովման նախապայմանները,

<sup>18</sup> [http://parliament.am/draft\\_history.php?id=13534](http://parliament.am/draft_history.php?id=13534)

<sup>19</sup> Մանրամասները՝ Բաժին 1-ում:

Կոմիտեին վերապահված գործառույթների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է երաշխավորել Հակակոռուպցիոն կոմիտեի ինստիտուցիոնալ հզորացումը: Ըստ այդմ, անհրաժեշտ է իրականացնել շարունակական աշխատանք՝ Կոմիտեի կարողությունների զարգացման, վերջինիս անկախության, գործունեության թափանցիկության և հաշվետվողականության երաշխիքների ամրապնդման ուղղությամբ: Միաժամանակ, Հակակոռուպցիոն կոմիտեի անկախության երաշխավորման տեսանկյունից կարևորվում է նաև վերջինիս ձևավորման կարգի վերանայումը՝ Կոմիտեին նախագահի և վերջինիս տեղակալների նշանակման առնչությամբ հնարավոր ռիսկերի մեղմացման անհրաժեշտությունը: Բացի այդ, թեև «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքը սահմանում է Կոմիտեի գործունեության հաշվետվողականության և թափանցիկությանն ուղղված որոշակի կարգավորումներ, դրանք ևս ունեն բարելավման կարիք՝ նկատի ունենալով հաշվետվողականության շրջանակի՝ օրենքով ամրագրելու անհրաժեշտությունը:

Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի հաջորդ կարևոր բաղադրիչը Կոմիտեի գործունեության նկատմամբ անկախ և անաչառ հսկողության իրականացման նպատակով ՀՀ գլխավոր դատախազության համակարգում մասնագիտացված ստորաբաժանման ձևավորումն ու վերջինիս բնականոն գործունեության ապահովումն է: Վարչության հաստիքների ճնշող մեծամասնությունը համալրվել է, համապատասխան պաշտոններում նշանակումն իրականացվել է բարեվարքության ստուգման արդյունքներով, դատախազների մեծ մասն անցել է անհրաժեշտ վերապատրաստումներ: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է ձեռնարկել շարունակական քայլեր կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ հսկողությունն ուժեղացնելու, այդ թվում՝ Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացվող մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների կարողությունների շարունակական զարգացման միջոցով:

Հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների ինստիտուցիոնալ հզորացումը պահանջում է նաև Կոմիտեի քննիչների, ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության դատախազների կոռուպցիայի դեմ պայքարի թեմաներով՝ այդ թվում կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության վերաբերյալ մշակված նյութերով, մասնագիտական պատրաստումների և վերապատրաստումների անցկացում, որի համատեքստում ևս շարունակականություն և համակողմանիություն ապահովող կառուցակարգեր պետք է ներդրվեն:

2019-2022 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման արդյունքում ապահովվեց կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի հստակեցումը: Այդուհանդերձ, կոռուպցիոն հանցանքների ցանկի, ինչպես նաև դրանց քննչական ենթակայության առնչությամբ վերջերս մի շարք խնդիրներ են բարձրաձայնվել: Մասնավորապես, որոշ հանցանքների դեպքում հստակ չէ, թե ինչ չափանիշների հիման վրա է եղել դրանց կոռուպցիոն և ոչ կոռուպցիոն դասակարգումը: Բացի այդ, կատարված ուսումնասիրություններով բարձրաձայնվել է նաև այն հարցադրումը, թե արդյոք կոռուպցիոն հանցանքների

ցանկում ներառված հանցանքները սպառիչ են: Ուստի, անհրաժեշտ է իրականացնել կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի վերաբերյալ ուսումնասիրություն, ըստ անհրաժեշտության՝ շրջանակի, քննչական ենթակայության վերաբերյալ կանոնակարգերի վերանայում:

Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության արդյունավետությունը երաշխավորելու համար անհրաժեշտ է դիտարկել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության համապարփակ մեթոդիկայի և ուղեցույցների մշակումը՝ որը կներառի մինչդաստական վարույթի փուլից մինչև դատական քննության փուլը:

Միաժամանակ, նկատի ունենալով հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների գործունեության ոլորտի առանձնահատկությունները և նրանց կողմից քննարկման առարկա դարձվող հարցերի ֆինանսական տարրը՝ անհրաժեշտ է երաշխավորել տնտեսագիտական/ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետների հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների աշխատանքներին ներգրավվելու մեխանիզմի ներդրումը՝ ինչպես Հանրային կառավարման բարեփոխումների (ՀԿԲ) ռազմավարության, այնպես էլ միջազգային տեխնիկական աջակցության ծրագրերի շրջանակներում:

## **ՀԱԿԱԿՈՒՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀՁՈՐԱՅՈՒՄ**

2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում նախատեսվել էր մասնագիտացված դատարանների ստեղծում: Վերոգրյալի հաշվառմամբ 2022 թվականին ձևավորվեց Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանը, Վերաքննիչ դատարանում քննարկվող գործերը սկսեցին քննվել մասնագիտացված դատարանների կողմից, իսկ Վճռաբեկ դատարանում ձևավորվեց Հակակոռուպցիոն պալատը: Միաժամանակ, 2023 թվականի հունիսի 15-ից սկսել է գործել Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը: Չնայած նշյալ դատարանների նոր լինելուն՝ հակակոռուպցիոն միջազգային պարտավորությունների և հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ հզորացման համատեքստում կարևոր է ապահովել հակակոռուպցիոն դատարանների ինստիտուցիոնալ կարողությունների շարունակական զարգացման հնարավորությունը՝ համապատասխան գործեր քննող դատավորների մասնագիտական բարձր պատրաստվածությունը ապահովելու, կոռուպցիոն բնույթի գործերի քննության առանձնահատկությունների, այդ թվում՝ միջազգային առկա ստանդարտների հաշվառմամբ շարունակական հիմունքներով պարբերական վերապատրաստումների անցկացման և այլ եղանակներով:

Բացի այդ, անհրաժեշտ է հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների և դատավորների կողմից քննվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերի առանձնահատկություններով պայմանավորված մեթոդական ուղեցույցների մշակում՝ նկատի ունենալով նշված գործերի առանձնահատուկ բնույթը:



Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ հակակոռուպցիոն մասնագիտացված մարմինների կողմից քննվող գործերի մեծ հատվածը առնչվում են ֆինանսական միջոցների անօրինական տեղաշարժերին, դրանց փոխարկմանն ու օրինականացմանը: Նման պայմաններում ներկայումս ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերը քննող մասնագիտացված ստորաբաժանման շրջանակներում ներգրավվել են տնտեսագիտական ոլորտային մասնագետներ: Սակայն հարկ է նշել, որ նման մշտական մասնագիտական աջակցության կարիք ունեն նաև Կոռուպցիոն գործերի քննություն իրականացնող դատավորները: Ուստի, հարկ է ներդնել ֆինանսական, տնտեսագիտական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետների՝ Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների աշխատանքներին ներգրավվելու մեխանիզմ՝ ինչպես Հանրային կառավարման բարեփոխումների (ՀԿԲ) ռազմավարության, այնպես էլ միջազգային տեխնիկական աջակցության ծրագրերի շրջանակներում:

Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային պարտավորությունների զգալի մասի ցածր գնահատականը պայմանավորված է վիճակագրական տվյալների բացակայությամբ: Մյուս կողմից, տվյալների անբավարար լինելը թույլ չի տալիս վերլուծելու մի շարք ոլորտներում իրականացվող բարեփոխումների արդյունավետությունը, կոռուպցիոն հանցագործությունների առնչությամբ առկա իրավիճակը, գործի քննության ողջ շղթայի վերաբերյալ ամբողջական պատկեր ստանալ և այլն: Միևնույն ժամանակ հարկ է նկատել, որ հակակոռուպցիոն միջազգային պարտավորությունների շրջանակում կոռուպցիոն վիճակագրական առանձին տվյալների ինքնին բացակայությունը հանգեցնում է պարտավորության՝ չկատարված գնահատվելուն: Այս տեսանկյունից հատկապես խնդրահարույց է դատական քննության փուլին առնչվող վիճակագրական տվյալների ոչ ամբողջականությունը և դրանց անհամադրելիությունը մինչդատական քրեական վարույթի փուլում վարվող վիճակագրական տվյալների հետ: Սույն ռազմավարությամբ կարևոր խնդիր է դիտարկվում կոռուպցիոն հանցագործությունների քննության, բացահայտման, դատապարտման, ապօրինի ծագմամբ գույքի վերականգնման և կառավարման վերաբերյալ տվյալների հավաքագրումն ու վերլուծության համակարգի ստեղծումը: Արդյունավետ և փոխլրացնող վիճակագրական համակարգի ներդնումը կբարձրացնի հակակոռուպցիոն կառույցների հաշվետվողականությունը և հանրային վստահությունը՝ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության նկատմամբ: Այս առնչությամբ անհրաժեշտ է ապահովել կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության միասնական կարգի սահմանումը և առկա կառուցակարգերի կատարելագործումը:

## **ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Դատական համակարգում կոռուպցիայի դեմ պայքարը ենթադրում է շարունակական քայլերի իրականացում: ՀՀ կառավարությունը վերջին տարիներին դատաիրավական բարեփոխումների ուղղությամբ էական բարեփոխումներ են իրականացվում՝ օրենսդրական

փոփոխությունների միջոցով կատարելագործելով դատավորների թեկնածուների որակավորման, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, ողջամիտ ժամկետում և պատշաճ արդարադատության իրականացման համար անհրաժեշտ մեխանիզմները: Այդուհանդերձ, դատական համակարգում հակակոռուպցիոն գործիքակազմի զարգացման համար անհրաժեշտ է ստորև նշված միջոցառումների իրականացումը՝ նկատի ունենալով նաև դրանց կարևորությունը միջազգային հակակոռուպցիոն պարտավորությունների համատեքստում:

*Հակակոռուպցիոն դատարանների աշխատակազմերի և դատավորների աշխատակազմի* մրցունակ աշխատավարձի տրամադրումը, անկասկած, դատական համակարգ բարձր կարգի մասնագետների մուտքը խրախուսելու և նրանց անկախությունն ապահովելու տեսանկյունից անկյունաքարային նշանակություն ունի: Ներկայումս դատարանների և դատավորների աշխատակազմերին առաջարկվող վարձատրությունը համարժեք չէ նրանց ծանրաբեռնվածությանը, ինչի հետևանքով ոչ միայն կարող են ստեղծվել կոռուպցիոն ռիսկեր, այլև դատական համակարգը կշարունակի մնալ ոչ գրավիչ: Աշխատավարձերի ոչ բավարար լինելու խնդիրը բարձրացվել է նաև ՏՀԶԿ-ի կողմից: Թեև վերջին տարիներին որոշակի չափով բարձրացվել է դատավորի օգնականի աշխատավարձը, սակայն դատական նիստերի քարտուղարի կամ դատական այլ ծառայողների աշխատավարձերը շարունակում են մնալ ցածր: Ուստի, անհրաժեշտ է վերանայել դատարանների և դատավորների աշխատակազմերի վարձատրության համակարգը՝ կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու, դատական ծառայությունը առավել գրավիչ դարձնելու և որակյալ մասնագետների ներգրավումն ապահովելու նպատակով: Ընդ որում, որդեգրված մոտեցմամբ դատարանների և դատավորների աշխատակազմերի բարձրացումը նախատեսվում է սկսել առաջին ատյանի դատարաններից: Այս միջոցառումների իրականացումը կապահովվի Հանրային կառավարման բարեփոխումների (ՀԿԲ) ռազմավարության «Ռազմավարական նպատակ 4. Հանրային ծառայության մրցունակության բարձրացում» շրջանակներում:

**ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

2020 թվականին ստեղծվել և 2021 թվականին շարունակվել են կատարելագործվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման կառուցակարգերը: Այսպես, Ազգային ժողովի կողմից 2020 թվականի ապրիլի 16-ին ընդունվել էին «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին օրենքները, որից հետո՝ այդ օրենքների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը և անհրաժեշտ այլ իրավական ակտերը:

2020 թվականի սեպտեմբերի 1-ին ՀՀ գլխավոր դատախազի հրամանով նշանակվել էր ՀՀ գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտը

համակարգող տեղակալը, իսկ 2020 թվականի սեպտեմբերի 3-ին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմում ստեղծվել էր պատասխանատու ստորաբաժանում՝ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը: Բացի այդ, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի ընդունմամբ 2022 թվականին կատարելագործվել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առկա գործիքակազմը:

ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունում 2020-2021 թվականներին իրականացվել է 279 ուսումնասիրություն (214 ուսումնասիրություն սկսելու մասին որոշում կայացվել է 2020 թվականի ընթացքում, իսկ 65 որոշում՝ 2021 թվականի ընթացքում):

2022 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունում ստացվել է քրեական գործով 50 նյութ և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալների վերաբերյալ 25 նյութ՝ 84 անձի՝ հնարավոր ապօրինի ծագում ունեցող գույքի պատկանելիության վերաբերյալ: Նշված նյութերով ուսումնասիրություն սկսելու հիմքերի ստուգման արդյունքներով կայացվել է ուսումնասիրություն սկսելու մասին 77 որոշում (9 որոշմամբ ուսումնասիրություն է սկսվել 2021 թվականի տարեվերջին փոխանցված նյութների հիման վրա), իսկ 18 անձի դեպքում կայացվել է ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին 18 որոշում: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում ձեռք բերված տվյալներով նախաձեռնվել է 2 ուսումնասիրություն:

Սկսված ուսումնասիրությունների շրջանակներում բանկային, վարկային, ապահովագրական, առևտրային և (կամ) նոտարական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով ներկայացվել է 134 դիմում, որից 127-ը՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի և 7-ը՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարան: Ներկայացված դիմումներից չի բավարարվել 19-ը, որոնցից 4-ի բողոքարկման արդյունքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից կայացվել է բողոքն ամբողջությամբ բավարարելու վերաբերյալ որոշում: Բողոքարկված մյուս գործով դեռևս դատական ակտ չի կայացվել:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 11 հայցադիմում, իսկ ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ ևս 10 հայցադիմում, որոնք ընդունվել են վարույթ: Ներկայացված բոլոր հայցերը ներկայումս քննվում են ՀՀ հակակոռուպցիոն դատարանում: 2022 թվականին ներկայացված 21 հայցերով (2023 թվականի փետրվարի դրությամբ՝ 29 հայց) բռնագանձման ենթակա գումարի չափը կազմում է շուրջ 52 միլիարդ ՀՀ դրամ, բռնագանձման են ենթակա նաև 296 գույքեր (ստացվել են նշված գույքերի մեծամասնության միջին շուկայական արժեքները, որոնց հանրագումարը շուրջ 34 միլիարդ ՀՀ դրամ է, իրավաբանական անձանց արժեքները գնահատված չեն):

Միջազգային կառույցների և այլ պետությունների հետ համագործակցության ապահովման նպատակով դեռևս 2020 թվականի նոյեմբերից ՀՀ գլխավոր դատախազությունը անդամակցում է CARIN.NETWORK (Camden Asset Recovery Inter-agency Network) միջազգային ոչ

պաշտոնական ցանցին: Անդամակցության շրջանակներում ուղարկվել է թվով 7 հարցում, այդ թվում՝ 2 հարցում՝ Ռուսաստան, մեկական հարցումներ՝ Չեխիա, Սլովակիա, Ֆրանսիա, Հունաստան և Կիպրոս, որոնց արդյունքում ստացվել է թվով 6 պատասխան գրություն: Միաժամանակ, օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել են մի շարք միջազգային հարցումներ՝ Ռումինիայից, Ուկրաինայից, Բելգիայից, Մոլդովայից:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առնչությամբ դատական քննության փուլում ևս ապահովված է մասնագիտացումը՝ հանձինս եռաստիճան հակակոռուպցիոն դատարանների:

Կարևորելով Հայաստանի Հանրապետության կողմից իրականացված ամբողջ վերոշարադրյալ բարեփոխումները՝ ՏՀԶԿ (2022) Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում. Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի պիլոտային մոնիթորինգի 5-րդ փուլի վերաբերյալ զեկույցի դիտարկումներով այդուհանդերձ ուշադրության է արժանացել կոռուպցիոն և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներով ապահովման ենթակա կամ բռնագանձված ակտիվների կառավարման թափանցիկությունն ու կանոնավոր աուդիտի իրականացումը (ցուցիչ 11.5.1): Նշվածի համատեքստում կարևորվում է մի շարք կառուցակարգերի ներդրումը և կատարելագործումը:

Նման պայմաններում անհրաժեշտ է երաշխավորել կոռուպցիոն հանցագործություններով արգելադրված և (կամ) բռնագրավված, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների արդյունքում բռնագանձված գույքի կառավարման կառուցակարգերի կատարելագործումը:

Թեև, ինչպես նշվեց, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտը ներդրված է ներպետական օրենսդրությամբ, կարևորվում է ներդրված կառուցակարգերի շարունակական զարգացումն ու արդիականացումը:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներով արդյունավետությունն ու օպերատիվությունն ապահովելու նպատակով նախատեսվում է ինտեգրված հարթակի գործարկումը, որը կապահովի ակտիվների վերադարձման մասնագետների, հետախուզության ստորաբաժանումների, քննչական և դատախազական մարմինների միջև տեղեկատվության ակտիվ և անվտանգ փոխանակումը: Ծրագրվում է նաև հասանելիության հնարավորության ապահովումը այլ պետական մարմինների տվյալների բազաներին: Ըստ այդմ, նշված և այլ գործողությունների իրականացման միջոցով ակնկալվում է երաշխավորել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի շարունակական կատարելագործումը և արդիականացումը:

Նկատի ունենալով ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձի, շատ դեպքերում կոռուպցիոն հանցագործությունների և դրանց արդյունքում ստացված եկամտի/օգուտի վերադարձին առնչվող հարցերի անդրազգային բնույթը և այդ համատեքստում միջազգային իրավական փոխօգնության կարևորությունը՝ անհրաժեշտ է ապահովել «Միջազգային իրավական փոխօգնության մասին» օրենքի ընդունումը:

Միաժամանակ նշված խնդիրների համատեքստում նկատի ունենալով տարբեր պետություններում առկա կարգավորումների ներդաշնակ չլինելու հիմքով գույքի վերադարձի

հնարավոր մերժման ռիսկերը, ինչպես նաև առանձին պետություններում ապօրինի ծագում ունեցող/կոռուպցիոն հանցագործության արդյունքում ստացված գույքի վերադարձի համար սահմանված առանձին պահանջները՝ կարևոր է նաև իրականացնել առանձին պետություններում առկա կարգավորումների, ինչպես նաև՝ այս հարցերի առնչությամբ միջազգային կազմակերպությունների շրջանակում առկա համագործակցության ձևաչափերի ուսումնասիրություն, մեխանիզմներ ներդնել՝ ներդաշնակեցման ապահովման և գույքի վերադարձի դյուրինության երաշխավորման նպատակով:

Այսպիսով, անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային և անդրազգային հարթությունում կոռուպցիայի հակազդման մեխանիզմների ընդլայնում և արդիականացում, միջազգային փոխօգնության մեխանիզմների կատարելագործում:

## **ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ**

Ազդարարման համակարգի կատարելագործման նպատակով 2022 թվականին կատարվեցին օրենսդրական բարեփոխումներ, որոնք ուղղված էին ազդարարման վարույթի կատարելագործմանը, հանցագործության հատկանիշներ չպարունակող կոռուպցիոն բնույթի դեպքերին ընթացք տալու կարգավորումների նախատեսմանը, ազդարարների պաշտպանության գործիքակազմի կատարելագործմանը, ինչպես նաև ազդարարման վիճակագրական կառուցակարգերի սահմանմանը:

Բացի այդ, «Ազդարարման համակարգի մասին» օրենքով նախատեսվել է ազդարարման տարբեր տեսակների՝ ներքին, արտաքին ազդարարման և հանրությանը ազդարարման տեսակների հստակ առանձնացումը, սակայն դրանց գործնական արդյունավետ կիրառումը բավարար չափով ապահովված չէ: Նշվածը հատկապես ակնառու է ներքին և արտաքին ազդարարման դեպքում, ինչի վառ ապացույցն է ազդարարման համակարգի գործարկումից մինչ օրս ստացված ազդարարման դեպքերի վերաբերյալ վիճակագրությունը: Այսպես.

Պետական մարմիններից ստացված տեղեկատվության համաձայն՝ ազդարարման համակարգի գործարկումից մինչ օրս պետական մարմիններում գրանցվել է ներքին ազդարարման 13 և արտաքին ազդարարման 73 դեպք (Պաշտպանության նախարարությունում՝ 66 արտաքին ազդարարում, 10 ներքին ազդարարում, Արտաքին գործերի նախարարությունում՝ 1 արտաքին ազդարարում, 3 ներքին ազդարարում, Կրթության տեսչական մարմնում՝ 1 արտաքին ազդարարում, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում՝ 1 արտաքին ազդարարում, Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնում՝ 4 արտաքին ազդարարում):

Ընդ որում, արտաքին ազդարարման 11 դեպքով իրավապահ մարմինների կողմից նախաձեռնվել են քրեական վարույթներ: Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ քրեական վարույթների

շրջանակներում 10 անձի պաշտոնավարումը ժամանակավորապես դադարեցվել է, որից 6 անձ ազատվել են զբաղեցրած պաշտոնից:

Բացի այդ, Արտաքին գործերի նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ազդարարումների արդյունքում կատարվել են ծառայողական քննություններ կամ աուդիտ, իսկ մեկ արտաքին ազդարարման դեպքում խնդիրը լուծվել է դատական կարգով (վճռաբեկ դատարանի որոշմամբ), քանի որ այն առնչվել է աշխատանքային հարաբերություններին:

Բացի այդ, անհրաժեշտ է վերանայել հանրությանն ազդարարելուն ուղղված գործող իրավակարգավորումները և համապատասխանեցնել միջազգային, մասնավորապես՝ ՏՀԶԿ ստանդարտներին՝ նախատեսելով առանց ներքին և/կամ արտաքին ազդարարման տեսակները սպառելու հանրությանն ազդարարելու հնարավորություն այն դեպքերում, երբ կոռուպցիոն հակաօրինական արարքը անմիջական կամ ակնհայտ վտանգ է ներկայացնում հանրության համար, կամ երբ առկա է հաշվեհարդարի (վնասակար գործողությունների) վտանգ կամ խախտումը վերացնելու ցածր հավանականություն ազդարարման այլ տեսակներով ազդարարելու դեպքում:

Ազդարարման համակարգի խնդիրներից է նաև այն, որ դեռևս ներդրված չէ ազդարարման խրախուսմանն ուղղված որևէ կառուցակարգ, արդյունավետ չեն ազդարարներին տրվող պաշտպանության մեխանիզմները:

Ազդարարման համակարգի խնդիրներից է նաև ազդարարման հարցերով պատասխանատու անձանց նշանակելու լայն հայեցողության վերապահումը, ազդարարման հարցերով պատասխանատուների վերապատրաստման, մասնագիտական աճի հարցերով վերապատրաստում իրականացնող պատասխանատու կառույցների բացակայությունը:

Բացի այդ՝ չնայած «Ազդարարման համակարգի մասին» օրենքում կատարված վերջին փոփոխություններին, հստակ չեն իրավասու մարմինների դերերը, դրանց բաշխումը, մասնավոր կազմակերպությունների հետ կապված հաղորդումների ներկայացման, դրանց ընթացք տալու առանձնահատկությունները: Այս տեսանկյունից կարևոր է նաև Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ազդարարների իրավունքների պաշտպանությանն ուղղված կազմակերպական կառուցակարգերի, Մարդու իրավունքների պաշտպանին վերապահված՝ ազդարարների պաշտպանությանն ուղղված գործիքակազմի վերանայումը և դրա կատարելագործումը:

Հարկ է նաև նշել, որ «Ազդարարման համակարգի մասին» օրենքով հստակեցված չէ ազդարարման վարույթի իրավական բնույթը, նախատեսված չեն ազդարարման հիման վրա հարուցված վարույթի արդյունքում ընդունվող ակտերին ներկայացվող հիմնական պահանջները, ինչը կարող է բացասաբար ազդել այդ ակտերի պատշաճ հիմնավորված և պատճառաբանված լինելու հանգամանքի վրա, բացի այդ նախատեսված չեն ազդարարման հիման վրա հարուցված վարույթի արդյունքում ընդունված ակտերի բողոքարկման մեխանիզմները:

Ազդարարման համակարգի խնդիրներից է նաև այդ հարցերով վիճակագրության վարելու միասնական կանոնների բացակայությունը, վիճակագրության մեջ ներառվող տվյալների սահմանափակ բնույթը, վիճակագրություն վարողների սահմանափակ շրջանակը:

Իրենց հերթին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ազդարարման համակարգի առումով արձանագրել են այն, որ քաղաքացիները պարզ և մատչելի չեն պատկերացնում ազդարարման հարթակի կարևորությունը, օգտակարությունը, օգտագործման մեխանիզմները: Այս առումով կարևորվել է վստահության մակարդակի բարձրացումը հանրության շրջանում, քանի որ համակարգի վերջնական նպատակը ոչ թե գաղտնի ազդարարումներ ստանալն է, այլ քաղաքացիների վստահության ապահովումը<sup>20</sup>:

Վերը նշված խնդիրների լուծման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի ազդարարման համակարգի ներկա մոդելի վերանայումը՝ հաշվի առնելով ազդարարման տեսակների գործնական կիրառելիությունը ապահովելու անհրաժեշտությունը, զանգվածային լրատվության միջոցներով հանրությանը ազդարարելու հնարավորության իրացման դեպքերի ընդլայնումը: Անհրաժեշտ է նաև ներդնել ազդարարման խթանմանը ուղղված կառուցակարգեր, բարձրացնել ազդարարներին տրվող պաշտպանության երաշխիքների արդյունավետությունը՝ այդ թվում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ազդարարի խախտված իրավունքների պաշտպանության և վերականգնման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկման տեսանկյունից:

Անհրաժեշտ է նաև ազդարարման համակարգի ներկա մոդելի վերանայման արդյունքում անհրաժեշտության դեպքում ապահովել ազդարարման հարցով պատասխանատուների ընտրությունը և նշանակումը մասնագիտական, արժանիքահեն սկզբունքներով ու ընթացակարգերով, ազդարարման հարցերով պատասխանատուների մասնագիտական գործունեության համակարգում և նրանց վերապատրաստման կազմակերպումը: Հարկ է նաև հստակեցնել ազդարարման հարցերով պատասխանատու մարմինների դերերը, մասնավոր ոլորտի այլ կազմակերպությունների շրջանակի, վերջիններիս վերաբերյալ հաղորդումների ներկայացման, դրանց ընթացք տալու առանձնահատկությունները:

Անհրաժեշտ է նաև օրենսդրորեն հստակեցնել ազդարարման վարույթի բնույթը, նախատեսել ազդարարման հիման վրա հարուցված վարույթի արդյունքում ընդունվող ակտերին ներկայացվող հիմնական պահանջները՝ ապահովելով դրանց պատշաճ պատճառաբանվածությունը և հիմնավորվածությունը, նախատեսել ազդարարման վարույթի արդյունքում ընդունվող ակտերի բողոքարկման հնարավորություն, զարգացնել ազդարարման դեպքերի վերաբերյալ վիճակագրություն վարելու համակարգը, կատարելագործել ազդարարման էլեկտրոնային հարթակը՝ ապահովելով նաև հարթակի անհրաժեշտ անվտանգության երաշխիքները:

<sup>20</sup> Տե՛ս ՀՀ հակակոռուպցիան ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի, 2021 թվականին իրականացման ենթակա գործողությունների մշտադիտարկման արդյունքների: Երևան, 2022, Հայաստանի ՔՀԿ-ների Հակակոռուպցիոն Կոալիցիա:

## ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆ

2022 թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտած նոր քրեական օրենսգրքով (20-21-րդ գլուխներով) ներդրվեց իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը: Չնայած ինստիտուտի գործարկումը նոր է, սակայն արդեն իսկ մի շարք մտահոգություններ են ներկայացվել փորձագիտական շրջանակների կողմից: Գործարար համայնքը ևս մտահոգություններ է հայտնում այս առնչությամբ: Այս ինստիտուտի արդյունավետությունը գնահատելու համար անհրաժեշտ է իրականացնել դրա ազդեցության ուսումնասիրություն և վերհանել խնդիրները: Նշվածը հատկապես կարևորվում է արդեն իսկ արձանագրված որոշ խնդիրների համատեքստում: Մասնավորապես, որպես իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության վրա հասնելու նախապայման է սահմանվել հանցանքի կատարումը հատկապես իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի կողմից կամ այդպիսի անձի թողտվությամբ կամ դրդմամբ իրավաբանական անձին ներկայացնող անձի կողմից:

Արդյունքում կարգավորման շրջանակից դուրս են մնացել այն դեպքերը, երբ հանցանքը կատարվել է իրավաբանական անձի նկատմամբ իրական (փաստացի) վերահսկողություն իրականացնող անձանց կողմից: Այս խնդիրը ուշադրության է արժանացել նաև SՀԶԿ (2022) Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում. Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի պիլոտային մոնիթորինգի 5-րդ փուլի վերաբերյալ զեկույցում (ցուցիչ 10.1.2)<sup>21</sup>:

Հիմք ընդունելով նույն զեկույցի դիտարկումները՝ անհրաժեշտ է նաև իրականացնել իրավաբանական անձանց նկատմամբ սանկցիաներ կիրառելիս համաչափության սկզբունքի երաշխավորման առնչությամբ առկա վիճակի գնահատում և ըստ անհրաժեշտության՝ բարեփոխումների իրականացում:

Բացի այդ, առաջարկվում է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի շրջանակում հակակոռուպցիոն խրախուսական կառուցակարգերի սահմանման առնչությամբ ուսումնասիրության իրականացում և ըստ անհրաժեշտության՝ օրենսդրական փոփոխությունների իրականացում:

Այս ինստիտուտի արդյունավետ կիրառությունը երաշխավորելու տեսանկյունից անհրաժեշտ է նաև իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության շրջանակներում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների շրջանակի ուսումնասիրության իրականացում և ըստ անհրաժեշտության՝ հանցագործությունների շրջանակի վերանայում:

<sup>21</sup> [https://www.oecd-ilibrary.org/governance/anti-corruption-reforms-in-armenia\\_e56cafa9-en](https://www.oecd-ilibrary.org/governance/anti-corruption-reforms-in-armenia_e56cafa9-en):



### **ՆՊԱՏԱԿ 3. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

Արդյունավետ հակակոռուպցիոն պայքարի գործում առանցքային նշանակություն ունի հակակոռուպցիոն կրթության և իրազեկման թիրախային քաղաքականության մշակումը և իրականացումը, որը պետք է ուղղված լինի հակակոռուպցիոն բարեփոխումներում հանրային ավելի մեծ ներգրավվածություն և աջակցություն ապահովելուն, հանրության մոտ կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության մշակույթ ձևավորելու կայուն հիմքեր արմատավորելուն:

Հակակոռուպցիոն կրթության և իրազեկման ուղղությամբ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումները պետք է ուղղված լինեն նրան, որ հասարակության յուրաքանչյուր անդամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպաստի իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական կենսագործմանը: Այս տեսանկյունից կարևոր նշանակություն ունի հասարակության շրջանում հակակոռուպցիոն բարեփոխումների նկատմամբ վստահության բարձրացումը, որն իր հերթին, կարող է խթանել կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիների առավել ակտիվ մասնակցությունը:

Ուշադրության է արժանի նաև այն, որ իրականացված ուսումնասիրության արդյունքները<sup>22</sup> վկայում են, որ առկա է անմիջական կապ՝ քաղաքացու կրթական, իրազեկման մակարդակի և կոռուպցիոն դրսևորումները ոչ կոռուպցիոն դրսևորումներից տարանջատելու, կոռուպցիայի նվազեցման ուղղությամբ իրենց կարողությունների նկատմամբ հավատի և պատասխանատվության զգացումի միջև:

Մեկ այլ ուսումնասիրության համաձայն՝ նրանք, ովքեր ունեն ավելի բարձր կրթամակարդակ, ավելի քիչ հանդուրժող են կոռուպցիայի նկատմամբ<sup>23</sup>: Այսինքն՝ գոյություն ունի ուղիղ համեմատական կապ ոչ միայն կրթամակարդակի և կոռուպցիայի դեմ պայքարի կարևորության և պատասխանատվության միջև, այլև՝ հակակոռուպցիոն վարքագծի դրսևորման հավանականության:

### **ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

#### **ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

Հակակոռուպցիոն կրթությունը առանցքային նշանակություն ունի առողջ հասարակության ձևավորման և զարգացման համար հասարակության տարբեր բնագավառների զարգացման ներուժի ամբողջական իրացման տեսանկյունից:

Հակակոռուպցիոն կրթությունը չի կարող հաջողության հասնել երկարաժամկետ հեռանկարում, եթե այն չտարածվի հասարակության լայն շրջանակի մեջ երկրի բոլոր

<sup>22</sup> <https://www.crrc.am/research/armenia-integrity-project-public-perception-of-corruption/>

<sup>23</sup> <https://www.cambridge.org/core/books/abs/quest-for-good-governance/understanding-control-of-corruption/8800D938FE8451FF1252AC0DA735D2F4>

անկյուններում: Վերջինիս ազդեցությունը առավելագույնի հասցնելու համար, չնայած սահմանափակ ռեսուրսներին, առաջնահերթությունը պետք է տրվի այն ոլորտներին, որտեղ կոռուպցիայի առաջացման հավանականությունն ավելի մեծ է կամ դրա հետևանքները ավելի վնասակար են:

2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակում իրականացված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ որոշակի գիտելիքներ տրամադրվում են դպրոցներում, նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչպես նաև պետական և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստման ծրագրերում:

Այսպես, դպրոցներում կոռուպցիայի վերաբերյալ գիտելիքը հիմնականում մատուցվում է «Հասարակագիտություն» առարկայի շրջանակում: 2021-2022 ուսումնական տարվանից ՀՀ բուհերում ներմուծված է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկան, սակայն այն ոչ բոլոր ֆակուլտետներում է դասավանդվում, տարբեր բուհերում առարկայի շրջանակներում ներկայացվող թեմաները միմյանցից էապես տարբերվում են, առկա է ուսումնամեթոդական ձեռնարկների և դիդակտիկ նյութերի կարիք<sup>24</sup>:

Հարկ է նաև նշել, որ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2-4-րդ կուրսերում «Իրավունքի հիմունքներ» առարկայի շրջանակում մշակվել և դասավանդվում են «Կոռուպցիայի իրավական բնութագիրը», «Հակակոռուպցիոն քաղաքականությունը», «Հակակոռուպցիոն երևույթի հասկացությունը», «Կոռուպցիայի պատճառները և հետևանքները ՀՀ-ում» և այլ թեմաներ, իսկ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների 1-3-րդ կուրսերում՝ «Իրավունքի հիմունքներ» առարկայի շրջանակում՝ «Կոռուպցիայի պատճառները և հետևանքները», «Կոռուպցիայի դրսևորումներն և մակարդակները» և այլ թեմաներ<sup>25</sup>:

Այնուամենայնիվ, գլխավոր խնդիրներից է այն, որ պետության կողմից համակարգված քաղաքականություն չի վարվում հակակոռուպցիոն կրթության կազմակերպման, այդ թվում՝ հակակոռուպցիոն կրթության մեթոդաբանության տեսանկյունից:

Միևնույն ժամանակ, բարեվարքության համակարգի ամրապնդման տեսանկյունից կարևոր է նաև բարեվարքության ուսումնասիրության համակարգի վերաբերյալ մոտեցումների ներդրումը կրթական հաստատություններում, որը նպատակ է հետապնդում ապահովել, որպեսզի ուսանողները՝ որպես ապագա պետական պաշտոն զբաղեցնող անձինք՝ լինեն բարեվարքության բաղադրիչները կրողները և պահպանողները:

Բացի այդ՝ կոռուպցիայի նկատմամբ հասարակական անհանդուրժողականության ձևավորման համար անհրաժեշտ է կրթել հասարակությանը՝ վերջինիս պարբերաբար

<sup>24</sup> Տե՛ս 2021թ. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ Ազգային ժողով ներկայացված տարեկան հաղորդում, <http://cpcarmenia.am/files/legislation/657.pdf>

<sup>25</sup> Տե՛ս «ՀՀ 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության 2021 թվականի իրականացման ենթակա գործողությունների մշտադիտարկման արդյունքների զեկույց», Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա:

իրազեկելով ոչ միայն իրականացվող բարեփոխումների մասին, այլև տարբեր միջոցներով հասարակությանը իրազեկել՝ ինչ է կոռուպցիան, ինչպես է այն դրսևորվում, ինչ բացասական հետևանքների կարող է այն հանգեցնել, և հասարակության անդամները ինչ պետք է անեն կոռուպցիան կանխարգելելու, ինչպես նաև դրա բացահայտման հարցում պետությանը օժանդակելու համար:

«Կառավարությունը, իր հերթին, գիտակցելով կոռուպցիայի դեմ պայքարում հանրության ներգրավման անհրաժեշտությունը, գտել է, որ կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականությունը և դրա դեմ պայքարը պետք է դարձնել հասարակության արժեհամակարգի մաս և քաղաքացիների մեջ ձևավորել կոռուպցիան անձնապես մերժելու վարքագիծ<sup>26</sup>: Այս տեսանկյունից կարևոր նշանակություն ունի յուրաքանչյուր անհատի մոտ այն գիտակցության խորը սերմանումը, որ կոռուպցիան պետության թուլացման, անձի սոցիալական վիճակի վատթարացման պատճառներից մեկն է, իսկ յուրաքանչյուր քաղաքացի պետք է գիտակցի իր կարևոր դերը այս գործընթացում և ստանձնի անձական պատասխանատվություն դրա դեմ պայքարելու գործում:

Հակակոռուպցիոն կրթության բնագավառի գլխավոր մարտահրավերներից է հակակոռուպցիոն կրթության կազմակերպման ոլորտում համակարգված և միասնական քաղաքականության վարելու գործունե կառուցակարգերի սահմանումը, կրթական համակարգի բոլոր մակարդակներում հակակոռուպցիոն կրթության որակի և արդյունավետության բարձրացումը:

Իր հերթին, ոչ ֆորմալ կրթության բնագավառի առնչությամբ պետք է արձանագրել, որ դրա կազմակերպման հիմնական բեռը ստանձնել է քաղաքացիական հասարակությունը, սակայն իրականացվող ոչ ֆորմալ կրթական ծրագրերի ծավալը բավարար չէ և չի կարող ցանկալի արդյունք ապահովել: Այս տեսանկյունից կարևորվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների առավել ակտիվ դերակատարումը ոչ ֆորմալ կրթության կազմակերպման հարցում:

Կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական գործառույթի շրջանակում առաջնահերթ է բնակչության կրթումը, կոռուպցիա երևույթի և դրա դեմ պայքարի վերաբերյալ թեմաների ընդգրկումը կրթության պետական ծրագրերում:

Հակակոռուպցիոն կրթության բնագավառում առկա խնդիրներից կարելի է առանձնացնել նաև այն, որ կոռուպցիայի տարբեր ասպեկտների վերաբերյալ առկա նյութերը, դասագրքերը, այլ հրապարակումները մասնագիտական տեսանկյունից պարունակում են բարդ ձևակերպումներ, ինչն իր հերթին խոչընդոտում է հասարակության լայն զանգվածների մոտ կոռուպցիայի՝ որպես խիստ բացասական երևույթի հանդեպ անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ արմատավորելուն:

Ըստ այդմ, անհրաժեշտ է ապահովել շարունակական հակակոռուպցիոն կրթության միասնական մեթոդաբանությունը՝ ընդգրկելով մանկապարտեզ-դպրոց-բուհ-հետբուհական

<sup>26</sup> Տե՛ս «Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը, հասանելի է՝ <https://www.gov.am/files/docs/4586.pdf>

կրթական համակարգ շղթան, հակակոռուպցիոն կրթության իրավակարգավորումները սահմանել մեկ միասնական ակտում, ըստ թիրախային խմբերի հստակ սահմանել հակակոռուպցիոն կրթության ակնկալվող վերջնարդյունքները և դրանց գնահատման չափանիշներն ու մեխանիզմները, երաշխավորել հակակոռուպցիոն կրթության բնագավառի մեթոդական և դիդակտիկ նյութերի առկայությունը, դրանց ներդրումը կրթության տարբեր օղակներում, կատարելագործել առկա առարկայական ծրագրերը, զարգացնել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կարողությունները, ստեղծել հակակոռուպցիոն լաբորատորիաներ, համայնքային հակակոռուպցիոն թեմատիկ կենտրոնների ցանց, աջակցել հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթական ցանցերի ձևավորմանը, զարգացմանը և կենսունակության ապահովմանը՝ համագործակցելով քաղաքացիական հասարակության, ԶԼՄ-ների, հակակոռուպցիոն մարմինների, միջազգային կազմակերպությունների և այլ շահագրգիռ կառույցների հետ՝ որպես բարեփոխումների գործընթացի կարևոր դերակատարներ, ստեղծել հակակոռուպցիոն թեմատիկ գրականության աղբյուրների համար նախատեսված հարթակ, հետևողականորեն զարգացնել քաղաքացիական հասարակության կարողությունները, որպիսի միջոցառումները, այլ միջոցառումների հետ համակցության մեջ կնպաստեն նաև կոռուպցիայի նկատմամբ հանրային ընկալումները փոխելուն և այս բացասական երևույթի հանդեպ անհանդուրժողական վարքագիծ սերմանելուն:

## **ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

2019-2022 թվականների Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման շրջանակներում չնայած նախատեսված են եղել հանրային իրազեկմանն ուղղված միջոցառումներ, սակայն հարկ է նշել, որ դրանք չեն հանգեցրել բոլոր խնդիրների լուծմանը:

Նշվածը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ բավարար ծավալով հանրային իրազեկման արշավներ չեն իրականացվել, որոնց միջոցով հանրությունը կտեղեկացվեր պետության կողմից հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման արդյունավետության, ծառայությունների մատուցման ոլորտում բարեփոխումների, ազդարարման և բողոքարկման մեխանիզմների, պետական մարմինների հետ հարաբերակցվելիս իրենց իրավունքների վերաբերյալ: Որպես առաջնային նպատակ չի դրվել հանրության գիտակցության և վարքագծի փոփոխումը<sup>27</sup>:

<sup>27</sup> Տե՛ս Իրավաբանների հայկական ասոցիացիա «Ձեկույց, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի», Երևան 2022, [https://armla.am/wp-content/uploads/2022/06/%D5%80%D4%BF%D4%BF-%D5%B4%D5%B8%D5%B6%D5%AB%D5%A9%D5%B8%D6%80%D5%AB%D5%B6%D5%A3\\_%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81\\_Final.pdf](https://armla.am/wp-content/uploads/2022/06/%D5%80%D4%BF%D4%BF-%D5%B4%D5%B8%D5%B6%D5%AB%D5%A9%D5%B8%D6%80%D5%AB%D5%B6%D5%A3_%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81_Final.pdf)

2019-2022 թվականների ռազմավարության հիմնական շահագրգիռ կողմերի շրջանում չկա լայն ընկալում առ այն, որ հակակոռուպցիոն քաղաքականության փաստաթղթերը պատշաճ կերպով կատարվում են<sup>28</sup>:

Կարևորելով հանրային իրազեկմանն ուղղված միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը՝ ՀՀ վարչապետի 2022 թվականի N 820-Լ որոշմամբ հաստատվել է կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում հաղորդակցման գործողությունների ծրագիրը<sup>29</sup>, որով նախատեսվել են հաղորդակցման գործողությունների շրջանակը, հաղորդակցման եղանակները և միջոցները, ակնկալվող արդյունքները<sup>30</sup>:

Հաղորդակցման գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացվել են Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների իրականացման ընթացքի և դրա արդյունքում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկման արշավներ հեռուստատեսությամբ, սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում գովազդային տեսահոլովակների հեռարձակման/ցուցադրման, սոցիալական ցանցերում, պաշտոնական կայքերում և զանգվածային լրատվության միջոցներում տեղեկատվական նյութերի հրապարակման միջոցով:

Բացի այդ, իրականացվել են տեղեկատվական արշավներ Կոռուպցիայի կանխարգելման և հակազդման մարմինների գործունեության վերաբերյալ, իրականացվել են վերապատրաստումներ և սեմինարներ գործարար ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով, պետական մարմինների մամուլի քարտուղարների կամ հասարակայնության կապերի մասնագետների և լրագրողների համար կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով, ինչպես նաև տեղեկատվական նյութեր են հրապարակվել Ազդարարման համակարգի և ազդարարման մեխանիզմների, հանրային իրազեկում իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի՝ [www.e-draft.am](http://www.e-draft.am) հարթակի, ինչպես նաև դրանից օգտվելու կանոնների մասին:

Պետք է նշել, որ հանրային իրազեկման արշավները անհրաժեշտ է դարձնել առավել թիրախային՝ ընդգրկելով հասարակության լայն շերտերը, և արդյունքում հասնել նրան, որ հանրությունը համապարփակ տեղեկացվի պետության կողմից հակակոռուպցիոն գործողությունների իրականացման արդյունավետության, ծառայությունների մատուցման ոլորտում բարեփոխումների, ազդարարման և բողոքարկման մեխանիզմների, պետական մարմինների հետ հարաբերակցվելիս իրենց իրավունքների վերաբերյալ:

---

<sup>28</sup> Տե՛ս SՀԶԿ Հակակոռուպցիոն Ստամբուլյան գործողությունների ծրագրի 5-րդ փուլի մոնիթորինգի զեկույց: Հայստան: [Anti-Corruption Reforms in Armenia \(oecd-ilibrary.org\)](https://www.oecd-ilibrary.org/)

<sup>29</sup> Տե՛ս [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/varch/2022/820\\_1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/varch/2022/820_1.pdf)

<sup>30</sup> Վարչապետի 2022 թվականի հուլիսի 18-ի N 820-Լ որոշմամբ հաստատված Կոռուպցիայի դեմ պայքարի հաղորդակցման 2022 թվականի գործողությունների ծրագրի շրջանակում՝ 6 ամսվա կտրվածքով առնվազն 7 և ավելի անգամ հասարակությունը իրազեկվել է հակակոռուպցիոն բարեփոխումների մասին:

Համաձայն ՀՀ-ում «Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի» ուսումնասիրության<sup>31</sup> հարցվածների 44%-ը հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ոչ մի պետական մարմնի և հասարակական կազմակերպության առհասարակ չի ճանաչել: Չկա լայն հասարակական ընկալում, որ ազդարարման ուղիները վստահելի են և արդյունավետ: Հարցվածների կեսից ավելին (51,1%) նշել է, որ չի հայտնի համապատասխան մարմիններին, եթե անձամբ առնչվի կոռուպցիայի հետ: Հարցվողների մեծ մասը համարում է, որ կոռուպցիոն դեպքերի մասին հայտնելու դեպքում քննադատության կարժանանա կամ կկրի այլ բացասական հետևանքներ: Խնդրահարույց է նաև հարցվողների 47,5%-ի մտավախությունն առ այն, որ «սովորական մարդիկ ոչինչ չեն կարող անել կոռուպցիան նվազեցնելու համար»: Առավել մտահոգիչ է քաղաքացիների 63%-ի կարծիքն առ այն, որ կոռուպցիան հնարավոր չէ նվազեցնել կամ հնարավոր է նվազեցնել միայն մասամբ:

Մտահոգիչ են նաև 2021 թվականին իրականացված կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրության արդյունքները, որոնք հանգում են նրան, որ քաղաքացիների 65 տոկոսը տեղյակ չէ, թե ՀՀ-ում որ պետական մարմինները և ՀԿ-ներն են իրականացնում հակակոռուպցիոն գործունեություն: Քաղաքացիների մոտ 70 տոկոսը գտել է, որ ունի տեղեկատվական աջակցության կարիք՝ կոռուպցիայի առնչությամբ իրենց իրավունքների և պարտականությունների, այն հաստատությունների մասին, որոնց կարելի է դիմել պաշտոնյաների կոռուպցիոն վարքի դեպքում, պետական մարմինների թեժ գծի մասին<sup>32</sup>:

«ՀՀ 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության 2021 թվականի իրականացման ենթակա գործողությունների մշտադիտարկման արդյունքների զեկույցի համաձայն հրապարակված տեղեկությունները հիմնականում կատարված աշխատանքների վերաբերյալ մամուլի հաղորդագրություններ են, և ոչ թե հանրային արշավներ, որոնք հանրամատչելի եղանակով քաղաքացիներին կտեղեկացնեն միջոցառումների իրականացման, ծառայությունների մատուցման ոլորտում իրականացված բարեփոխումների, ազդարարման և բողոքարկման մեխանիզմների, պետական մարմնի հետ հարաբերակցվելիս իրենց իրավունքների վերաբերյալ: Պատշաճ պետական համակարգումը և փորձագետների ներգրավումը ևս էական ազդեցություն ունի իրազեկման ուղղված միջոցառումների արդյունավետ իրականացման վրա: Ուստի այս տեսանկյունից կարևորվում է նաև պետության կողմից հստակ քայլերի ձեռնարկումը :

Հակակոռուպցիոն իրազեկման աշխատանքների արդյունավետությունն ապահովելու տեսանկյունից խոչընդոտ է նաև այն, որ լուսաբանման համար օգտագործված միջոցները չեն ապահովում հասարակության լայն շերտերի ներգրավումը, իրազեկումը և տեղեկացվածությունը: Նշված խնդիրների լուծման տեսանկյունից մեծ նշանակություն ունի բոլոր

<sup>31</sup>Տե՛ս Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն, Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, Երևան, 2022

<sup>32</sup> Տե՛ս Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, Երևան, 2022 թվական, էջ 9-10:

հակակոռուպցիոն կառույցների հանրային հաղորդակցության ռազմավարությունների ներդաշնակեցումը, հակակոռուպցիոն ինստիտուտների գործունեության պատշաճ լուսաբանումը, հակակոռուպցիոն հանրային հաղորդակցության և իրազեկման արդյունավետ գործողությունների ծրագրի մշակումը, հաստատումը և դրա հետևողական իրացումը:

Իրազեկման արշավների արդյունավետության տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև սոցիալական մարդաբանների, հասարակագետների, ազգագրագետների և հոգեբանների ներգրավումը, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համատեղ հակակոռուպցիոն հանրային իրազեկման արշավների կազմակերպումը և իրականացումը

Անհրաժեշտ է նաև կատարելագործել իրազեկման մեխանիզմները, դարձնել առավել թիրախային, իրականացնել իրազեկումներ և վերապատրաստումներ ըստ տարբեր խմբերի, պատրաստել և կիրառել սոցիալական թիրախավորված գովազդներ:

Հանրային իրազեկման արշավների տեսանկյունից հասարակության լայն զանգվածներին անհրաժեշտ տեղեկությունները փոխանցելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունի հանրային հեռարձակողների հետ սերտ համագործակցությունը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ հանրային հեռարձակողները պարտավոր են սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնք ուղղված են բնակչության իրավագիտակցության, սոցիալական պատասխանատվության բարձրացմանը:

Բացի այդ, անհրաժեշտ է ապահովել կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունների պարբերաբար ստացումը և դրանց միջոցով հանրային իրազեկման ծրագրերի արդյունքների պարբերական գնահատման համակարգի ձևավորումը:

## ՆՊԱՏԱԿ 4. ԳՈՐԾԱՐԱՐ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԲԻԶՆԵՍ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՅՈՒՐԱՑՈՒՄ

Համապարփակ և բազմակողմանի հակակոռուպցիոն պայքարն անհնար է առանց մասնավոր (գործարար) հատվածի ներգրավման: Կառավարությունները միայն սեփական ջանքերով չեն կարող իրագործել համակարգային փոփոխություններ, իսկ մասնավոր հատվածն ունի բիզնես հետաքրքրություն երկրում թափանցիկության բարձրացման և կոռուպցիայի պատճառով ձևավորվող անարդյունավետության կրճատման հարցում<sup>33</sup>:

Գործնականում անհնար է համապարփակ և արդյունավետ հակակոռուպցիոն պայքար մղել առանց մասնավոր հատվածում կոռուպցիայի դեմ պայքար մղելու: Պատահական չէ, որ Կոռուպցիայի ընկալման համաթվով բավական բարձր դիրքեր գրավող երկրներում<sup>34</sup>, մասնավոր հատվածում կոռուպցիայի դեմ պայքարն իրականացվում է ավելի մեծ չափերով և նոր թափ է հավաքում:

Հարկ է նշել նաև, որ «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայում ևս ընդգծվում է մասնավոր հատվածում հակակոռուպցիոն կառուցակարգերի և մեխանիզմների ներդրման կարևորությունը:

Այսպես, Կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է միջոցներ ձեռնարկի մասնավոր հատվածում կոռուպցիայի կանխարգելման, մասնավոր հատվածում հաշվապահական հաշվառման ստանդարտների և աուդիտի ուժեղացման և, համապատասխան դեպքերում, այդպիսի միջոցների չափապանման համար արդյունավետ, համաչափ և զսպող ներգործություն ունեցող քաղաքացիաիրավական, վարչական կամ քրեական պատժամիջոցների սահմանման ուղղությամբ»: Կոնվենցիան այնուհետև պարզաբանում է այդ նպատակներին հասնելուն ուղղված միջոցները, որոնք, *inter alia*, կարող են ներառել.

<sup>33</sup>Տե՛ս Report of the Expert Advisory Group on Anti-Corruption, Transparency, and Integrity in Latin America and the Caribbean. Authors: Eduardo Engel, Delia Ferreira Rubio, Daniel Kaufmann, Armando Lara Yaffar, Jorge Londoño Saldarriaga, Beth Simone Noveck, Mark Pieth, and Susan Rose-Ackerman. 2018 Inter-American Development Bank, էջ 22:

<sup>34</sup> Տե՛ս Սինգապուրի Կոռուպցիոն գործողությունների հետաքննման բյուրոյի 2020 թ.-ի տարեկան զեկույցը, որում նշվում է որ 2020 թ.-ին հետաքննման համար ստացված գործերի մեծամասնությունը (86%) ստացվել է մասնավոր հատվածից և այդ գործերի միայն 9 տոկոսն է, որ վերաբերվել է հանրային հատվածի աշխատակիցներին:  
([https://www.cpib.gov.sg/files/research%20room\\_%20Annual%20Corruption%20Stats%202020%20Press%20Release.pdf](https://www.cpib.gov.sg/files/research%20room_%20Annual%20Corruption%20Stats%202020%20Press%20Release.pdf) էջ 4) Միացյալ Թագավորության 2017-2022 թթ. հակակոռուպցիոն ռազմավարությունն ունի 6 առաջնահերթություններ, որոնցից 2-ը, 3-րդը, 4-րդը և 5-րդն անմիջականորեն վերաբերվում են մասնավոր հատվածին  
([https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment\\_data/file/667221/6\\_3323\\_Anti-Corruption\\_Strategy\\_WEB.pdf](https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/667221/6_3323_Anti-Corruption_Strategy_WEB.pdf) ) Ֆրանսիայի «Թափանցիկության, կոռուպցիայի դեմ պայքարի և տնտեսական մոդերնիզացիայի 2016-1691» (Sapin II) օրենքը հստակ պահանջում է Ֆրանսիայի հակակոռուպցիոն մարմնից պատրաստել ուղեցույց թե՛ հանրային և թե՛ մասնավոր հատվածի համար կանխարգելելու կաշառակերությունը, ազդեցության չարաշահումը, շորթումը, ֆավորիտիզմն և այլն:  
(<https://www.legifrance.gouv.fr/jorf/id/JORFTEXT000033558528/>)



ա) իրավապահ մարմինների և համապատասխան մասնավոր կազմակերպությունների միջև համագործակցության խրախուսումը,

բ) համապատասխան մասնավոր կազմակերպությունների աշխատանքում բարեխղճության ապահովման համար նախատեսված ստանդարտների և ընթացակարգերի մշակման խրախուսումը,

գ) մասնավոր կազմակերպությունների գործունեության թափանցիկության խրախուսումը,

դ) մասնավոր կազմակերպությունների գործունեությունը կարգավորող ընթացակարգերի չարաշահումների կանխարգելումը,

ե) շահերի բախումների առաջացման կանխարգելումը,

զ) ապահովումը, որ մասնավոր կազմակերպությունները, իրենց կառուցվածքը և մեծությունը հաշվի առնելով, ունենան ներքին աուդիտորական վերահսկողության բավարար մեխանիզմներ:

ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» Հայաստանի գնահատման շրջանակներում ևս առաջարկվել է անհրաժեշտ ջանքեր գործադրել մասնավոր հատվածում կոռուպցիայի կանխարգելման, հակակոռուպցիոն կառուցակարգերի ամրապնդման և ներդրման ուղղությամբ:<sup>35</sup>

Նույն կոնվենցիայի 9-րդ հոդվածը պարտավորեցնում է Կոնվենցիան վավերացրած պետություններին ստեղծել հանրային գնումների պատշաճ համակարգեր համար, որոնք հիմնվում են թափանցիկության, մրցակցության և որոշումների ընդունման օբյեկտիվ չափանիշների վրա, համապատասխան միջոցներ ձեռնարկի պետական ֆինանսների կառավարման թափանցիկությանը և հաշվետվությանը նպաստելու ուղղությամբ:

Միաժամանակ, ՏՀԶԿ-ի 5-րդ փուլի գնահատման պիլոտային զեկույցը<sup>36</sup> նույնպես անդրադարձ է կատարում մասնավոր ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի կառուցակարգերի ամրապնդմանն ու կատարելագործմանը: Մասնավորապես, զեկույցում նշվում է, որ մասնավոր հատվածում բարեվարքությունը դեռևս ամբողջապես ներառված չէ Հայաստանի կառավարության հակակոռուպցիոն օրակարգում, Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը թարմացված չէ, ինչը հնարավորություն չի ընձեռում ներդնել առավել համապարփակ կորպորատիվ կառավարման մշակույթ, առկա են ոչ բավարար խրախուսական մեխանիզմներ մասնավոր հատվածում բարեվարքությունն ամրապնդելու ուղղությամբ, իսկ գործող ինստիտուցիոնալ կառուցակարգերը բավարար չեն լիարժեքորեն և արդյունավետորեն պաշտպանել բիզնես համայնքի շահերը:

Ընդհանուր առմամբ, գործարարներին կոռուպցիայի դեմ պայքարում ներգրավելը, մասնավոր ոլորտի համար հակակոռուպցիոն միջոցառումների իրականացումը հակակոռուպցիոն քաղաքականության կարևորագույն ուղղություններից են:

<sup>35</sup> Տե՛ս [https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/ImplementationReviewGroup/14-18June2021/CAC-COSP-IRG-II-3-1-ADD.3/V2102056\\_E.pdf](https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/ImplementationReviewGroup/14-18June2021/CAC-COSP-IRG-II-3-1-ADD.3/V2102056_E.pdf)

<sup>36</sup> Տե՛ս ՏՀԶԿ Հակակոռուպցիոն Ստամբուլյան գործողությունների ծրագրի 5-րդ փուլի մոնիթորինգի զեկույց: Հայաստան: [Anti-Corruption Reforms in Armenia \(oecd-ilibrary.org\)](https://www.oecd-ilibrary.org/anti-corruption-reforms-in-armenia)

Այս առումով, 2019-2022 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող Գործողությունների ծրագրում ներառվեցին մասնավոր հատվածում հակակոռուպցիոն կառուցակարգերի և մեխանիզմների ներդրման որոշ միջոցառումներ, որոնք առավելապես վերաբերում էին գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունման խթանմանը, գնումների ոլորտի կատարելագործմանը, իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրմանը, տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի վերաբերյալ օրենսդրության կատարելագործմանը:

Հիմք ընդունելով նախորդ Ռազմավարության մոնիթորինգի և գնահատման արդյունքները<sup>37</sup> կարելի է եզրակացնել, որ բավարար առաջընթաց է գրանցվել.

1) Գնումների օրենսդրության ոլորտի կատարելագործման ուղղությամբ, մասնավորապես, 2022 թ. հունվարի 21-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են գնումների ոլորտի օրենսդրության բարելավմանն ուղղված օրենսդրական ակտերը, որոնց նպատակն էր վերափոխել գնումների բողոքարկման համակարգը՝ հաշվի առնելով նաև Առևտրի Համաշխարհային Կազմակերպության պետական գնումների համաձայնագրով և ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ-ով ՀՀ կողմից ստանձնված պարտավորությունների պահանջները:

2) Իրավաբանական անձանց իրական շահառուների ինստիտուտի ներդրման և ՀՀ-ում գործող բոլոր իրավաբանական անձանց համար իրական շահառուների բացահայտման պարտադիր պահանջի ամրագրմամբ:

3) Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի վերաբերյալ օրենսդրության կատարելագործման ուղղությամբ, մասնավորապես, 2021 թվականին փոփոխություններ են կատարվել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում և հարակից օրենքներում, ինչի արդյունքում, ի թիվս այլնի, բարելավվել են ընթացակարգերը, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը հզորացվել է հակամրցակցային համաձայնություններ և պաշտոնատար անձանց/պետական մարմինների հակամրցակցային գործունեությունը բացահայտելու գործառույթի իրականացման առնչությամբ: Զուգահեռաբար նոր Քրեական օրենսգրքի շրջանակում լրացվել են տնտեսական մրցակցության բնագավառում հանցագործությունների, ներառյալ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների հանցակազմերը:

4) Ձևավորվել է Բիզնես բարեվարքության ակումբը<sup>38</sup>, որի շրջանակներում շուրջ 22 ընկերություններում ներդրվել են հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր:

Մասնակի կամ ոչ բավարար առաջընթաց է գրանցվել.

1) Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունման խթանման ուղղությամբ, մասնավորապես, չի ընդունվել կամ հաստատվել

<sup>37</sup> <https://moj.am/page/583>

<sup>38</sup> Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի կողմից ձևավորված և առաջնորդվող Բիզնեսի բարեվարքության ակումբի առաքելությունն է բարեվարքության մշակույթի միջոցով բարելավել Հայաստանի գործարար միջավայրը: Վերջինիս նպատակն է բարձրացնել Հայաստանի գործարար միջավայրի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, վստահությունը երկրի տնտեսական համակարգի նկատմամբ և աջակցել տնտեսության երկարաժամկետ, համբերատար ու կառուցողական ներդրումների ներգրավմանը, նպաստել գործարար հատվածի կենսունակությանը: Բիզնեսի բարեվարքության ակումբի շրջանակներում շուրջ 22 ընկերություններում ներդրվել են հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր:

«Կորպորատիվ կառավարման կանոնագրքի» նախագիծը, պետական աջակցության ծրագրով հակակոռուպցիոն համապատասխանության առկայությունը՝ որպես առավելություն տվող չափանիշի սահմանմանն ուղղված իրավական ակտի նախագիծը: Կարելի է եզրակացնել, որ մասնավոր ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված միջոցառումները մնացել են անավարտ, այդ ոլորտում արդյունավետ հակակոռուպցիոն կառուցակարգեր ներդրված չեն:

Միջազգային պարտավորությունների կատարման մոնիթորինգի արդյունքները վկայում են, որ ՏՀԶԿ 5-րդ գնահատման փուլի պիլոտային գնահատման արդյունքներով՝ «գործարար բարեվարքություն» կատարողականի ուղղությամբ ՀՀ կողմից ստանձնված պարտավորությունները շուրջ 90%-ով կատարված չեն:

ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիա»-ի պարտավորությունների գնահատման 2021 թվականի արդյունքներով՝ գործարար ոլորտում հակակոռուպցիոն բարեփոխումները շարունակում են մնալ ոչ բավարար: ԱՄՆ պետական դեպարտամենտի ամենամյա ՀՀ ներդրումային միջավայրի վերաբերյալ զեկույցների<sup>39</sup> համաձայն ևս՝ ՀՀ-ում գործարար ոլորտի և ներդրումային միջավայրի վրա շարունակում է բացասական ազդեցություն ունենալ կոռուպցիան և այդ ոլորտում դրա դեմ ոչ բավարար պայքարը:

2023-2026 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության մշակման շրջանակում հավաքված կարիքների, ներկայացված խնդիրների, ԱՄՆ կառավարության Մասնավոր ձեռնարկատիրության միջազգային կենտրոնի աջակցությամբ իրականացված գործարար ոլորտում կոռուպցիոն ռիսկերի և խնդիրների ուսումնասիրության<sup>40</sup> ամփոփումից ևս պարզ է դառնում, որ գործարար/մասնավոր ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի կառուցակարգերի և մեխանիզմների ներդրումն ու կատարելագործումը տվյալ պահին անհրաժեշտություն են, որի իրագործման նպատակով անհրաժեշտ է թիրախային և համալիր միջոցառումների ապահովում՝ զուգորդելով և համակցելով կոռուպցիայի կանխարգելման, հակազդման, հակակոռուպցիոն կրթության և իրազեկման գործիքակազմերը:

Գործարար բարեվարքությունը, գործարար իրավունքների պաշտպանությունը և պետություն-բիզնես վարչարարության դյուրացումը որպես ռազմավարական նպատակ սահմանելը, վառ ապացույց է առ այն, որ Կառավարությունը հետևողական է իր միջազգային պարտավորությունների կատարմանը, մեծապես կարևորում է միջազգային զեկույցներում իր ցուցանիշների բարելավումը, առանձնակի շեշտադրում է ներդրումային բարենպաստ միջավայր ունենալու իր բարձր կամքը՝ գործուն քայլեր ձեռնարկելով դրա ապահովման համար անհրաժեշտ հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացման ուղղությամբ, գործուն միջոցներ է ձեռնարկում տնտեսական գործունեության զարգացման հարցում՝ արմատախիլ անելով դրան խոչընդոտող կոռուպցիոն արատավոր երևույթները:

<sup>39</sup> <https://www.state.gov/reports/2022-investment-climate-statements/armenia/>

<sup>40</sup> Ուսումնասիրությունն իրականացվել է 2023 թ. ապրիլին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հետ համագործակցությամբ ԸԴՎԱՅՁ խորհրդատվական ընկերության կողմից՝ Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի (CIPE) «ՀՀ-ում մասնավոր հատվածին հանրային ծառայությունների մատուցման բնագավառում կոռուպցիոն ռիսկերի գնահատման» առաջադրանքի շրջանակներում

Վարչարարության նվազեցման ուղղությամբ միջոցառումները իրականացվելու են նույն ոլորտում Հանրային կառավարման բարեփոխումների (ՀԿԲ) ռազմավարության շրջանակներում նախատեսված միջոցառումների հետ փոխլրացմամբ:

## **ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

### **ԳՈՐԾԱՐԱՐ ՈԼՈՐՏՈՒՄ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ**

Գործարար ոլորտում կոռուպցիայի կանխարգելման առանցքային միջոցը հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրերի և կառուցակարգերի ներդրումն ու դրանց կիրառումը խրախուսելն է:

Համապատասխանությունը (compliance) լայն հայեցակարգ է, որը գործարարության համատեքստում վերաբերում է բազմաթիվ առանցքային ոլորտների՝ ներառյալ կոռուպցիայի դեմ պայքարի, ազգային և միջազգային օրենքներին, կանոնակարգերին, կանոններին և սկզբունքներին հետևելուն<sup>41</sup>:

Համապատասխանությունը դուրս է գալիս օրենսդրական պահանջների շրջանակից, քանի որ դա արտացոլում է ընկերության կորպորատիվ մշակույթը՝ ընդունելի արժեքների, հարաբերությունների, նպատակների և գործելաոճի ամբողջությունը, որը խթանում է էթիկական վարքագիծը ընկերության նպատակների իրագործմանն ուղղված գործունեությունն իրականացնելիս: Բացի էթիկական բնույթի նկատառումներից՝ բոլոր ընկերությունների համար գոյություն ունեն հակակոռուպցիոն լուրջ տնտեսական փաստարկներ, սակայն դրանք հատկապես գրավիչ են դարձնում զարգացող և ձևավորվող շուկաների միջին մեծության ընկերություններին ոչ միայն իր երկրի ներսում, այլև խոշորներ ընկերությունների համար, որոնք համաշխարհային մասշտաբով փնտրում են իրենց գործունեությունն ընդլայնելու հնարավորություններ: Հակակոռուպցիոն միջոցառումներն ընդհանուր առմամբ հանգեցնում են կառավարման բարելավման, քանի որ ընկերությունները դադարում են հաշտվել երկակի ստանդարտների, ոչ թափանցիկ բիզնես որոշումների և աշխատակիցների ռիսկային վարվելակերպի հետ:

Հակակոռուպցիոն համապատասխանության ներդրման շրջանակներում որոշակի, սակայն ոչ բավարար քայլեր իրականացվել են նախորդ 3 տարիների ընթացքում: Այս կապակցությամբ, առաջարկվում է ապահովել ՏՀԶԿ G20-ի<sup>42</sup> հակակոռուպցիոն պահանջներին

<sup>41</sup>Տե՛ս [chrome-extension://efaidnbmnnnibpcajpcgiclfndmkaj/https://47-1548.s.cdn13.com/wp-content/uploads/2022/01/anti-corruption-compliance\\_guidebook-in-armenian.pdf?download=false](https://efaidnbmnnnibpcajpcgiclfndmkaj/https://47-1548.s.cdn13.com/wp-content/uploads/2022/01/anti-corruption-compliance_guidebook-in-armenian.pdf?download=false)

<sup>42</sup> Տե՛ս [chrome-extension://efaidnbmnnnibpcajpcgiclfndmkaj/https://corpgov.am/wp-content/uploads/2021/09/g20\\_oecd-principles-of-corporate-governance-arm.pdf?download=false](https://corpgov.am/wp-content/uploads/2021/09/g20_oecd-principles-of-corporate-governance-arm.pdf?download=false):

Սկզբունքները կոչված են աջակցելու կորպորատիվ կառավարման իրավական, կարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակների գնահատման և կատարելագործման հարցում քաղաքականություն մշակող պատասխանատու անձանց՝ նպատակ ունենալով ապահովելու տնտեսական արդյունավետություն, կայուն աճ և ֆինանսական

համապատասխան Կորպորատիվ կառավարման նոր կանոնագրքի ընդունումը, դրա կիրառման վերահսկողության մեխանիզմների սահմանումը, և վերջինիս կիրառումը խրախուսելու նպատակով միջոցառումների իրականացումը: Կանոնագիրքը պետք է ներառի նաև մոնիթորինգի, հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմներ: Կանոնագրքի իրացման շրջանակներում անհրաժեշտ է, որ պետությունը ձևավորի անհրաժեշտ կառուցակարգեր՝ խրախուսելու մասնավոր ոլորտի ներկայացուցիչների կողմից այդ կառուցակարգերը ներդնելուն և սահմանելու վերահսկողության մեխանիզմներ:

Միաժամանակ, անհրաժեշտ է ապահովել պետական և համայնքային առևտրային կազմակերպություններում, բորսայում գրանցված թողարկող կազմակերպություններում հակա-կոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերի սահմանումը<sup>43</sup>, որը պետք է կրի իմպերատիվ բնույթ: Վերջիններիս համար առաջարկվում է նոր կորպորատիվ կառավարման կանոնագրքի կիրառումը սահմանել որպես պարտադիր պահանջ:

Ջուզահեռաբար, առաջարկվում է նաև իրականացնել գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ներդրումը և հավաքական գործողությունները խթանող իրազեկման արշավներ, նախաձեռնություններ և վերապատրաստումներ՝ մասնագիտացված ՔՀԿ-ների հետ (գործարար շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններ և գործարար անդամակցությամբ զբաղվող կազմակերպությունները) համագործակցությամբ:

Միջազգային կազմակերպությունների կողմից մշտապես բարձրաձայնվել է նաև պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգերի ներդրման անհրաժեշտությունը<sup>44</sup>: Այս տեսանկյունից անհրաժեշտ է սահմանել ինչպես օրենսդրական, այնպես էլ ինստիտուցիոնալ կառուցակարգեր՝ ապահովելու ռիսկերի կառավարման և գնահատման գործընթացի արդյունավետությունը:

Ջուզահեռաբար, առաջարկվում է նաև շարունակաբար կատարելագործել պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների տնօրենի և խորհրդի անդամների թափանցիկ, արժանիքահեն նշանակման, խորհրդի անդամների անկախության չափորոշիչները, ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվողականության և թափանցիկության, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերը, տարեկան արտաքին աուդիտի ենթարկվելու և հրապարակման պահանջները:

Առանձնապես կարևորվում է նաև պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի կառավարման և գնահատման համակարգերի ներդրման գործընթացը: Այս համատեքստում, անհրաժեշտ է ուժեղացնել

---

կայունություն: Սա հիմնականում իրագործվում է բաժ նետերերին, տնօրենների խորհրդի և գործադիր մարմնի անդամներին, ինչպես նաև ֆինանսական միջնորդներին և ծառայություններ մատուցողներին անհրաժեշտ խթաններ տրամադրելու միջոցով, որպեսզի «զսպումների և հա կակշիռների» համակարգի շրջանակում նրանք կատարեն իրենց հատկացված դերը:

<sup>43</sup> Այս պահանջն ամրագրված է նաև ՏՀԿ 5-րդ փուլի գնահատման պիլոտային զեկույցում:

<sup>44</sup> Այս պահանջն ամրագրված է նաև ՏՀԿ 5-րդ փուլի գնահատման պիլոտային զեկույցում:

ինստիտուցիոնալ կառուցակարգերը՝ ԿԿՀ-ին վերապահելով նաև նշյալ կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության մշակման և հաստատման, մասնագիտական աջակցության տրամադրման իրավասությունները և անհրաժեշտ գործիքակազմերը:

## ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մասնավոր հատվածում գործարարների իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմների առկայության պահանջն ամրագրված է ՏՀԶԿ 5-րդ փուլի գնահատման պիլոտային զեկույցում, ինչպես նաև բազմիցս մատնանշվել է բիզնես համայնքի կողմից տարբեր ուսումնասիրությունների և հարցումների ընթացքում:

Բիզնես համայնքի և ՀԿ սեկտորի ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպված մի շարք քննարկումների ընթացքում բարձրաձայնվել է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ինստիտուցիոնալ հզորացման կարևորությունը՝ մասնավոր հատվածի և պետական մարմինների միջև հարաբերություններում գործարարների իրավունքների պաշտպանության համատեքստում: Այս առումով կարևորվել է ՄԻՊ աշխատակազմում առանձին ստորաբաժանման կարողությունների զարգացումը՝ կազմակերպելով վերապատրաստման դասընթացներ, ճանաչողական այցեր և փորձի փոխանակումներ:

Մի շարք ուսումնասիրություններ և միջազգային կառույցներ իրենց զեկույցներում բարձրաձայնում են, որ բիզնես համայնքը չունի բավարար իրազեկվածության մակարդակ իրենց իրավունքների արդյունավետ միջոցների և մեխանիզմների պաշտպանության վերաբերյալ:

2023 թ. ապրիլին «ՀՀ-ում մասնավոր հատվածին հանրային ծառայությունների մատուցման բնագավառում կոռուպցիոն ռիսկերի գնահատման» արդյունքները<sup>45</sup> վկայում են այն մասին, որ բիզնես համայնքը բավարար չափով տեղեկացված չէ առկա հակակոռուպցիոն մեխանիզմների, ինչպես նաև իրենց իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցների մասին: Այս առումով նշվել է, որ առկա մեխանիզմները (e-draft համակարգ, ոչ կանոնավոր հանրային քննարկումներ) բավարար չեն ու պետությունը պետք է ակտիվ աշխատանք տանի հատկապես հետևյալ երկու ուղղություններով՝ բիզնես ասոցիացիաների հետ ակտիվ աշխատանք և մասնավոր հատվածի իրազեկում նախատեսվող ու իրականացվող միջոցառումների (ներառյալ՝ օրենսդրական բարեփոխումները), դրանց պատճառների, նպատակների ու ընթացքի մասին: Այս համատեքստում, առաջարկվում է կազմակերպել և իրականացնել իրազեկվածության բարձրացման միջոցառումներ բիզնես համայնքի շրջանում՝ իրենց իրավունքների արդյունավետ միջոցների պաշտպանության և հակակոռուպցիոն մեխանիզմների վերաբերյալ:

Միջազգային պրակտիկայում տարածված է այն մոտեցումը, համաձայն որի՝ կոռուպցիայի կանխարգելմամբ զբաղվող մարմիններին վերապահված է գործարար ոլորտում կոռուպցիայի

<sup>45</sup> Տե՛ս «ՀՀ-ում մասնավոր հատվածին հանրային ծառայությունների մատուցման բնագավառում կոռուպցիոն ռիսկերի գնահատում» ուսումնասիրությունը, կիրառարակվի շուտով:

կանխարգելման գործառույթ, որն իրականացվում է մարմնի համապատասխան ստորաբաժանման կամ անհրաժեշտ թվով մասնագետների միջոցով: Միաժամանակ, այդ մարմիններին է վերապահված նաև գործարար հատվածի հետ համագործակցության շրջանակներում խորհրդապահական<sup>46</sup> հանդիպումների իրականացման գործիքակազմը՝ միտված կոռուպցիոն ռիսկերի գնահատմանը և բարեփոխման առաջարկությունների ներկայացմանը թիրախ ոլորտներում: Այս համատեքստում, առաջարկվում է շարունակաբար հզորացնել ԿԿՀ-ի կարողությունները:

## **ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԲԱՅԱՀԱՅՏՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

Իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտումը կոռուպցիայի դեմ պայքարի կարևորագույն գործիքներից է, որի նպատակը փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, հարկերից խուսափման, կոռուպցիոն սխեմաների կիրառման կանխարգելումը և հանցավոր գործունեության դեպքերի բացահայտումն է: ՀՀ-ում իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտման ինստիտուտը ներդրվել է 2008 թվականին «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով՝ համաձայն Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի հանձնարարականների պահանջների:

2017 թվականից ի վեր, մասնավորապես՝ Բաց կառավարման գործընկերության և Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության շրջանակներում միջազգային պարտավորությունների իրականացման շնորհիվ, Հայաստանի Հանրապետությունը զգալի առաջընթաց է գրանցել իրական շահառուների թափանցիկության ապահովման և հանրային կենտրոնացված ռեգիստրի ստեղծման գործում:

2019 թվականին սահմանվել են Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտում ընդերքօգտագործման իրավունք ունեցող կամ ընդերքօգտագործման իրավունքի համար դիմող ընկերությունների իրական շահառուների (սեփականատերերի) վերաբերյալ տվյալների ներկայացման և հրապարակման իրավական կարգավորումները:

2020 թվականից իրավաբանական անձանց պետական ռեգիստրի առցանց հարթակում հրապարակվում են այդ կազմակերպությունների իրական շահառուների (սեփականատերերի) վերաբերյալ հայտարարագրերը: 2021 թվականի օրենսդրական փոփոխությունների

---

<sup>46</sup> Միջազգային փորձում տարածված է այն պրակտիկան, երբ կոռուպցիայի կանխարգելմամբ զբաղվող մարմինները խորհրդապահական հիմունքներով քննարկումներ են ունենում գործարար ոլորտի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում վերջիններս անկաշկանդ բարձրաձայնում են նեղ ոլորտային կոռուպցիոն սխեմաների և այլ խնդիրների մասին, օրինակ՝ հարկային, մաքսային, պետական գնումներ, լիցենզիաներ և թույլտվություններ, քանի որ ստացված տեղեկություններն օգտագործվում են ոչ թե քրեական պատասխանատվություն կիրառելու, այլ՝ խնդիրները վերհանելու նպատակով: Այս պարագայում գործարարները չեն ունենում գործնական հարաբերությունները վատթարացնելու մտավախություն, իսկ կոռուպցիայի կանխարգելմամբ զբաղվող մարմինները, որի արդյունքում նաև՝ ոլորտային քաղաքականություն մշակող մարմինները հնարավորություն են ունենում առաջին ձեռքից ստանալ խնդիրների վերաբերյալ տեղեկություններ:

արդյունքում ընդլայնվել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող սուբյեկտների շրջանակը՝ ներառելով հանրային ծառայությունների ոլորտում գործունեություն իրականացնող, ինչպես նաև տեսալսողական և մեդիա ծառայություն մատուցող իրավաբանական անձանց: 2023 թվականից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերի ներկայացման պահանջը տարածվում է բոլոր իրավաբանական անձանց վրա:

2021 թվականից գործարկվել է իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգը, ընդ որում, ՀՀ-ում իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգի ստեղծման հիմքում դրել է Open Ownership միջազգային կազմակերպության կողմից մշակված «Իրական շահառուների տվյալների ստանդարտը» (BODS), որը սահմանում է տվյալների հավաքագրման ու հրապարակման տեխնիկական բնութագրիչները:

Տեխնիկական հնարավորությունների սահմաններում ապահովվել է տվյալների շտեմարանների փոխգործելիությունը իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգի և բնակչության ռեգիստրի հետ: 2019 թվականից Հայաստանը ներգրավվել է ԲԿԳ «Իրական շահառուների առաջնորդների խմբում»:

Չնայած իրական շահառուների ոլորտում ձեռնարկված բարեփոխումներին, հարկ է նշել, որ թե՛ օրենսդրական, թե՛ գործնական մակարդակով դեռևս ապահովված չեն իրական շահառուների բացահայտման ինստիտուտի արդյունավետ գործարկման համար անհրաժեշտ բոլոր մեխանիզմները:

Չնայած իրական շահառուների ոլորտում առկա առաջընթացին՝ պետք է նշել, որ բացակայում են իրական շահառուների վերաբերյալ ներկայացվող տեղեկությունների արժանահավատության ստուգման արդյունավետ մեխանիզմները, ներդրված չեն իրական շահառուների հայտարարագրման պարտականություն կրող իրավաբանական անձանց ռիսկայնության որոշման հստակ մեթոդաբանություն, տեխնիկական կանոնակարգեր:

Հիմնական խնդիրներից է նաև այն, որ չի իրականացվում իրական շահառուների վերաբերյալ ներկայացված տեղեկությունների արժանահավատության արդյունավետ վերահսկողություն: Բացի այդ, հարկ է նշել, որ «իրական շահառու» եզրույթը իրավական բովանդակության տեսանկյունից տարբեր կերպ է արտացոլված ոլորտային իրավական ակտերում, որով պայմանավորված անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել դրանց հնարավորինս միասնականացման համար՝ հաշվի առնելով ոլորտային առանձնահատկությունները:

Անհրաժեշտ է նաև նշել, որ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային գործող համակարգը ներկայումս չունի բոլոր անհրաժեշտ տեխնիկական հնարավորությունները՝ տվյալների մշակման, վերլուծության, փնտրման, ծանուցումների ինքնաշխատ ուղարկման, ըստ ռիսկայնության չափանիշների իրավաբանական անձանց նշման՝ «կարմիր դրոշակների» սահմանման (red flagging), վերլուծական տվյալների գեներացման, մեծածավալ (bulk) բաց տվյալներ գեներացնելու, նորարական գործիքներ ներդնելու համար:

Ապահովված չէ պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգի փոխգործակցելիությունը այլ մարմինների կողմից վարվող տվյալների շտեմարանների հետ (օրինակ՝ ԿԿՀ-ի



էլեկտրոնային համակարգերի, բաժնետերերի ռեեստրի և պետական գնումների էլեկտրոնային համակարգի հետ)՝ որպեսզի հնարավոր լինի ինքնաշխատ կարգով ստանալ համապատասխան տվյալներ և վերհանել խնդիրներ:

Առկա չեն նաև միջազգային համագործակցության շրջանակում իրական շահառուների օտարերկրյա ռեզիստրների հետ փոխգործելիության հնարավորություններ:

Տվյալների արժանահավատության ստուգման արդյունավետ համակարգի ստեղծման համար էական է Իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության համապատասխան գործառույթների ընդլայնումը: Բացի այդ, 2023 թվականից իրական շահառուների հայտարարագիր ներկայացնող իրավաբանական անձանց թվի աճի պայմաններում (ավելի քան 100,000 իրավաբանական անձ) զգալիորեն մեծացել է Իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության աշխատանքային ծանրաբեռնվածությունը:

Հիմնական խնդիրներից է նաև այն, որ հայտարարագրերի ներկայացման գործընթացում առկա է անհստակություն իրավաբանական անձի կազմակերպահրավական ձևով պայմանավորված իրական շահառու հանդիսացող անձանց շրջանակի կապակցությամբ: Առկա չեն իրական շահառուի նույնականացման մատչելի ուղեցույցներ՝ ըստ իրավաբանական անձանց կազմակերպահրավական ձևի, որոնցից կկարողանան օգտվել թե՛ իրավաբանական անձինք, և թե՛ իրավասու մարմինները:

Այսպես, 2023 թվականի մարտ ամսվա դրությամբ ՀՀ-ում հայտարարագիրը ներկայացնելու պարտականություն ունեցող ավելի քան 100.000 իրավաբանական անձանցից միայն շուրջ 48 տոկոսն է կատարել օրենքով սահմանված պարտականությունը: Այնուամենայնիվ, նշված դիմելիության ցածր մակարդակի դեպքում անգամ Պետական ռեզիստրում առաջացել է գերծանրաբեռնվածություն, հետևյալ գործոններով պայմանավորված՝

- 1) իրավաբանական անձանց 80 տոկոսը հայտարարագիրը ներկայացնում է ոչ թե գործադիր մարմնի ղեկավարի, այլ՝ լիազորված անձի միջոցով: Լիազորագրերի մուտքագրումը համակարգ իրականացնում է Պետական ռեզիստրը.
- 2) ներկայացված լիազորագրերի շուրջ 30 տոկոսը կազմված է էական սխալներով, արդյունքում առաջանում է անհրաժեշտություն՝ կապվելու քաղաքացիների հետ և առաջարկելու շտկել նշված թերությունները.
- 3) հայտարարագիր ներկայացնող անձանց մեծամասնությունը նախընտրում է հայտարարագիրը ներկայացնելու բոլոր քայլերում ստանալ Պետական ռեզիստրի մասնագետների խորհրդատվությունը (չնայած վիդեո-ուղեցույցների և Արդարադատության նախարարի հրամանով հաստատված ուղեցույցի՝ կայքում տեղադրված լինելու հանգամանքին),

Հաշվի առնելով, որ Պետական ռեզիստրի հիմնական գործառույթներն իրավաբանական անձանց պետական գրանցումը, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների, առանձնացված ստորաբաժանումների և անհատ ձեռնար-

կատերերի պետական հաշվառումն է՝ վերը նշված գործոններով պայմանավորված գերծան-  
րաբեռնվածությունն իր հերթին կարող է բացասաբար ազդել կատարվող աշխատանքի որակի  
և ժամկետների վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է քայլեր ձեռնարկել իրական շահառուների  
բացահայտման ինստիտուտի կատարելագործման, համակարգի արդյունավետ գործարկման  
և Պետական ռեգիստրում ԻՇ հայտարարագրման գործընթացը համակարգող և համա-  
պատասխան վարչական վարույթ իրականացնող ստորաբաժանման ստեղծման համար: Այս  
միջոցառումների իրականացումը կապահովվի Հանրային կառավարման բարեփոխումների  
(ՀԿԲ) ռազմավարության «Ռազմավարական նպատակ 2. Հանրությանը մատուցվող ծառայու-  
թյունների որակի բարձրացում» շրջանակներում:

Մասնավորապես, առաջնային նշանակություն ունի միջազգային փորձի ուսումնա-  
սիրության հիման վրա իրական շահառուների վերաբերյալ ներկայացված տեղեկությունների  
արժանահավատության ստուգման միասնական կառուցակարգի ներդրումը, ստուգման  
մեթոդաբանության մշակումը և տեխնիկական կանոնակարգերի պատրաստումը, տվյալների  
արժանահավատության հանրային վերահսկողության հնարավորություն ապահովելը,  
«իրական շահառու» եզրույթի իրավական բովանդակության միասնականությունը՝ տարբեր  
իրավական ակտերում, ինչպես նաև պրակտիկայում հնարավորինս ապահովելը:

Բացի այդ, հարկ է արդիականացնել և կատարելագործել իրավաբանական անձանց  
պետական ռեգիստրի և իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային  
համակարգը, մշակել իրական շահառուների նույնականացման միասնական ստանդարտների  
և դրանց վրա հիմնված իրական շահառուների նույնականացման մատչելի ուղեցույցներ,  
ինչպես նաև մշակել, կազմակերպել և անցկացնել վերապատրաստման ծրագրեր՝ ըստ թիրախ  
խմբերի՝ հայտարարատու իրավաբանական անձանց համար, ինչպես նաև պետական  
ռեգիստրի և իրական շահառուների ոլորտին առնչվող այլ պետական մարմինների համար,  
ապահովել իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության ինստի-  
տուցիոնալ զարգացումը: Այս ուղղությամբ միջոցառումները իրականացվելու են նույն ոլորտում  
Հանրային կառավարման բարեփոխումների (ՀԿԲ) և Թվայնացման ռազմավարությունների  
շրջանակներում նախատեսված միջոցառումների հետ փոխլրացմամբ:

## **ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱԿԱՎՈՌՈՒԴՑԻՈՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

Հարկային և մաքսային ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համատեքստում  
կարևորվում է առկա էլեկտրոնային գործիքակազմի շարունակաբար կատարելագործումը կամ  
նոր «խելացի» գործիքների ներդրումը, ինչը կնպաստի հարկային և մաքսային վարչարա-  
րության արդյունավետության բարձրացմանը, ստվերային տնտեսության դեմ պայքարի  
գործիքակազմի կատարելագործմանը և բիզնես-վարչական մարմին փոխհարաբերություն-  
ներում սուբյեկտիվիզմի ու կոռուպցիոն ռիսկերի մեղմացմանը: Բացի վերը նշվածից,

զուգահեռաբար անհրաժեշտ է կատարելագործել ինչպես օրենսդրական դաշտը, այնպես էլ ինստիտուցիոնալ կառուցակարգերը:

## **ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

Մասնավոր ոլորտում կոռուպցիայի դեմ համապարփակ և արդյունավետ պայքար մղելու համար առանցքային նշանակություն ունի հանրային գնումների ոլորտում հակակոռուպցիոն կառուցակարգերի շարունակական կատարելագործումը:

Գնումների ոլորտում կոռուպցիոն ռիսկեր են պարունակում գնումների մասնակիցների, իրական սեփականատերերի մասին տեղեկատվության և նրանց կողմից ներկայացված շահերի բախման բացակայության վերաբերյալ տեղեկությունների ստուգման անկախ մեխանիզմների բացակայությունը<sup>47</sup>:

Գնումների գործընթացում կոռուպցիայի կանխարգելման շրջանակներում առավելապես կարևորվում են շահերի բախման և բարեվարքության կառուցակարգերի շարունակական կատարելագործումը: Որպես առաջնային քայլ՝ առաջարկվում է իրականացնել առկա իրավիճակի և գործող կարգավորումների վերաբերյալ համապարփակ ուսումնասիրություն՝ ուղղված պետական բարձրաստիճան պաշտոնյաների ուղղակի և անուղղակի մասնակցությունը պետական գնումների գործընթացներում բացառելուն, շահերի բախման կառուցակարգերը կատարելագործելուն: Առաջարկվում է ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա կատարելագործել գործող իրավական դաշտը և առկա կառուցակարգերը:

Ներկայումս էլեկտրոնային գնումներն ընդգրկում են գնման գործընթացի բոլոր փուլերը, ներառյալ պայմանագրերի կատարման փուլը: Գնումների գործընթացների, այդ թվում՝ պայմանագրերի կատարման վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը հրապարակվում և թարմացվում է գնումների պաշտոնական էլեկտրոնային տեղեկագրում: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է շարունակաբար կատարելագործել հանրային գնումների գործընթացների թափանցիկության և հրապարակայնության համակարգերը՝ ներդնելով հակակոռուպցիոն նոր խելացի գործիքակազմեր և փոխգործելիության համակարգեր: Այս համատեքստում, առաջարկվում է ՀՀ ֆինանսների նախարարության պետական գնումների էլեկտրոնային գրանցամատյանը (ARMEPS) փոխկապակցել ԿԿՀ-ի հայտարարագրման էլեկտրոնային համակարգի հետ, որի միջոցով էլեկտրոնային գնումների տվյալները կփոխանցվեն ԿԿՀ-ին՝ ներառյալ շահերի բախման առկայության կամ բացակայության մասին հայտարարությունները:

Գնումների գործընթացների հաշվետվողականության բարձրացման տեսանկյունից առաջարկվում է արդիականացնել և կատարելագործել գնումների պլանավորման համակարգը՝

<sup>47</sup> Տե՛ս U4 Հակակոռուպցիոն ռեսուրս կենտրոն «Հայաստան. ակնարկ կոռուպցիայի և հակակոռուպցիայի վերաբերյալ» (Armenia: Overview of Corruption and Anti-corruption) ուսումնասիրություն: <https://www.u4.no/publications/armenia-overview-of-corruption-and-anti-corruption>

ապահովելով պատվիրատուների կողմից ձեռք բերվող հիմնական ապրանքների համար միասնական բնութագրերի առկայությունը:

Գնումների գործընթացներում անհրաժեշտ է շարունակաբար կատարելագործել և բարելավել գործընթացների համակարգերը՝ հանրության և մասնավոր ոլորտի շրջանում գնումների գործընթացի վերաբերյալ վստահության բարձրացման և ամրապնդման ուղղությամբ: Այս համատեքստում, առաջարկվում է իրականացնել իրազեկման բարձրացման միջոցառումներ՝ ինչպես հանրության, այնպես էլ բիզնես ոլորտի ներկայացուցիչների շրջանում, կատարելագործել գնումների միասնական համակարգի որոնման գործիքակազմը:

Ընդ որում, պետք է արձանագրել, որ գնումների մասին օրենսդրության համաձայն մասնակիցները հայտով պարտադիր ներկայացնում են պետական ռեգիստրում գրանցված իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը՝ էլ. համակարգի համապատասխան հղումով: Այդ տեղեկատվության չներկայացման պարագայում տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Զուգահեռաբար, անհրաժեշտ է մշտապես կատարելագործել պետական գնումների շրջանակներում մրցակցության ոլորտի իրավախախտումները վերհանող համակարգչային ապահովման սքրինինգային ծրագրերը, մշակել այդ գործիքների կիրառման ուղեցույցներ, ինչպես նաև զարգացնել Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կարողությունները նշյալ գործիքների արդյունավետ կիրառման ուղղությամբ:

## **ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆՈՒՅԹԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՒՏՈՒՄՆԵՐԻ ԲԱՅԱԿԱՅՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ**

Գործարար ոլորտում կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար իրականացնելու համար կարևորագույն և առանցքային ուղղություններից մեկը ինստիտուցիոնալ կառուցակարգերի կատարելագործումն ու զարգացումն է: Մասնավոր հատվածում արդյունավետ հակակոռուպցիոն պայքար իրականացնելու համար ոչ միայն կարևորվում են իրավական նորմերի սահմանումն ու կիրառումը, այլ նաև ինստիտուցիոնալ համակարգի զարգացումը: Այս համատեքստում, անհրաժեշտ է շարունակաբար հզորացնել և կատարելագործել հակակոռուպցիոն մարմինների ինստիտուցիոնալ կարողությունները՝ վերջիններիս օժտելով անհրաժեշտ գործիքակազմով և հմտություններով:

Անհրաժեշտ է շարունակաբար վերապատրաստել պետական գնումների իրականացման, այդ գործընթացի նկատմամբ հսկողություն իրականացնող, տնտեսական իրավախախտումներ բացահայտող պաշտոնատար անձանց կարողությունները: Այդ մարմինների շարքին պետք է դասել Գլխավոր դատախազությունը, Հակակոռուպցիոն կոմիտեն, Քննչական կոմիտեն, Հաշվեքննիչ պալատը, Պետական վերահսկողական ծառայությունը, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը: Զուգահեռաբար, առաջարկվում է նաև մշակել տնտեսական բնույթի կոռուպցիոն իրավախախտումների/հանցագործությունների բացահայտման և որակման ուղեցույցներ:

Ինստիտուցիոնալ կառուցակարգերի զարգացման և կատարելագործման տեսանկյունից կարևորվում է նաև քաղաքացիական հասարակության և ոչ առևտրային կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնումն ու խորացումը: Այս կապակցությամբ, առաջարկվում է սահմանել և իրականացնել մասնավոր հատվածում քաղաքացիական հասարակության հետ համագործակցության միջոցով կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու կառուցակարգեր:

## **ՆՊԱՏԱԿ 5. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

### **ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

#### **ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

2019-2022 թվականների Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությամբ ամրագրվել էր, որ Հակակոռուպցիոն ռազմավարության և ոլորտային ծրագրերի իրականացման արդյունավետությունն ապահովվելու է մոնիթորինգի ու գնահատման արդյունավետ համակարգ ներդնելու միջոցով: Մինևույն ժամանակ կարևորվել էր հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման հրապարակային, թափանցիկ, նորարար և հասարակության ակտիվ մասնակցության վրա հիմնված մոնիթորինգի ու գնահատման համակարգի ներդրումը:

Հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման արդյունավետ կառուցակարգերի անհրաժեշտությունը շեշտվում է նաև միջազգային կազմակերպությունների կողմից: Այսպես.

ՄԱԿ-ի «Հակակոռուպցիոն ազգային ռազմավարություններ. զարգացման և կիրարկման գործնական ուղեցույցով»<sup>48</sup> կարևորվում է մոնիթորինգի և գնահատման արդյունավետ մեխանիզմների կիրառումը՝ որպես հակակոռուպցիոն ռազմավարության արդյունավետ իրականացման գրավական: Համաձայն նշված ուղեցույցի՝ մոնիթորինգը և գնահատումը հնարավորություն են տալիս պարզել առաջընթացը, բացահայտել առկա բացերը և մարտահրավերները, դրանց լուծման մեխանիզմներ մշակել: Մոնիթորինգի և գնահատման շրջանակներում կարևորվում է նաև կատարված միջոցառումների ազդեցության գնահատումը, խնդիրների և բացերի վերհանումը, լուծման ուղիների շտկումը:

<sup>48</sup> [https://www.unodc.org/documents/corruption/Publications/2015/National\\_Anti-Corruption\\_Strategies\\_-\\_A\\_Practical\\_Guide\\_for\\_Development\\_and\\_Implementation\\_E.pdf](https://www.unodc.org/documents/corruption/Publications/2015/National_Anti-Corruption_Strategies_-_A_Practical_Guide_for_Development_and_Implementation_E.pdf), էջ 16, 31, 37, 42-50

«Հակակոռուպցիոն ռազմավարության վերաբերյալ Կուալա Լումպուրի հայտարարությամբ»<sup>49</sup> և կարևորվում է հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման համակարգի արդյունավետության ապահովումը<sup>50</sup>:

Արդյունավետ և մասնակցային մոնիթորինգի և գնահատման ապահովումը կարևորվում է նաև Հակակոռուպցիոն տարածաշրջանային նախաձեռնության «Հակակոռուպցիոն ազգային ռազմավարությունների և գործողությունների ծրագրերի իրականացման մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանություն» ուղեցույցով<sup>51</sup> (այսուհետ նաև՝ Ուղեցույց): Ուղեցույցում նաև նկարագրվում է մոնիթորինգ և գնահատում իրականացնելու գործողությունների շրջանակը՝ նշելով, որ մոնիթորինգի մարմինները նախ և առաջ պետք է հավաքագրեն մանրամասն տեղեկություններ ռազմավարության իրականացման համար պատասխանատու մարմիններից՝ ստանալով նաև վերջիններիս առաջընթացը և ինքնագնահատումն իրենց կատարած աշխատանքների վերաբերյալ: Հաջորդիվ, ըստ Ուղեցույցի՝ մոնիթորինգ իրականացնող մարմինները պետք է համագործակցեն քաղաքացիական հասարակության հետ՝ աշխատանքների կատարման վերաբերյալ այլընտրանքային դիրքորոշում ստանալու նպատակով:

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) «Հակակոռուպցիոն ռազմավարություններ. հասկանանք՝ ինչն է աշխատում և ինչը՝ ոչ, ինչու՞» խորագրով զեկույցում<sup>52</sup> նշվում է, որ մոնիթորինգի և գնահատման կարևորագույն գործողությունը այնպիսի տեղեկատվության հավաքագրումն է, որը հնարավորություն կտա գնահատել ոչ միայն ընթացքը, այլև կատարված աշխատանքների արդյունավետությունը և համապատասխանությունը ռազմավարությամբ սահմանված ակնկալիքին՝ առաջընթացի արձանագրումը պարզելու նպատակով<sup>53</sup>:

U4 հակակոռուպցիոն ռեսուրս կենտրոնի՝ Միշելինի միջազգային գիտահետա-հետազոտական ինստիտուտի՝ «Ինչպես իրականացնել հակակոռուպցիոն մոնիթորինգ և գնահատում. ուղեցույց պետական մարմինների, դոնոր կազմակերպությունների և գնահատողների համար»<sup>54</sup> զեկույցում նշվում է, որ մոնիթորինգ և գնահատում իրականացնելիս առաջնային է պատասխանատու մարմիններից բազմակողմանի տեղեկատվության հավաքագրումը, որից հետո պետք է գնահատել՝ արդյոք կատարված աշխատանքները և դրանց արդյունքը լուծում են հակակոռուպցիոն քաղաքական փաստաթղթով վերհանված խնդիրները:

Համաշխարհային բանկի «Հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգը և գնահատումը» խորագրով զեկույցում<sup>55</sup> և կարևորվում է Հակակոռուպցիոն գործողությունների

<sup>49</sup> [https://www.unodc.org/documents/southeastasiaandpacific/2013/10/corruption/Kuala\\_Lumpur\\_Statement\\_on\\_Anti-Corruption\\_Strategies\\_Final\\_21-22\\_October\\_2013.pdf](https://www.unodc.org/documents/southeastasiaandpacific/2013/10/corruption/Kuala_Lumpur_Statement_on_Anti-Corruption_Strategies_Final_21-22_October_2013.pdf); <https://transparency.am/files/statements/1548064401-49-259867.pdf>

<sup>50</sup> <https://transparency.am/files/statements/1548064401-49-259867.pdf>

<sup>51</sup> [http://rai-see.org/wp-content/uploads/2015/05/Methodology\\_on\\_Monitoring\\_2015.pdf](http://rai-see.org/wp-content/uploads/2015/05/Methodology_on_Monitoring_2015.pdf)

<sup>52</sup> <http://www.anti-corruption.org/wp-content/uploads/2017/04/RBAP-DG-2014-Anti-Corruption-Strategies.pdf>

<sup>53</sup> <http://www.anti-corruption.org/wp-content/uploads/2017/04/RBAP-DG-2014-Anti-Corruption-Strategies.pdf>, էջ 26-27

<sup>54</sup> <https://www.cmi.no/publications/file/4171-how-to-monitor-and-evaluate-anti-corruption.pdf>, էջ 20-22, 28

<sup>55</sup> <http://documents1.worldbank.org/curated/en/129401593200074880/text/Monitoring-and-Evaluation-M-E-of-Anti-Corruption-Action-Plans.txt>

ծրագրի մոնիթորինգի և գնահատման կառուցակարգերի արդյունավետության երաշխավորումը՝ սահմանելով կատարողականի գնահատման ցուցիչները և ընթացակարգը, ապահովելով մոնիթորինգի և գնահատման գործընթացում հասարակության մասնակցության արդյունավետությունը:

Չնայած 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակում մոնիթորինգի և գնահատման համակարգի բարեփոխումներին, պետք է նշել, որ հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման համակարգը դեռևս ամբողջությամբ կայացած չէ: Մասնավորապես.

- Անբավարար է մշակված գործոնային (ուղղակի արդյունքների) մակարդակում պլանավորված գնահատման ցուցիչները: Ցուցիչների համար բացակայում են տվյալների հավաքագրման և/կամ հաշվարկի մեթոդաբանությունները, իսկ որոշ ցուցիչների դեպքում հստակ չէ թե ինչպես են դրանք նկարագրում իրավիճակը:

- Որոշ դեպքերում բացակայում է կապը միջոցառման ակնկալվող արդյունքի և գնահատող ցուցիչի միջև:

- Միջոցառումների ամենամյա ակնկալվող արդյունքների «կատարված է ամբողջությամբ», «կատարված է մեծամասամբ», «կատարված է մասնակիորեն», «կատարված չէ» գնահատականները տրվում են հայեցողական գնահատման եղանակով և չունեն կատարման աստիճանը բնութագրող չափորոշիչներ :

- Ոլորտային հասարակական կազմակերպություններն իրականացնում են հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի այլընտրանքային գնահատում՝ յուրաքանչյուրն իր մեթոդաբանությամբ և գնահատման կատեգորիաներով: Նման պայմաններում այլընտրանքային գնահատումները հնարավոր չի լինում դիտարկել իրավասու մարմնի կողմից իրականացվող գնահատման շրջանակում:

- Մոնիթորինգի և գնահատման գործիքակազմի կատարելագործման տեսանկյունից անհրաժեշտ է նախ և առաջ ավարտին հասցնել թվային գործիքների կիրառմանն ուղղված աշխատանքները: Բացի այդ, մեխանիզմներ պետք է սահմանվեն հակակոռուպցիոն ծրագրերի և միջազգային պարտավորությունների կատարման համար մարմինների հաշվետվողականության մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ, որը կներառի ոչ միայն հաշվետվություններ կազմող անձանց և հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների շարունակական կարողությունների զարգացումը, այլև հաշվետվության ներկայացման և թիրախային բովանդակության ապահովման կարևորության շուրջ իրազեկման աշխատանքների շարունակականությունը:

Ամփոփելով նշյալը, հարկ է արձանագրել, որ 2023-2026 թթ. Ռազմավարությունը պետք է ապահովի մոնիթորինգի և գնահատման համակարգի զարգացման անհրաժեշտ բոլոր նախադրյալները և մեխանիզմները: Հակակոռուպցիոն մոնիթորինգի համակարգը պետք է հնարավորություն ընձեռի գնահատել կոռուպցիայի մակարդակի փոփոխությունները, ներառել բովանդակային՝ կատարողական մոնիթորինգի համակարգը, տալ ընթացիկ իրավիճակի չափելի նկարագիրը: Մոնիթորինգի համակարգը պետք է պարունակի ռազմավարական նպատակների, միջոցառումների իրականացման ելքերի և արդյունքների գնահատման

ցուցիչները, որոնք «ցանկացած մակարդակում պետք է սահմանվեն հնարավորինս հստակ և չափելի արդյունքային ցուցանիշներով: Դրանք պետք է հնարավոր լինի ներկայացնել թվային տեսքով և քանակապես որոշակի հենանիշի կամ ժամանակահատվածի նկատմամբ, որպեսզի հնարավոր լինի մոնիթորինգի ենթարկել դրա իրագործումը: Անհնար է հասկանալ և գնահատել որևէ նպատակի իրագործումը կամ դրա գծով առաջընթացը, եթե այն չափելի չի»<sup>56</sup>: Վերոնշյալից բացի, անհրաժեշտ է միասնականացնել այլընտրանքային գնահատումների կառուցակարգերը:

Մոնիթորինգի և գնահատման համակարգի արդյունավետության վրա իր բացասական ազդեցությունն է թողնում նաև այդ ուղղությամբ իրականացվող հարցումների իրականացման միասնական մեթոդաբանության բացակայությունը, ինչը հնարավորություն չի տալիս ապահովել հարցումների իրականացման ինստիտուցիոնալացումը, ինչը շատ կարևոր է հակակոռուպցիոն բարեփոխումների արդյունքային ազդեցությունը գնահատելու, հասարակության հետ հետադարձ կապն ապահովելու նպատակով:

Այդ կապակցությամբ անհրաժեշտ է դիտարկել կոռուպցիայի դեմ պայքարի առնչությամբ հանրային հարցումների միասնական մեթոդաբանության մշակման անհրաժեշտությունը և հարցումների իրականացման ինստիտուցիոնալացման հնարավորությունը:

- Բացի այդ, հարկ է վերանայել նաև Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի գործունեության ընդհանուր տրամաբանությունը, քանի որ խորհրդի գործունեության ընթացքում ի հայտ են եկել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման ընթացակարգերի, խորհրդի կազմում ընդգրկվելու հնարավորություն ունեցող ոչ առևտրային կազմակերպությունների սահմանափակ շրջանակը, խորհրդի գործունեության թափանցիկությանն առնչվող պահանջների ամբողջական չլինելը: Բացի այդ, անհրաժեշտ է վերանայել Խորհրդի կազմում ներառված շահագրգիռ պետական մարմինների շրջանակը՝ դրանում ընդգրկելով հակակոռուպցիոն բոլոր ինստիտուցիոնալ մարմիններին, ինչպես նաև սույն ռազմավարության իրականացման համար պատասխանատու հիմնական կատարող բոլոր մարմիններին: Այսպիսով, անհրաժեշտ է բարելավել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի գործունեությանն առնչվող իրավական ակտերը՝ առկա բացերը լրացնելու և Խորհրդի գործունեության կարգավորումներն առավել հստակեցնելու նպատակով:

- Հաշվի առնելով, որ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանը մեծապես աջակցում են դոնոր կազմակերպությունները և անհրաժեշտ է վերջիններիս հետ համագործակցության աշխատանքների համակարգումը, դեռևս նախորդ ռազմավարությամբ ամրագրվեց Դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն աշխատանքի ապահովումը, որի շրջանակում թեև դոնորների հետ պարբերաբար իրականացվել են հանդիպումներ, ներգրավվել են նաև շահագրգիռ մարմիններ, սակայն դոնորների և շահագրգիռ մարմինների համաժամանակյա հանդիպումները պարբերական բնույթ չեն կրել: Նշյալի արդյունքում չի

<sup>56</sup> ՀՀ Վարչապետի 2021 թ. դեկտեմբերի 12-ի «Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգը հաստատելու մասին» N 1508-L որոշում:



ապահովվել դոնորների աշխատանքների արդյունավետ համակարգում: Ուստի անհրաժեշտ է այդ գործուն մեխանիզմներ ներդնել այդ համակարգումը ինստիտուցիոնալ հենքի վրա դնելու և հստակ ընթացակարգերով արդյունավետ գործարկում ապահովելու համար:

## **ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՁՈՐԱՅՈՒՄ**

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի գնահատման շրջանակներում, ի տարբերություն 2018 թվականի զեկույցի, արձանագրվել է, որ մոնիթորինգի իրականացման շրջանակներում առկա են մի շարք ձեռքբերումներ: Մասնավորապես, ՏՀՀԿ-ի կողմից ամենաբարձր միավորները տրվել են հակակոռուպցիոն քաղաքականության մշակմանը (այդ թվում՝ միջգերատեսչական համագործակցությանը) և մոնիթորինգի իրականացմանը, և 9 ոլորտներից միայն հակակոռուպցիոն քաղաքականության ոլորտն է գնահատվել գերազանց:

ՏՀՀԿ-ի կողմից 2018 թվականին տրված հանձնարարականների հաշվառմամբ՝ Հայաստանի Հանրապետությանն առաջարկվել է նախատեսել համարժեք ռեսուրսներ և հակակոռուպցիոն գործունեության մեջ մասնագիտացած, մշտապես գործող համապատասխան անձնակազմ, որն ակտիվորեն կաջակցի քաղաքականության համակարգմանը, իրականացմանն ու մոնիթորինգին:<sup>57</sup>

Հաշվի առնելով, որ ՀՀ վարչապետի աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի և մոնիթորինգի վարչությունը լուծարվել է՝ վերջինիս լիազորությունները կենտրոնացվել են մեկ ստորաբաժանման ներքո և վերապահվել են ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն ստորաբաժանմանը, որը վերակազմակերպվել և ներկայումս գործում է որպես Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչություն (այսուհետ նաև՝ Վարչություն): Վարչության աշխատանքի ծավալը ժամանակի ընթացքում աճել է:

Ներկայումս Վարչության հիմնական գործառույթները, ի թիվս հիմնական նախկին գործառույթների, ընդգրկում են նաև հետևյալը.

- Հակակոռուպցիոն քաղաքականության՝ ներառյալ ռազմավարությունների և ծրագրերի կոռուպցիայի դեմ պայքարի հաղորդակցման ծրագրերի մշակում, Կառավարության ծրագրով և այլ ռազմավարական փաստաթղթերով սահմանված՝ կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված միջոցառումների մշակում և իրականացում,
- Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ 4 մարմինների կարիքներից բխող շարունակական օրենսդրական փոփոխություններ,

<sup>57</sup> <https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf>

- Կոռուպցիայի պայքարի ոլորտի իրավական ակտերի մշակում, իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրություն՝ կոռուպցիայի տեսանկյունից խնդրահարույց լինելու տեսանկյունից Արդարադատության նախարարության իրավասությունների շրջանակում,

- Հակակոռուպցիոն ռազմավարությունների և ծրագրերի, կոռուպցիայի դեմ պայքարի հաղորդակցման ծրագրի կատարման նկատմամբ հսկողություն, մոնիթորինգ և գնահատում, համապատասխան զեկույցների կազմում,

- 2023 թվականից Հակակոռուպցիոն պատասխանատուների աշխատանքի համակարգում, մասնագիտական աջակցության տրամադրում (շուրջ 200 անձ), վերջիններիս կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրություն, դիտարկումների ներկայացում:

- Հակակոռուպցիոն միջազգային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն և աշխատանքների համակարգում, Հակակոռուպցիոն միջազգային կազմակերպությունների հետ հարաբերություններում ՀՀ շահերի ներկայացում, այդ կառույցների մարմինների գործունեությանը մասնակցություն, Միջազգային պարտավորությունների գնահատման շրջանակներում հարցաշարերի լրացում, ինքնագնահատման զեկույցների կազմում, այդ միջազգային կազմակերպությունների տարբեր մասնագիտացված աշխատանքային խմբերի աշխատանքներին մասնակցություն, տարբեր պետությունների կոնվենցիոն պարտավորությունների գնահատում:

- Նկատի ունենալով բյուջետային աջակցության մեծ ծավալները, դոնոր կազմակերպության կողմից մեծածավալ ֆինանսավորումը՝ Վարչությունը ֆինանսական ստորաբաժանման աջակցությամբ կազմում է բյուջետային ծրագրերի կազմում, իրականացնում հաշվարկներ:

Առկա խնդիրների առնչությամբ հարկ է նշել, որ Վարչության կողմից հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման, ինչպես նաև միջազգային պարտավորությունների համակարգման գործընթացի շրջանակներում էապես դժվարություններ են ստեղծում իրավասու մարմիններից սահմանված ժամկետում տեղեկությունների չներկայացումը կամ ոչ ամբողջական ներկայացումը, նույնաբովանդակ տեղեկատվության առնչությամբ տարբեր մարմինների կողմից ներկայացված տեղեկությունների անհամապատասխանությունը և այլն: Մինևույն ժամանակ, Վարչության մարդկային ռեսուրսների և գործառույթների միջև առկա է էական անհամաչափություն (Վարչությունն ունի 8 հաստիք): Նշյալ կարողությունների լրացման հարցը անհրաժեշտ է դիտարկել սույն ռազմավարության, ինչպես նաև Հանրային կառավարման բարեփոխումների (ՀԿԲ) ռազմավարության «Ռազմավարական նպատակ 3. Գործադիր իշխանության մարմինների ինստիտուցիոնալ արդյունավետության բարձրացում» շրջանակներում:

➤ Օրենքով սահմանված կարգով հանրապետական իշխանության մարմիններում, պետական կառավարման մարմիններում և համայնքապետարաններում նշանակվել են հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուներ, ինչը հնարավորություն է ընձեռում ապահովելու ներգերատեսչական մակարդակում հակակոռուպցիոն ծրագրերի և միջազգային պարտավորությունների կատարման աշխատանքների համակարգվածությունը և հաշվետվողականությունը: Սակայն հարկ է նշել, որ հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների համար անհրաժեշտ է իրականացնել վերապատրաստումներ և վերջիններիս համար մշակել

ուղեցույցներ՝ նկատի ունենալով ինստիտուտի նոր լինելը և դրանից բխող՝ նշված անձանց կարողությունների զարգացման անհրաժեշտությունը:

➤ Դեռևս 2019 թվականին ստեղծվել է Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը, իսկ 2022 թվականի դեկտեմբեր-2023 թվականի հունվար ամիսներին անցկացվել է մրցույթ՝ հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում նոր հասարակական կազմակերպություններ ներգրավելու և ըստ այդմ՝ ռոտացիա ապահովելու նպատակով:<sup>58</sup>

• Անդրադառնալով այլընտրանքային գնահատումներին և ոլորտային հասարակական կազմակերպությունների դերակատարմանը կոռուպցիայի դեմ պայքարին՝ հարկ է նշել հետևյալը՝  
- Իրավաբանների հայկական ասոցիացիան Հայաստանի ՔԿՀ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հետ համատեղ յուրաքանչյուր կիսամյակ իրականացնում է Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգ և գնահատում, ինչպես նաև ներկայացվում են համապատասխան առաջարկություններ:<sup>59</sup>

- Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը պարբերաբար իրականացնում է մշտադիտարկում՝ հակակոռուպցիոն ռազմավարության առանձին ուղղությունների իրականացման վերաբերյալ<sup>60</sup>:

- Իրազեկ քաղաքացիներ միավորում հասարակական կազմակերպությունը ևս պարբերաբար ներկայացնում է դիրքորոշում հակակոռուպցիոն ռազմավարության առանձին ուղղությունների իրականացման վերաբերյալ:

Վերոնշյալի համատեքստում հարկ է նշել, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցությունն ապահովվում է նաև Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի գործունեությանը վերջիններիս մասնակցությամբ<sup>61</sup>:

Այնուամենայնիվ, քաղաքացիական հասարակության դերակատարման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է վերջիններիս համար ևս իրականացնել կարողությունների զարգացում՝ շարունակական հիմունքներով:

• Միևնույն ժամանակ, նկատի ունենալով Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության և մոնիթորինգի վարչության մեծածավալ գործառույթները և դրանց կարևորությունը Հայաստանի Հանրապետության համար՝ անհրաժեշտ է դիտարկել նշված վարչության հաստիքների համալրման և ինստիտուցիոնալ կարողությունների

<sup>58</sup> [https://anti-corruption.gov.am/am/news\\_page?content.cid=135](https://anti-corruption.gov.am/am/news_page?content.cid=135) ,  
[https://anti-corruption.gov.am/am/news\\_page?content.cid=137](https://anti-corruption.gov.am/am/news_page?content.cid=137)

<sup>59</sup> <https://armla.am/49074.html> ,  
<https://armla.am/?s=%D5%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%AF%D5%B8%D5%BC%D5%B8%D6%82%D5%BA%D6%81%D5%AB%D5%B8%D5%B6+%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6+%D6%87+%D5%A4%D6%80%D5%A1+%D5%AB%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A1%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6>

<sup>60</sup> Մանրամասները տե՛ս սույն զեկույցի «Կոռուպցիայի կանխարգելում» բաժնի «Կոռուպցիայի կանխարգելումը և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները» ենթաբաժնում:

<sup>61</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=173833>

զարգացման հնարավորությունները և այդ նպատակով նախ և առաջ իրականացնել կարիքների գնահատում:

- Նշված աշխատանքներին զուգահեռ անհրաժեշտ է մեխանիզմներ մշակել Վարչության կողմից հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման, ինչպես նաև միջազգային պարտավորությունների համակարգման գործընթացը բարդացնող խնդիրների լուծման ուղղությամբ: Մասնավորապես, անհրաժեշտ է մեխանիզմներ նախատեսել իրավասու մարմիններից սահմանված ժամկետում և ամբողջական տեղեկությունների ստացման ապահովման, նույնաբովանդակ տեղեկատվության առնչությամբ տարբեր մարմինների կողմից ներկայացված տեղեկությունների անհամապատասխանության դեպքերի նվազեցման ուղղությամբ:

**ԲԱԺԻՆ III. 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ, ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

**1. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի մոնիթորինգի, գնահատումը և համակարգումը**

1) Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի (այսուհետ նաև՝ Գործողությունների ծրագրի) իրականացման արդյունավետության ապահովման նպատակով շարունակվելու է կիրառվել հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման հրապարակային, թափանցիկ, նորարար և հասարակության ակտիվ մասնակցության վրա հիմնված մոնիթորինգի ու գնահատման համակարգ, որը շարունակական հիմունքներով կատարելագործվելու է:

2) Մոնիթորինգի և գնահատման ինստիտուցիոնալ համակարգը ներառում է Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը, Արդարադատության նախարարությունը, Գործողությունների ծրագիրը կատարող մարմինները՝ հանձինս այդ մարմինների Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների:

3) Ռազմավարության և Գործողությունների ծրագրի հանրապետական մակարդակում մոնիթորինգի և գնահատման գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման, մոնիթորինգի և գնահատման համար պատասխանատու ստորաբաժանումը՝ որպես հակակոռուպցիոն քաղաքականության մշակման, մոնիթորինգի և գնահատման մասնագիտացված հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի մարմին: Ստորաբաժանումը մոնիթորինգի, գնահատման և համակարգման շրջանակներում ապահովում է հետևյալ հիմնական գործառույթների իրականացումը.

❖ իրականացնում է հակակոռուպցիոն ոլորտի գործընթացների, հակակոռուպցիոն միջազգային պարտավորությունների մոնիթորինգ, հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող միջոցառումների մոնիթորինգ, ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի կատարման մոնիթորինգ և գնահատում, դրանց հիման վրա զեկույցների կազմում, համապատասխան մարմիններին ներկայացում միջոցառումների կատարմանն ուղղված առաջարկությունները.

❖ տրամադրում է մեթոդական և մասնագիտական աջակցություն հանրապետական իշխանության մարմինների, պետական կառավարման համակարգի մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, Ազգային ժողովի, Հանրապետության նախագահի և Վարչապետի աշխատակազմերի՝ Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուներին և վերջիններիս փոխարինող անձանց, համակարգում է նշյալ անձանց կողմից հակակոռուպցիոն միջազգային պարտավորությունների շրջանակում իրականացվող աշխատանքները.

❖ համակարգում է հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման գործընթացը՝ կատարող մարմինների Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների հետ համագործակցության շրջանակում.

❖ համակարգում է Արդարադատության նախարարության իրավասության շրջանակներում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների և հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքները.

❖ ապահովում է հակակոռուպցիոն միջազգային պարտավորությունների գնահատման շրջանակներում Ազգային համակարգումը, դրա շրջանակում հարցաշարերի մշակման, ինքնագնահատման զեկույցների կազմում և այլ անհրաժեշտ աշխատանքների իրականացում.

❖ կազմակերպում է Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի աշխատանքները, իրականացնում Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի քարտուղարության աշխատանքները (բացառությամբ՝ նիստերի կազմակերպման հետ կապված տեխնիկական աշխատանքների).

Այսպիսով, Ստորաբաժանման գործառույթները ներառում են, ըստ էության, հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատմանն առնչվող բոլոր գործառույթները, միջազգային պարտավորությունների շրջանակում աշխատանքների ապահովումը, համակարգումը և հաշվետվողականությունը, հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուներին մեթոդական աջակցության ապահովումը և վերջիններիս աշխատանքի համակարգումը, հակակոռուպցիոն ծրագրերի կատարման նկատմամբ հսկողությունը:

4) Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուները Ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման համար պատասխանատու՝ կատարող մարմնի՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 7.1-րդ գլխող նախատեսված անձինք/ստորաբաժանում են, որոնք ներգերատեսչական մակարդակում ապահովում են համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակներում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների և այդ մարմինների կողմից հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքների համակարգումը, ներառյալ՝ դրա շրջանակում հաշվետվությունների և ինքնագնահատման զեկույցների կազմումը:

5) Հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման գործընթացում շարունակելու է առանցքային դերակատարում ունենալ նաև դեռևս 2019 թվականին ստեղծված Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը:

## **2. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի մոնիթորինգի և գնահատման ընթացակարգը, գնահատման մեթոդաբանությունը**

1) Ռազմավարության և Գործողությունների ծրագրի մոնիթորինգի և գնահատման գործառույթներն իրականացնում է Ստորաբաժանումը՝ Ռազմավարության և Գործողությունների ծրագրի կատարող մարմինների (այսուհետ նաև՝ կատարող մարմիններ), ինչպես նաև այդ մարմինների Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների կողմից ներկայացված տեղեկատվության, ինքնագնահատման հաշվետվությունների, հակակոռուպցիոն ոլորտի

միջազգային պարտավորությունների շրջանակներում Հայաստանի գնահատման զեկույցների, քաղաքացիական հասարակության կողմից կատարված մոնիթորինգի այլընտրանքային զեկույցների և Նախարարությանը հասանելի այլ տեղեկությունների հիման վրա: Մոնիթորինգի և գնահատման արդյունքներն ամփոփվում են հաշվետվություններում (զեկույցներում):

2) Մոնիթորինգն իրականացվում է կիսամյակային և տարեկան կտրվածքով: Կիսամյակային մոնիթորինգի շրջանակներում ուսումնասիրվում է Միջոցառումների կատարման ընթացքը և վեր են հանվում կատարմանը խոչընդոտող հանգամանքները: Տարեկան կտրվածքով իրականացվում է միջանկյալ ժամանակահատվածի արդյունքային մոնիթորինգ, ինչպես նաև՝ գործոնային մոնիթորինգ ու գնահատում: Արդյունքային մոնիթորինգն իրականացվում է ըստ Ռազմավարությամբ առաջադրված հիմնական խնդիրների լուծմանը միտված արդյունքային մոնիթորինգի ցուցիչների: Գործոնային մոնիթորինգի և գնահատման շրջանակներում ուսումնասիրվում և գնահատվում է Գործողությունների ծրագրի կատարումը՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր միջոցառման համար սահմանված գործոնային ցուցիչները:

3) Գործոնային մոնիթորինգը և գնահատումն արտահայտում է Ռազմավարության իրականացման արդյունքն արտացոլող հիմնական ցուցանիշը: Գործոնային մոնիթորինգը և գնահատումն իրականացվում է ոչ միայն Նախարարության, այլև՝ Կատարող մարմինների կողմից:

4) Գործոնային մոնիթորինգի շրջանակում յուրաքանչյուր միջոցառման կատարման գնահատման արդյունքներն արտացոլվում են հետևյալ ցուցանիշներով՝

(1) ամբողջությամբ կատարված է (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված աշխատանքների 91-100%-ը կատարվել են),

(2) կատարված է մեծամասամբ (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված աշխատանքների 71-90%-ը կատարվել են),

(3) կատարված է մասնակի (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված աշխատանքների 31-70%-ը կատարվել է),

(4) կատարված չէ (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված որևէ աշխատանք իրականացված չէ կամ կատարվել է նախատեսված աշխատանքների մինչև 30%-ը):

5) Գործոնային մոնիթորինգի և գնահատման շրջանակներում կատարողականի ընդհանուր ցուցանիշը հաշվարկվում է վարիացիոն շարքի համակշռված միջինի հաշվարկման մեթոդով:

6) Կատարող մարմինները յուրաքանչյուր տարվա առաջին կիսամյակի ավարտից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում սահմանված ձևաչափին համապատասխան Նախարարություն են ներկայացնում հաշվետվություն Գործողությունների ծրագրով իրենց կողմից կատարման ենթակա աշխատանքների ընթացքի վերաբերյալ՝ նշելով յուրաքանչյուր միջոցառման իրականացմանը խոչընդոտող (երկարաձգող) հանգամանքները (մարտահրավերները): Սույն կետում նշված տեղեկատվությունը ստանալուց հետո Նախարարությունը համադրում և ամփոփում է ներկայացված հաշվետվությունները, կազմում է մոնիթորինգի կիսամյակային զեկույց և յուրաքանչյուր տարվա առաջին կիսամյակի ավարտից հետո 20-րդ աշխատանքային

օրը ապահովում է մոնիթորինգի կիսամյակային զեկույցի հրապարակումը Նախարարության կայքէջում և Հակակոռուպցիոն մոնիթորինգի էլեկտրոնային հարթակում:

7) Կատարող մարմինները յուրաքանչյուր տարվա ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Նախարարություն են ներկայացնում տարեկան հաշվետվություն գործողություններով ծրագրով իրենց կողմից կատարման ենթակա աշխատանքների վերաբերյալ՝ միաժամանակ գնահատելով իրենց կողմից միջոցառումների կատարումը:

8) Տեղեկատվությունը ստանալուց հետո Նախարարության Ստորաբաժանումը վերլուծում, համադրում, ամփոփում է ներկայացված հաշվետվությունները և Նախարարությանը հասանելի այլ տեղեկությունները, իրականացնում է գնահատում, մշակում է մոնիթորինգի և գնահատման տարեկան զեկույց:

9) Նախարարությունը ապահովում է նախորդ տարվա մոնիթորինգի և գնահատման տարեկան զեկույցի հրապարակումը կայքէջում և Հակակոռուպցիոն մոնիթորինգի էլեկտրոնային հարթակում ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա մարտ ամսվա երկրորդ տասնօրյակը:

10) Մոնիթորինգի և գնահատման տարեկան զեկույցը ներառում է նաև հայտնաբերված թերությունները և բացթողումները, ինչպես նաև դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները: Նախարարությունը մոնիթորինգի և գնահատման տարեկան զեկույցի նախագիծը մինչև հրապարակումը ներկայացնում է ոլորտային հասարակական կազմակերպություններին՝ վերջիններիս դիրքորոշումը ստանալու և դրանք տարեկան զեկույցում ներառելու նպատակով:

11) Առավել համապարփակ ու բազմակողմանի գնահատում ունենալու նպատակով քաղաքացիական հասարակության կազմակերպությունները յուրաքանչյուր տարի կարող են իրականացնել անկախ մոնիթորինգ և գնահատում, դրանց արդյունքները ներկայացնել Նախարարություն այնպիսի ժամկետում, որ հնարավոր լինի դրանք ներառել Նախարարության կողմից մշակվող մոնիթորինգի և գնահատման զեկույցում: Միաժամանակ, համադրելի կդիտարկվեն այն այլընտրանքային գնահատումները, որոնք կիրականացվեն սույն բաժնով սահմանված կարգով և մեթոդաբանությանը համաձայն:

12) Նախարարությունը յուրաքանչյուր տարի մինչև ապրիլ ամիսը նախորդ տարվա Միջոցառումների մոնիթորինգի և գնահատման արդյունքները ներկայացնում է Խորհրդի քննարկմանը: Խորհուրդը մոնիթորինգի և գնահատման տարեկան զեկույցը ստանալուց ու քննարկելուց հետո համապատասխան կատարող մարմինների ներգրավմամբ կարող է Ռազմավարությունում ու Գործողությունների ծրագրում փոփոխություններ կատարելու առաջարկություններ ներկայացնել: Փոփոխությունների մշակման աշխատանքները համակարգվում են Նախարարության կողմից:

13) Ռազմավարության ու Գործողությունների ծրագրի ազդեցության գնահատման նպատակով Նախարարությունը միջնաժամկետ ու երկարաժամկետ փուլերում տարբեր թիրախային խմբերում կարող է նախաձեռնել հանրային կարծիքի հարցումներ, որոնց անցկացման հիման վրա չափվում է բարեփոխումների ազդեցությունը և ներազդումը հասարակության վրա:

14) Գործողությունների ծրագրի ավարտից հետո Ստորաբաժանումը մշակում է մոնիթորինգի և գնահատման եզրափակիչ զեկույց, որի նպատակն է գնահատել հաշվետու տարիների (2023-2026 թվականների) ընթացքում իրականացված միջոցառումների արդյունքում գրանցված



առաջընթացը և կատարված աշխատանքների արդյունավետությունը Ռազմավարությամբ ամրագրված խնդիրների լուծման և նպատակների իրագործման տեսանկյունից, պարզել առկա խնդիրները, բացերը և մարտահրավերները: Եզրափակիչ մոնիթորինգի և գնահատման զեկույցը մշակվում է սույն գլխով սահմանված կարգով՝ միաժամանակ հաշվի առնելով հաշվետու տարիների ընթացքում մոնիթորինգի և գնահատման զեկույցներով արձանագրված միջանկյալ արդյունքները, միջազգային կազմակերպությունների կողմից գնահատման զեկույցները և առաջարկությունները, հասարակական կազմակերպությունների կողմից գնահատման և մոնիթորինգի զեկույցները և առաջարկությունները, իրականացված հարցումների արդյունքները, միջազգային հետազոտությունները և վարկանիշային ցուցիչները: Մոնիթորինգի և գնահատման եզրափակիչ զեկույցի շրջանակներում վերջնական արդյունքների գնահատման հիմնական ցուցիչներն են Թրանսփարենսի Ինթերնեշնլի կոռուպցիայի ընկալման համաթիվը (հիմքային՝ 2018 թվական-35, 2026 թվական-55) և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման հինգերորդ փուլի «Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում» խորագրով մոնիթորինգի զեկույց (հիմքային՝ 2023 թվականի զեկույց, 2026 թվական-աճ առնվազն 20 միավորով յուրաքանչյուր կատարողական դաշտում):

**ԲԱԺԻՆ IV. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
2023-2026 ԹԹ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ**

**Աղյուսակ 1. 2023-2026 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրի ֆինանսական ամփոփ գնահատականը՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների և տարիների, հազար դրամ**

	Պետական բյուջե	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Ընդամենը
<b>2023 թ.</b>	0.0	15,312.5	15,312.5
<b>2024 թ.</b>	0.0	3,390,194.8	3,390,194.8
<b>2025 թ.</b>	0.0	173,501.7	173,501.7
<b>2026 թ.</b>	0.0	135,548.9	135,548.9
<b>Ընդամենը</b>	<b>0.0</b>	<b>3,714,557.9</b>	<b>3,714,557.9</b>

**Աղյուսակ 2. 2023-2026 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրի ֆինանսական գնահատականը՝ ըստ գործողությունների և տարիների**

	Նպատակ/ Գործողություն	Պատ. պետ. մարմին	Ֆինանսավորման աղբյուր	Ընդամենը ֆինանս. կարիք, հազ. դրամ	2023 թ.	2024 թ.	2024 թ.	2025 թ.	2026 թ.
					II	I	II		
<b>1. ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ</b>									
1.1.	Վերանայել հանձնաժողովի անդամների ընտրության, պատասխանատվության կարգերը		Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
1.2.	Բարելավել կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթների ընթացակարգերը, սահմանել դրանց առանձնահատկությունները, և հստակեցնել ԿԿՀ գործառույթները՝ որպես վարչարարություն իրականացնող մարմին		Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
1.3.	Կատարելագործել բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտը	ԿԿՀ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
1.4.	Բարելավել էթիկայի հանձնաժողովների գործունեությունը	ԿԿՀ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
1.5.	Բարելավել կոռուպցիայի կանխարգելման ոլորտում	ԿԿՀ	Օրենքով չարգելված	3,750.0	-	3,750.0	-	-	-

	վիճակագրության վարման թվային կառուցակարգերը		այլ աղբյուրներ						
1.6.	Ընդլայնել բարեվարքության ուսումնասիրության առկա գործիքակազմը	ԿԿՀ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	3,750.0	-	3,750.0	-	-	-
1.7.	Երաշխավորել իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննությունը՝ մշակվող ակտերի (ex ante) և անհրաժեշտության դեպքում՝ դրանց հիմքում ընկած կամ դրանց հետ փոխկապակցված իրավական ակտերի (ex post) փորձաքննությունը	ԿԿՀ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	5,000.0	-	2,500.0	2,500.0	-	-
1.8.	Միասնականացնել կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող օրենսդրությունը	ԿԿՀ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
1.9.	Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգ ներդնելուն ուղղված քայլերի իրականացում	ԿԿՀ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
1.10.	Ընդլայնել հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը	ԿԿՀ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
1.11.	Զարգացնել հայտարարագրման էլեկտրոնային համակարգը	ԿԿՀ, ԱՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	3,200,000.0	-	1,600,000.0	1,600,000.0	-	-
1.12.	Ընդլայնել բարեվարքության ուսումնասիրության ենթակա պաշտոնների ցանկը	ԿԿՀ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
1.13.	Տարանջատել բարեվարքության ուսումնասիրությունը հանրային պաշտոնում նշանակման կամ առաջխաղացման համար և ընթացիկ բարեվարքության ուսումնասիրությունը (շրջանակը, մեխանիզմները)	ԿԿՀ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
1.14.	Բարձրացնել ԿԿՀ կողմից բարեվարքության վերաբերյալ եզրակացությունների հիման վրա նշանակում	ԿԿՀ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-

	իրականացնող մարմնի հաշվետվողականությունը								
1.15.	Սահմանել ԿԿՀ բարեվարքության վերաբերյալ եզրակացության եզրափակիչ մասի հրապարակայնության պահանջ	ԿԿՀ, ՔԾԳ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
1.16.	Ամրապնդել բարեվարքության ուսումնասիրության համակարգի արդյունավետությունը	ԿԿՀ, ԱՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
1.17.	Մեծացնել կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների արդյունավետությունը	ԿԿՀ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
1.18.	Կատարելագործել վարքագծի կանոնադրերը՝ հիմք ընդունելով ԿԿՀ հաստատած տիպային կանոնները, և դրանց կիրարկման կառուցակարգերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում	ԿԿՀ, ՔԾԳ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
1.19.	Երաշխավորել շահերի բաշխման նոր սահմանման իրացումը	ԿԿՀ, ՔԾԳ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
1.20.	Զարգացնել նվերների ընդունման սահմանափակումների իրացման կառուցակարգերը	ԿԿՀ, ՔԾԳ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
1.21.	Զարգացնել անհամատեղելիության պահանջների բացահայտման և վերահսկողության գործիքները	ԱՆ, ԿԿՀ, ՔԾԳ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
1.22.	Օրենսդրությամբ հստակեցնել «այլ սահմանափակումների» պահանջները	ԱՆ, ԿԿՀ, ՔԾԳ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
1.23.	Ներդնել լրբիստական գործունեության (ոչ իրավաչափ ազդեցության) վերաբերյալ կարգավորումներ	ԱՆ, ԿԿՀ, ՔԾԳ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
1.24.	Սահմանել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների	ԿԿՀ, ԱՆ, ՔԾԳ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-

	կողմից նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական և (կամ) համայնքային այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը ոչ ծառայողական նպատակներով օգտագործման սահմանափակման անձնական նպատակներով օգտագործելը սահմանափակող դրույթներ								
1.25.	Ներդնել բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվության միջոցների կիրառման միասնական համակարգ	ԿԿՀ, ՔԾԳ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
1.26.	Որոշակի պաշտոններ զբաղեցնող անձանց համար սահմանել պատասխանատվության միջոցների կիրառման պարտադիր պահանջ	ԿԿՀ, ՔԾԳ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
<b>2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱԿԱԶԴԴԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ</b>									
2.1.	Վերանայել Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորման կարգը	ՀԿ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
2.2.	Երաշխավորել Հակակոռուպցիոն կոմիտեի ինստիտուցիոնալ հզորացումը	ՀԿ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
2.3.	Իրականացնել Հակակոռուպցիոն կոմիտեի, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության գործունեության թվայնացմանն ուղղված միջոցներ	ԱՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	5,000.0	1,250.0	3,750.0	-	-	-
2.4.	Անցկացնել կոռուպցիայի դեմ պայքարի թեմաներով մասնագիտական վերապատրաստումներ և պատրաստումներ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների, ՀՀ գլխավոր	ԱՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1,008.0	-	-	504.0	504.0	-

	դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության դատախազների համար								
2.5.	Իրականացնել կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի և դրանց քննչական ենթակայության վերանայում	ԱՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1,875.0	625.0	1,250.0	-	-	-
2.6.	Մշակել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության համապարփակ մեթոդիկա և ուղեցույցներ	ԱՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	3,565.0	-	3,125.0	220.0	220.0	-
2.7.	Հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների աշխատանքներին ներգրավել տնտեսագիտական/ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետների	ԱՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	66,125.0	-	-	8,625.0	28,750.0	28,750.0
2.8.	Անցկացնել վերապատրաստումներ հակակոռուպցիոն դատարանների դատավորների համար	ԱՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
2.9.	Մշակել հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների և դատավորների կողմից քննվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերի առանձնահատկություններով պայմանավորված մեթոդական ուղեցույցներ	ԱՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	3,750.0	-	1,875.0	1,875.0	-	-
2.10.	Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների աշխատանքներին ներգրավել տնտեսագիտական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետների:	ԲԴԽ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	14,375.0	-	-	2,875.0	5,750.0	5,750.0
2.11.	Սահմանել կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության միասնական կարգ և	ԱՆ, ԲԴԽ,	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	23,750.0	-	-	3,750.0	20,000.0	-

	կատարելագործել առկա կառուցակարգերը:								
2.12.	Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ թեմաները ներառել դատավորների թեկնածուների հավակնորդների, դատավորների թեկնածուների ուսուցման և վերապատրաստման ծրագրերում:	ԱՆ, ԱԱ, ԿԿՀ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
2.13.	Կատարելագործել և արդիականացնել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտը:	ԳԴ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	15,000.0	2,500.0	6,250.0	6,250.0	-	-
2.14.	Կատարելագործել կոռուպցիոն հանցագործություններով արգելադրված և (կամ) բռնագրավված, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների արդյունքում բռնագանձված գույքի կառավարման կառուցակարգերը:	ԳԴ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	7,500.0	-	3,750.0	3,750.0	-	-
2.15.	Մշակել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ մեթոդիկա և ուղեցույցներ, անցկացնել մասնագիտական վերապատրաստումներ	ԳԴ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	3,565.0	1,562.5	1,782.5	220.0	-	-
2.16.	Ընդլայնել և արդիականացնել Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային և անդրազգային հարթությունում կոռուպցիայի հակազդման մեխանիզմները, ինչպես նաև կատարելագործել միջազգային փոխօգնության մեխանիզմները:	ԳԴ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
2.17.	Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը	ԱՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	11,320.0	1,250.0	4,375.0	4,375.0	1,320.0	-
2.18.	Զարգացնել ազդարարման դեպքերի վերաբերյալ վիճակագրություն վարելու համակարգը	ԱՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	3,125.0	625.0	2,500.0	-	-	-
2.19.	Կատարելագործել ազդարարման էլեկտրոնային հարթակը.	ԱՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	16,875.0	-	-	1,875.0	15,000.0	-

2.20.	Կատարելագործել ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմները, դիտարկել ազդարարման խրախուսման մեխանիզմների նախատեսման նպատակահարմարությունը	ԱՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-	
2.21.	Իրականացնել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի ներդրման ազդեցության փորձաքննություն և վերանայել փաստացի վերահսկողություն իրականացնող անձանց պատասխանատվությունը, կիրառվող սանկցիաների համաչափությունը և կոռուպցիոն բնույթի հանցագործություններով խրախուսական կառուցակարգերը:	ԱՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-	
<b>3. ՀԱԿԱՎՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ</b>										
3.1.	Մշակել և ներդնել նախադպրոցական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ նաև ՆՈՒՀ) 5-6 տարեկան երեխաների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով կրթական ծրագիր	ԿԳՄՄՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	4,500.0	-	-	4,500.0	-	-	
3.2.	Նախադպրոցական ուսումնական հաստատություններում մանկավարժական աշխատողների համար մշակել և ներդնել էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստումների ծրագիր	ԿԳՄՄՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	25,300.0	-	-	2,200.0	12,980.0	10,120.0	
3.3.	Հանրակրթության շրջանակում կատարելագործել «Հասարակագիտություն» առարկայի առարկայական ծրագիրը	ԿԳՄՄՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-	
3.4.	Մշակել և ներդնել «Հասարակագիտություն» առարկայի դասավանդող ուսուցիչների	ԿԳՄՄՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	11,000.0	-	-	4,400.0	2,200.0	4,400.0	



	վերապատրաստման ծրագիր								
3.5.	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման շրջանակում ներդնել էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով կրթական ծրագիր, մանկավարժական անձնակազմի համար նախատեսել նշված թեմաներով վերապատրաստումներ	ԿԳՄՄՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	2,975.0	-	1,250.0	625.0	1,100.0	-
3.6.	Հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում պետական մարմինների պատվերով իրականացնել հակակոռուպցիոն բնագավառի գիտական հետազոտություններ	ԿԳՄՄՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	100,000.0	-	-	-	50,000.0	50,000.0
3.7.	Ստեղծել հակակոռուպցիոն թեմատիկ գրականության աղբյուրների համար նախատեսված հարթակ՝ «Հայկական կրթական միջավայր» պորտալում նախատեսելով դրա համար առանձին բաժին	ԿԳՄՄՆ, ԱՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
3.8.	Բարձրագույն ուսումնական հաստատություններում վերջիններիս համաձայնությամբ մշակել և ներդնել ուսանողների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն դասընթաց/բաղադրիչ	ԿԳՄՄՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
3.9.	Բարձրագույն ուսումնական հաստատություններում մշակել և ներդնել պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն վերապատրաստումների ծրագիր	ԿԳՄՄՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	4,625.0	-	1,250.0	625.0	1,500.0	1,250.0
3.10.	Բարձրագույն ուսումնական հաստատություններում մշակել և ներդնել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմիններում ուսանողական պրակտիկայի և փորձնակության անցկացման ծրագրեր,	ԿԳՄՄՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-

	նախատեսել հակակոռուպցիոն ոլորտում արտասահմանյան ուսումնական հաստատություններում սովորելու համար կրթաթոշակների տրամադրման հնարավորություններ								
3.11.	Նպաստել ուսումնական հաստատություններում հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացմանը՝ դպրոցներում հիմնելով աշակերտական հակակոռուպցիոն ակումբներ, իսկ ԲՈՒՀ-երում՝ Հակակոռուպցիոն լաբորատորիաներ (R&D)՝ հակակոռուպցիոն հետազոտություններ, իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննություն անցկացնելու և հակակոռուպցիոն ծրագրերին հետազոտական և անալիտիկ բնույթի այլ աջակցություն տրամադրելու նպատակով	ԿԳՄՄՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
3.12.	Մշակել և ներդնել հակակոռուպցիոն հանրային հաղորդակցության և իրազեկման գործողությունների ծրագիր, այդ թվում՝ հանրային իրազեկման ծրագրի իրականացման արդյունքների գնահատման համակարգ	ԿԿՀ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	7,500.0	2,500.0	2,500.0	2,500.0	-	-
3.13.	Զարգացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարողությունները հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ոլորտում	ԿԿՀ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
3.14.	Հզորացնել ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների ցանցերի կարողությունները՝ հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆոնդայթայթման իրականացման նպատակով	ԿԿՀ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-

3.15.	Ներդնել հակակոռուպցիոն կրթության ոլորտի միասնական իրավակարգավորումներ	ԿԿՀ, ԿԳՄՍՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-	
<b>4. ԳՈՐԾԱՐԱՐ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՅՈՒՐԱՑՈՒՄ</b>										
4.1.	Գործարար ոլորտում ներդնել հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր՝ զարգացնելով կորպորատիվ կառավարման մշակույթը	ԷՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	8,385.0	-	-	-	3,144.4	5,240.6	
4.2.	Պետական և համայնքային առևտրային կազմակերպություններում ներդնել հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր, կատարելագործել հաշվետվողականության մեխանիզմները	ԱՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-	
4.3.	Պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններում ներդնել կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգեր	ԿԿՀ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1,760.0	-	-	1,760.0	-	-	
4.4.	Հզորացնել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ինստիտուցիոնալ կարողությունները՝ մասնավոր հատվածի և պետական մարմինների միջև հարաբերություններում գործարարների իրավունքների պաշտպանության համատեքստում	ՄԻՊ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	45,389.9	-	7,565.0	7,565.0	15,130.0	15,130.0	
4.5.	Բարձրացնել բիզնես համայնքի իրազեկվածության մակարդակը իրենց իրավունքների արդյունավետ միջոցների պաշտպանության և հակակոռուպցիոն մեխանիզմների վերաբերյալ	ԱՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	4,500.0	-	-	1,500.0	1,500.0	1,500.0	
4.6.	Կատարելագործել ԿԿՀ-ի գործիքակազմը մասնավոր ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում	ԱՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-	
4.7.	Ներդնել իրական շահառուների բացահայտման ինստիտուտի արդյունավետությունը ապահովող մեխանիզմներ	ԱՆ ԻԱՊՈ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	6,575.0	-	2,187.5	2,187.5	-	2,200.0	
4.8.	Արդիականացնել և կատարելագործել իրավաբանական անձանց	ԱՆ ԻԱՊՈ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-	

	պետական ռեզիստրի և իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգը և կարգավորումները		վորում չի պահանջվում						
4.9.	Բարձրացնել հարկային վարչարարության արդյունավետությունը, կատարելագործել սովերային տնտեսության դեմ պայքարի գործիքակազմը և մեղմացնել բիզնես-հարկային մարմին փոխհարաբերություններում սուբյեկտիվիզմը ու կոռուպցիոն ռիսկերը	ՀՀ ՊԵԿ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
4.10.	Կատարելագործել հանրային գնումների ոլորտում շահերի բախման և հակակոռուպցիոն կառուցակարգերը	ՖՆ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
4.11.	Կատարելագործել մրցակցության ոլորտի իրավախախտումները վերհանող համակարգչային ապահովման սքրինինգային ծրագրերը, մշակել այդ գործիքների կիրառման ուղեցույցներ	ՏՄՊՊՀ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	26,945.0	1,875.0	1,875.0	20,000.0	3,195.0	-
4.12.	Արդիականացնել և կատարելագործել գնումների պլանավորման համակարգը	ՖՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	10,000.0	-	5,000.0	5,000.0	-	-
4.13.	Շարունակաբար կատարելագործել հանրային գնումների գործընթացների թափանցիկության և հրապարակայնության համակարգերը	ՖՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	6,250.0	-	3,125.0	3,125.0	-	-
4.14.	Կատարելագործել և բարելավել հանրային գնումների ոլորտում հաշվետվողականության կառուցակարգերը՝ հանրության և մասնավոր ոլորտի շրջանում գնումների գործընթացի վերաբերյալ վստահության բարձրացման և ամրապնդման ուղղությամբ	ՖՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	11,500.0	-	-	3,833.3	3,833.3	3,833.3
4.15.	Կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման արդյունավետության բարձրացման նպատակով շարունակաբար զարգացնել և	ԱՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	3,890.0	-	-	2,130.0	880.0	880.0

	կատարելագործել ինստիտուցիոնալ կառուցակարգերը և մեխանիզմները								
<b>5. ՀԱԿԱԿՈՒՌՊՑԻՈՆ ՄՈՆԻԹՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ</b>									
5.1.	Գործարկել հակակո- ռուպցիոն մոնիթորինգի և գնահատման էլեկտրո- նային հարթակ	ԱՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	18,750.0	-	3,750.0	15,000.0	-	-
5.2.	Բարելավել մոնիթորինգի և գնահատման իրականաց- ման ընթացակարգը	ԱՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	4,375.0	-	4,375.0	-	-	-
5.3.	Վերանայել Հակակո- ռուպցիոն քաղաքակա- նության խորհրդի գործունեությանն առնչվող կարգավորումները և ներառականության շրջանակը	ԱՆ	Լրացուցիչ ֆինանսա- վորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
5.4.	Սահմանել կոռուպցիայի դեմ պայքարի, ներառյալ՝ հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցում- ների իրականացման կառուցակարգերը և ապահովել դրանց իրագործումը	ԱՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	16,740.0	-	3,750.0	-	6,495.0	6,495.0
5.5.	Զարգացնել Հակակո- ռուպցիոն ծրագրերի պատասխանատուների կարողությունները՝ վերապատրաստումների իրականացման և ուղեցույցների մշակման եղանակներով	ԱՆ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	4,265.0	3,125.0	570.0	570.0	-	-
5.6.	Դոնորների բնականոն աշխատանքների համակարգման մեխանիզմի ապահովում	ԱՆ	Լրացուցիչ ֆինանսա- վորում չի պահանջվում	-	-	-	-	-	-
			<b>Ընդամենը</b>	<b>3,714,557.9</b>	<b>15,312.5</b>	<b>1,675,855.0</b>	<b>1,714,339.8</b>	<b>173,501.7</b>	<b>135,548.9</b>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ